ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎՐՑՅԱՆ

ՀԱՄՇԵՆԸ ԵՒ ՀԱՄՇԵՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Արդի հիմնախնդիրները

Երեւան 2016

9(47·925)
Հ-33
h2

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԵՄՏԱՀԱՅՈՑ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎՐՑՅԱՆ

ՀԱՄՇԵՆԸ ԵՒ ՀԱՄՇԵՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Արդի հիմնախնդիրները

5801

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

ԵՐԵՒԱՆ 2016

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ

Աշխատանքը կատարվել է Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում:

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների թեկնածու **Մ. Անումյան**

Հայկազուն Ալվրցյան
Համշենը և համշենահայությունը. Արդի հիմնախնդիրները: - Եր.: Էդիթ Պրինտ, 2016-152 էջ:

Գրքում ներկայացվում են Համշենի եւ համշենահայության համառոտ պատմությունը եւ արդի հիմնախնդիրները, որոնք կարող են հետաքրքրել ինչպես մասնագետներին, այնպես էլ ընթերցողների լայն շրջանակի:

ISBN 978-9939-75-112-2

© Հ. Ալվրցյան, 2016
© Էդիթ Պրինտ, 2016

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համամաշեն կամ Համշեն գավառի հայությունը պատմական ճակատագրի բերումով նախ՝ սփռվեց Սեւ ծովի հարավային ափերին (բյուզանդական, ապա՝ օսմանյան), այնուհետեւ՝ 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած, եւ հատկապես Հայոց ցեղասպանությունից հետո՝ նաեւ հյուսիսարեւելյան (ռուսական) ափերին: Համշենահայության պատմությունը, լինելով հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասը, սերտորեն առնչվում է նաեւ հարեւան այլ ժողովուրդների պատմությունների հետ ոչ միայն այն առումով, որ բնորոշ է հարևան ժողովուրդներին՝ պատմական փոխհարաբերությունների համատեքստում, այլեւ այն տեսակետից, որ համշենահայության մի հատվածը բռնի կրոնափոխվեց հենց հարեւան ժողովրդի կողմից՝ կրելով այս երեւույթի բոլոր հետեւանքները:

Ազգային պետականության բացակայության պայմաններում ինքնության հիմնական ցուցիչ համարվող կրոնից, դավանանքից ու եկեղեցուց բռնի հեռացումը դարերի ընթացքում ավերիչ հետեւանքներ ունեցավ հայ ժողովրդի այս հատվածի վրա: Իսլամացված հատվածը ոչ միայն հեռացավ իր եկեղեցուց, այլեւ աստիճանաբար կորցրեց լեզուն, մշակույթի, սովորույթների եւ ավանդույթների հիմնական մասը: Պարտադրվող նոր՝ իսլամական ինքնությունը նաեւ իր մեջ մեկ այլ աղետ էր պարունակում. նրանք ստիպված էին ոչ միայն համակերպվել եւ գաղտնի կամ բացահայտ կերպով ապրել նոր ինքնությամբ, խոսել իրենց համար օտար եւ երբեմնի թշնամու լեզվով, այլեւ, հաչս իշխանությունների, նոր կրոնի սպասավորների, նոր հա-

ռեաններին՝ օտարանալ, հրաժարվել իրենց երբեմնի ազգակիցներից՝ տարբեր ճանապարհներով իսլամացումից փրկվածներից: Սա՝ լավագույն դեպքում, քանի որ շատերը նաեւ թշնամանքով էին լցվում նրանց նկատմամբ: Երեւույթը հոգեբանորեն հասկանալի եւ բացատրելի է. կրոնափոխվածներն այս կերպ փորձում էին կամ վերջնականապես խզել կապն անցյալի հետ՝ իրենց սերունդների համար առավել տանելի պայմաններ ստեղծելու համար, կամ երբեմնի ազգակիցների հետ թշնամանք բորբոքելով՝ արդարացնել իրենց վարքագիծն այն հիմնավորմամբ, թե քրիստոնյաներն էլ իրենց նկատմամբ են թշնամաբար տրամադրված:

Մի հատված էլ փորձում էր ամբողջությամբ կրոնին տրվելու միջոցով հեռանալ հալածող երկվությունից: Սրանցից ձեւավորվեց կրոնական մոլեռանդների մի ստվար զանգված, որի միջից դուրս եկան բազմաթիվ ազդեցիկ կրոնական եւ պետական գործիչներ ու քարոզիչներ: Այս հատվածի մեջ որքան մեծ էր անցյալը մոռանալու ձգտումը, նունքան մեծ էր նոր կրոնին ծառայելու եւ այս ասպարեզում նշանավորվելու մղումը: Սա ինքնապաշտպանության մի տեսակ է, որի մեջ ինքնախաբեության տեսակարար կշիռն ավելի մեծ է, քան դիմացինին խաբելու, համոզելու կամ ապացուցելու հնարավորությունը, թե ինքն էլ նրա նման մեկն է:

Ժամանակը ցույց տվեց, որ ոչ միայն բռնի, այլեւ կամավոր կերպով կրոնափոխվածները երբեք՝ ո՛չ Օսմանյան կայսրությունում, ո՛չ էլ, առավել եւս Թուրքիայի Հանրապետությունում, որպես հավասարներ չեն ընդունվում. թուրք-իսլամական հանրության մեջ նրանք միշտ եղել են եւ են «դյոնմե»[1] կամ «հայի սերմ»:

[1] Բառացի նշանակում է կրոնափոխ: Թուրքիայում այսպես են կոչում ոչ միայն իսլամաց(վ)ած քրիստոնյաներին, այլեւ՝ կրոնափոխ հրեաներին:

Համշենահայերի մի հատվածի իսլամացումից անցել է մոտ երեք դար: Մյուս հատվածը, որ անլուր զրկանքներ կրելով՝ փրկվեց կրոնափոխությունից եւ ապրեց որպես հայ եկեղեցու հետեւորդ, 1915-1923 թթ. Ցեղասպանության տարիներին հիմնականում կոտորվեց կամ մահացավ աքսորի ճանապարհին եւ Դեր Զորի անապատներում: Փրկվեցին շատ քչերը, որոնք ապաստան գտան հիմնականում Ռուսական կայսրության հարավային շրջաններում՝ Եկատերինոդարի (այժմ՝ Կրասնոդար) երկրամասում եւ Աբխազիայում: Այդ տարիներին եղան նաեւ «կամավոր» իսլամացողներ[2]:

Իսլամացված հատվածի հիմնական մասը բնակվում է պատմական հայրենիքում՝ Թուրքիայի ծովափնյա Արդվինի, Ռիզեի, Տրապիզոնի, Կիրասոնի, Օրդուի, Սամսունի, սրանց հարակից Գյումուշհանեի, Բայբուրդի, Էրզրումի նահանգներում: Բազմաթիվ համշենցիներ սփռվել են Թուրքիայի տարբեր նահանգներում: Նրանց թիվը մեծ է Ստամբուլում, Անկարայում, Ադանայում, Սպերում եւ այլն: Նրանք ստվար զանգվածով բնակվում են արտասահմանյան երկրներից հատկապես Գեր-

[2] Հայերի «կամավոր» կրոնափոխության հանգանամքի վրա լույս է սփռում Անգլիայի հյուպատոս Ֆիցմորիսի հետեւյալ զեկույցը. «Մահմեդականները՝ կացինները ձեռքներին, քրիստոնյաներին չեն հարկադրել ընտրություն կատարել իսլամի և մահվան միջև: Նրանք միայն ցույց են տվել և ապացուցել բոլոր քրիստոնյաներին սպանելու իրենց վճռականությունը: Եւ վերջիններս էլ իսլամ են ընդունել՝ իրենց կյանքը փրկելու համար: Դա օբյեկտի և սուբյեկտի միջև նուրբ տրամաբանական տարբերակում է: Մահմեդականների կողմից ներկայացված երկընտրանքը իսլամ կամ մահը չէր, այնինչ քրիստոնյաների համար մահվան միակ այլընտրանքն իսլամն էր»: Տե՛ս Ֆիցմորիսի՝ 1896 թ. մարտի 5-ին Բիրեջիքից ուղարկած զեկույցը. Great Britain, Foreign Office, Blue Book, *Turkey, 1896, No. 5*, էջ 3:

մանիայում: Համայնքներ ունեն Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, միջինասիական երկրներում եւ այլն:

Համշենահայերի այս երկու խոշոր հատվածների մասին (իսլամացվածներն իրենց անվանում են **հեմշիլ**, թուրքերենից թարգմանվում է **համշենցի**) այսօր քիչ բան գիտեն ոչ միայն հիմնական շահագրգիռ կողմերը՝ հայերն ու թուրքերը, այլեւ հենց իրենք՝ համշենցիները: Այս աշխատանքի նպատակն է ի մի բերել եւ ամփոփ կերպով ընթերցողին ներկայացնել նրանց պատմության կարեւորագույն դրվագները, որոնք ընդհանուր ծանոթություն կտան հայ ժողովրդի այս հատվածի բարդ ու հակասական, սակայն միեւնույն ժամանակ՝ հերոսական, իսկ հաճախ էլ՝ ողբերգական պատմության մասին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Համշենի իշխանության ձեւավորումն ու վերելքը

Հայերը Պոնտոսում մինչեւ 8-րդ դարը

Համշենի իշխանության եւ համշենահայոց պատմության մասին խոսելուց առաջ նախ հարկավոր է անդրադառնալ հնագույն ժամանակներից ի վեր Պոնտոսում հայերի ներկայության փաստին, քանզի այստեղ բնակվող հայկական տարրի հետագա տարածումն ու հզորացումն ստեղծեցին տնտեսական, քաղաքական եւ մշակութային այն նախադրյալները, որոնք հիմք հանդիսացան Համշենի իշխանության ձեւավորման ու կայացման համար:

Պատմական եւ հնագիտական մի շարք վկայություններ փաստում են, որ Սեւ ծովի հարավարեւելյան ափերին հայկական տարրը հաստատվել է դեռեւս հայ ժողովրդի ձեւավորման վաղնջական շրջանում: Որեւէ տարածքում ժողովրդի բնիկության մասին սովորաբար լավագույնս վկայում են տվյալ ժողովրդի առասպելները: Եւ ճիշտ է նկատել Ս. Վարդանյանը[3], որ հայոց նախնիներից Անգեղա Տորքը իր երկիրը թշնամական

[3] Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը եւ երգարվեստը, (նյութեր եւ ուսումնասիրություններ), Երեւան, 2009, էջ 17:

նավերից պաշտպանում է Պոնտոսում, եւ բերում է դրա մասին պատմահայր Խորենացու վկայությունը., «Պոնտոս ծովի ափին պատահել է թշնամիների նավերի եւ վրա է հարձակվել, նրանք հեռացել են խոր ծովը մոտ ութ ասպարեզ: Չկարողանալով նրանց հասնել, ասում են, վերցնում է բլրաձև ժայռեր եւ շպրտում է նրանց հետևից: Ջրերի ալեկոծվելուց ոչ սակավ նավեր ընկղմվում են, եւ ջրերի պատառումից առաջացած ալիքները մնացած նավերը շատ մղոններ հեռու են քշում»[4]: Սակայն չենք կարող պնդել, թե այդ հայաբնակ շրջանները նախապես առաջին հայկական պետական կազմավորումների մաս են կազմել: Համենայն դեպս պատմագիտության այսօրվա տվյալները փաստում են, որ տվյալ շրջանները եղել են հայոց թագավորների հետաքրքրությունների սահմաններում:

Այս առումով հատկապես ուշագրավ է հայոց (Հայասայի) արքա Աննիայի արշավանքը Վերին երկիր[5]: Դա տեղի է ունեցել Ք.ա 14-րդ դարի երկրորդ կեսին՝ 1337թ., երբ Հայաստանը (Հայասա) խեթերի թագավոր Մուրսիլ Բ-ի (Ք.ա. 1345 -1320 թթ.) հետ լուրջ ռազմաքաղաքական բախումների մեջ էր՝ վերջինիս աշխարհակալական նվաճումների դեմն առնելու եւ Հայասայի աշխարհաքաղաքական դիրքերն ամրապնդելու նպատակով: Եթե ընդունենք, որ Վերին երկիրը գտնվում է Փոքր Հայքում, ինչպես նշվում է խեթական տեքստերում, ուրեմն այս արշավանքը կարելի է դիտել դեպի Սեւ ծով ընդարձակվելու համատեքստում, քանի որ Փոքր Հայքի տարածքն այդ ժամանակաշրջանում սահմանակից էր կասկերի (կաշկ) ծովափնյա երկրին. «Կասկերի (կամ կաշկա) ցեղախումբը մ.թ.ա. 2-րդ հազարամյակում բնակեցնում էր Հյուսիսարեւելյան Փոքր Ասիան եւ

[4] Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 138–139
[5] Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով, Դ, Քննական պատմություն Հայոց, Երևան, 2009, էջ 64:

հարավային Մերձսեւծովյան մարզը (Պոնտոս)՝ սկսած Հալիս գետից (Կըզըլ Ըրմակ), կամ ավելի արեւմուտքից, մինչեւ Վերին Եփրատ, ներկայիս Երզնկայից արեւմուտք, ներառյալ Իրիս (Իեշիլ Ըրմակ) եւ Լիկոս (Գայլ – գետ, Գելգիտ) գետերի հովիտները»[6]:

Ն. Ադոնցը նշում է, որ թեեւ ընդունված է այն տեսակետը, թե Վերին երկիրը խեթական արձանագրություններում հիշատակվող այն երկիրն է, որը գտնվում է Փոքր Հայքում, սակայն ինքն այս փաստը կասկածելի է համարում, քանի որ հավանական չի համարում, թե Աշշուրի արքա «Շամշի – Ադդադ I – ը իր զորքն ու զենքը հասցրած լինի այնքան հեռու գտնվող Փոքր Հայք»[7]: Հենվելով զուտ այս կասկածի վրա՝ Ն. Ադոնցն առաջարկում է այլ տարբերակ, համաձայն որի՝ Վերին երկիրը գտնվում է Էլամի կամ Ամանոսի երկրում[8]:

Ն. Ադոնցի հայտնած կասկածից բացի՝ այլ հիմք չկա պնդելու, թե Վերին երկիրը Փոքր Հայքում չի գտնվել: Այս հարցի պարզաբանումը կարեւոր է այն տեսակետից, որ տեղեկություն է տալիս հայոց թագավորների՝ Սեւ ծովի ափեր դուրս գալու առաջին փորձերի մասին: Ի վերջո հայերով բնակեցված Փոքր Հայքը, բացի այն, որ սահմանակից էր կասկերի ծովափնյա երկրին, տարբեր ժամանակաշրջաններում կարողացել է իր սահմանները հասցնել մինչեւ Սեւ ծովի ափերը:

Մեզ հասած տվյալներով՝ Սեւ ծովի ափ դուրս գալու հաջորդ փորձերը տեղի են ունեցել մի քանի դար անց՝ Ք. ա. 9 - 8-րդ դարերում: Սա Վանի հայոց թագավորության ռազմաքաղաքական ազդեցության մեծացման անխուսափելի հետեւանք էր,

[6] Հայ ժողովրդի պատմություն, հ.1, Երևան, 1971, էջ 149: Նաև՝ Նիկողայոս Ադոնց, նշվ. աշխ., էջ 62:
[7] Նիկողայոս Ադոնց, նշվ. աշխ., էջ 47:
[8] Նույն տեղում, էջ 47-48:

քանի որ թե ռազմական, թե առեւտրատնտեսական հզորացման տեսակետից ծովն ունի մեծ հնարավորություններ:

Այս շրջանում հայոց թագավորների՝ դեպի Սեւ ծով ձգտումները նշանավորվեցին մի քանի արշավանքներով[9]:

Նախ՝ Մենուա արքան (Ք.ա 810–786 թթ.) գրավեց դեպի ծով ճանապարհի հիմնական արգելք Տեյավեխեն (ապագա Մեծ Հայքի Տայք նահանգը), որի մասին պատմվում է Կարինի ժայռափոր արձանագրության մեջ. «Մինուան ասում է. – Գրավեցի Տեյավեխե երկիրը: Շաշիլու[10] քաղաքն արքայական գրավեցի կռվում, երկիրը այրեցի, ամրոցները քանդեցի... Ուտուպուրշե արքան Տեյավեխե (երկիր) ելավ առաջս, բռնեց (= գրկեց) ոտքեր(ս), երկրպագում էր փորի(?) վրա ընկած: Գցեցի հարկի տակ: Տվեց ոսկի (եւ) արծաթ, տվեց հարկ: Ինչքան փախստական իր կողմը կար, վերադարձրեց ամբողջությամբ»[11]: Խիստ ուշագրավ է վերջին նախադասությունը, որը խոսում է այն մասին, որ Վանի հայկական թագավորությունից տարբեր պատճառներով մարդիկ փախել եւ ապաստան են գտել հարեւան Տայքում. դրանց թիվը հավանաբար բավականին մեծ է եղել, այլապես արձանագրության մեջ չէր հիշատակվի: Տայքը սահմանակից էր ծովափնյա շրջաններին, ուստի չի բացառվում, որ բազմաթիվ հայեր այս ճանապարհով են հաստատվել Սեւ ծովի ափամերձ շրջաններում:

Մենուայի որդի Արգիշթի Ա-ն (Ք.ա.786–764թթ.) մեկ տարում Տայքի վրա հարձակվում է երեք անգամ. «Այդ նույն տա-

[9] Վանի թագավոր Մենուան (մ.թ.ա. 810–786թթ.) կատարել է առաջին նվաճումն այդ ուղղությամբ՝ գրավելով Տայքը: Նրա որդի Արգիշտի Առաջինը (մ.թ.ա.786–764թթ.) երեք անգամ արշավել ու հնազանդեցրել է Տայքը, ինչը խոսում է տայեցիների անհնազանդության ու ազատասիրության մասին:

[10] Տեյավեխե երկրի մայրաքաղաքը:

[11] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981, էջ 48:

ում երրորդ անգամ զինվորներ գնդեցի, արշավեցի Տեյավեխե ցեղի վրա»[12]: Ակնհայտ է, որ Արգիշթի Ա-ն հեշտությամբ չի հպատակեցրել ազատասեր տայեցիներին:

Սեւ ծովի ափ դուրս գալու երկարատեւ պայքարը հաղթական ավարտի է հասցնում Արգիշթի Ա-ի որդի Սարդուր Բ-ն (Ք.ա.764–735թթ.), ում երկրորդ արշավանքն ավարտվում է ծովափնյա հանրահայտ Կուլխիդա երկրի նվաճումով. «Սարդուրեն ասում է. - Արշավեցի Կուլխա (երկրի) վրա: Երկիրը գրավեցի, Իլդամուշա քաղաքն արքայական Միշա արքայի՝ Կուլխախալյան (երկրի), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի: Մարդկանց այրեցի: Բերդակալ ոմն?(Կուլխա (երկրի), (որ) այնտեղ էր, սպանեցի: Կնիք երկաթյա սարքեցի, արձանագրություն Իլդամուշա (քաղաքում) դրեցի, ամրոցները, քաղաքները այրեցի, ավերեցի, երկիրը կերա (յուրացրի), մարդ, կին քշեցի»[13]:

Դատելով այն բանից, որ Մենուայի հաջորդներն անշեղորեն շարունակել ու տրամաբանական ավարտի են հասցրել այս քաղաքականությունը, կարելի է եզրակացնել, որ պետության համար այն եղել է կարեւորագույն խնդիր:

Եվ այսպես՝ մի քանի տասնամյակ տեւած պայքարից հետո՝ Ք.ա 8-րդ դարի կեսերին, հայոց թագավորները հաստատվում են Սեւ ծովի ափին: Հայերի ռազմաքաղաքական ու տնտեսական ազդեցությունն աստիճանաբար մեծանում եւ տարածվում է նաեւ ծովափնյա այլ շրջաններում, որի հետեւանքով ընդարձակվում են Հայաստանին ենթակա տարածքների սահմանները:

Հայերի ռազմաքաղաքական ազդեցությունը կտրուկ մեծանում է Ք.ա. 6-րդ դարում, երբ Կյուրոսը կործանեց մարերի թագավորությունը: Դրա հետեւանքով ոչ միայն մարերի երկիրը

[12] Նույն տեղում, էջ 58:

[13] Նույն տեղում, էջ 77:

միացվեց Հայաստանին, այլեւ նրա ազդեցությունը մեծացավ Սեւ ծովի ափին, որը ռազմական, տնտեսական եւ առեւտրային կարեւոր նշանակություն ուներ:

553թ. Պարսքի թագավոր Կյուրոսն ապստամբեց հզոր Մարաստանի դեմ եւ երեքամյա պայքարից հետո նրան պարտության մատնեց: Նա հիմնեց ժամանակի հզորագույն պետություններից մեկը՝ Աքեմենյան Պարսկաստանը: Որոշ ժամանակ անց Կյուրոսը նվաճում է Եգիպտոսի եւ Բաբելոնի հետ իր դեմ դաշնակցած Լիդիան, այնուհետեւ մտնում է Հայաստան եւ նրա ծովափնյա շրջաններից նվաճած որոշ տարածքներ միացնելով Լիդիային՝ ստեղծում է Կապադովկյան սատրապությունը[14]: Աքեմենյան Պարսկաստանի հիմնադրումով սկսվում է մի երկարատեւ դիմակայություն սրա եւ Հայաստանի միջեւ: Պարսկաստանը, բնականաբար, ամեն ինչ անում էր Հայաստանը թուլացնելու համար, ուստի եւ ծավափնյա կարեւորագույն շրջանները Հայաստանից խլելը պետք է դիտարկվի այս համատեքստում: Կյուրոսին հաջողվում է Հայաստանին գցել կախման մեջ. հայ թագավորները նրան տուրք էին վճարում եւ զորքով մասնակցում նրա արշավանքներին[15]:

Հայաստանի՝ ծովափնյա երկիր լինելու վերաբերյալ տեղեկություններ տալիս է նաեւ Հերոդոտոսը: Երբ Դարեհը Աքեմենյան կայսրությունը բաժանեց նահանգների, Հայաստանը մասնատեց երկու նահանգների միջեւ՝ 13-րդ եւ 18-րդ: Հերոդոտոսի տեղեկության համաձայն՝ Հայաստանի ծովափնյա տարածքները մտնում էին 13-րդ նահանգի մեջ. «Պակտյուիկեից, արմեններից եւ հարեւաններից մինչեւ Եւքսինյան ծովը ստացվում էր չորս հարյուր տաղանդ, սա տասներեքերորդ նահանգն

[14] Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երեւան, 1971, էջ 445:
[15] Նույն տեղում, էջ 447:

էր»[16]: Հերոդոտոսը նույն մանրամասն տեղեկություններն է հաղորդում նաեւ Հայաստանի մոտ եւ հեռավոր հարեւանների մասին, որոնք Հակոբոս Տաշյանին հիմք են տալիս եզրակացնելու, որ «Հայ ցեղն հնուց իսկ անհրաժեշտաբար աղերս ունենալու էր Հայաստանի սահմաններէն քիչ մը հեռու Սեւ ծովու ափանց հետ: Արդ ճշդիւ այն ծովափը, ուր կը գտնուի հայ Համշէն, կը վերաբերեր Հայաստանի նոյն իսկ երբ ասի պատմութեան մէջ կ'երեւայ առաջին անգամ Armenia ձեւով: Դարեհի օրով Հայաստան բաժնուած էր 10 երկու սատրապութեանց: Թողլով անոնց արեւելեանը (ԺԸ սատրապութիւն), ուր կը բնակուին Ալարոդիք եւ սասպերք՝ մինչեւ Կողքիս (Հերոդ. Գ, 94, Դ, 37 եւն), ուստի մինչեւ արդի Բաթումի մօտերը, այն ժամանակի արեւմտեան Հայաստանը (ԺԳ սատրապութիւն կամ Հարկաց շրջան) «հայոց եւ դրացեաց» կը հասներ մինչեւ Սեւ ծով (Հերոդ. Գ, 93)»[17]:

Հայոց պետության սահմաններում ծովափնյա տարածքների առեւտրատնտեսական դերակատարությունն ավելի էր մեծանում: Այստեղ կարեւոր է նշել, որ հսկայածավալ եւ հզոր Պարսկաստանի կայսրության կազմում ետին պլան են մղվում նաեւ Մեծ ու Փոքր Հայքերի միջեւ բնական եւ արհեստական խոչընդոտները, որպիսիք, ինչպես երեւում է, եղել են, ամրապնդվում են տնտեսական հարաբերությունները, իսկ ռազմաքաղաքական վիճակը կայունանում է: Ահա թե այդ մասին ինչ է գրում հին աշխարհի մյուս մեծ հույնը՝ պատմաբան եւ աշխարհագրագետ Ստրաբոնը. «Փառնակիայի (արդի Գիրեսուն նավահանգստային քաղաքը Թուրքիայում՝ Տրապիզոնից արեւմուտք – Հ.Ա.)

[16] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքերից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երեւան, 1986, Գ–93, էջ:
[17] Հ. Յակոբոս Վ. Տաշեան, Հայ բնակչութիւնը Սեւ ծովեն մինչեւ Կարին, պատմական–ազգագրական հարեւանցի ակնարկ մը, Վիեննա, 1921, էջ 9-10:

եւ Տրապեզունտի գավառներից վերեւ մինչեւ Փոքր Հայք Տիբարեններն են եւ Խալդայները: Փոքր Հայքը բավական բարեբեր երկիր է: Այն եւս, ինչպես Սոփենեն, միշտ կառավարել են իշխանները, որոնք մերթ եղել են մյուս հայոց բարեկամ (Մեծ Հայքի – Հ.Ա.), մերթ էլ իրենց գործերը վարել են ինքնուրույն: Նրանց հպատակվել էին Խալդայներն ու Տիբարենները. այնպես որ իրենց իշխանությունը տարածել էին մինչեւ Տրապեզունտ եւ Փառնակիա: Իսկ Միհրդատ Եւպատորը ուժեղանալով, դարձավ տերը Կոլխիսի եւ այս բոլոր (երկրների), որոնց Սիսիդի որդի Անտիպատրոսը հանձնեց նրան»[18]: Այսինքն՝ Փոքր Հայքի իշխանությունը միչեւ Ք.ա. 112 թ. տարածվում էր Սեւ ծովի հսկայածավալ տարածքների վրա: Սակայն գահի կորուստը պատճառ չէր, որ հայ տարրը շարունակեր ամրապնդվել այդ բարեբեր եւ բոլոր առումներով նպաստավոր տարածքներում (նավահանգիստներ, առեւտրային ուղիներ եւ այլ):

Հետագա բոլոր դարերում էլ հայ տարրը, անկախ այն հանգամանքից՝ Սեւ ծովի ափին ունեցել է քաղաքական իշխանություն, թե ոչ, տարածաշրջանի տնտեսական կյանքում եղել է հիմնական եւ ազդեցիկ ուժ, այնքան ազդեցիկ, որ Տրապիզոն նավահանգիստը օտարները կոչել են հայկական. «Արմենիայի սեւծովյան նավահանգիստը Տրապիզոնն է»[19]:

Հաջորդ հզոր կայսրությունը Հռոմն էր, որը տարածաշրջանի քարտեզի մեջ կատարեց մեծ փոփոխություններ: Այս շրջանում հայերի՝ դեպի Սեւ ծով արեւելումների մեջ լուրջ տեղաշարժեր չեղան, սակայն Ք.ա. առաջին դարի 90-60-ական թվականներին Տիգրան Մեծի եւ Միհրդատ Եվպատորի անձնական-ընտանեկան կապերը նպաստեցին բարեկամական

[18] Ստրաբոն, Աշխարհագրություն, XII, 3:

[19] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, Երևան, 1964, էջ 199–200:

հարաբերությունների պահպանմանն ու զարգացմանը: Հայերի դերակատարությունն այդ տարածաշրջանում հիմնականում իրականանում էր Փոքր Հայքի հայության միջոցով: Հատկանշական է, որ Միհրդատ Զ-ի բանակի կազմում 10000-անոց հայկական զորագնդի ղեկավարությունը հայ զորավարների ձեռքում էր: Այդ շրջանում էր, որ Տիգրան Մեծի եւ Միհրդատ Զ-ի ռազմաքաղաքական դաշինքը պարտության մատնեց հռոմեացի զորավար Լուկուլլոսին:

Հռոմի քաղաքական ժառանգորդ Բյուզանդիայի օրոք կատարվեցին մի շարք կարեւոր վարչաքաղաքական փոփոխություններ: 536թ. Հուստինիանոս կայսրը հրատարակում է իր 31–րդ նովելլան, որով Բյուզանդական Հայաստանը ենթարկվում է նոր բաժանման. «...մենք որոշեցինք կազմել չորս Հայք. Ներքին, որի մայրաքաղաքն իր գեղեցկությամբ փայլում է արդեն մեր բարեպաշտ անունով, իսկ առաջ կոչվում էր Վազան կամ Լեոնտուպոլիս: Մենք շնորհեցինք նրան պրոկոնսուլություն եւ կառավարիչ նշանակեցինք Ակակիոս սքանչելուն (ազգությամբ հայ - Հ. Ա.): ... Մենք հատկացնում ենք նրան հետեւյալ քաղաքները՝ Թեոդոսուպոլիսը, որ առաջ էլ նրան էր պատկանում, Սատաղը, Նիկոպոլիսը, Կողոնիան՝ վերցնելով դրանք այսպես կոչված Առաջին Հայքից, ինչպես նաեւ Տրապիզոնը եւ Կերասունը, որ մտնում էին նախկին Պողեմոնյան Պոնտոսի մեջ»[20]:

Ա. Մելքոնյանը, անդրադառնալով Սեւ ծովի ափերին ապրող հայ բնակչության խնդրին, գրում է, որ «Իրականում Խաղտիքը, հաճախ մաս կազմելով Տայք աշխարհին, հնագույն ժամանակներից եղել է հայաբնակ: Պատահական չէ, որ այստեղ ապրող առաջին բնակիչներին յոյներն անուանել են արմենոխալիբներ, այսինքն՝ Խաղտիք-Խալիբ երկրի հայ բնակիչներ

[20] Նիկողայոս Ադոնց, նշվ. աշխ., էջ 190:

Ի դէպ՝ նման հայերը կազմել են ոչ միայն Խաղտիքի, այլեւ ողջ Տայքի ու Հյուսիսարեւմտեան Հայաստանի բնակչութիւնը Ք.ա. 9-3-րդ դարերում՝ Արարատեան թագաւորութեան եւ Երուանդականների ժամանակներում»[21]:

Պետք է ենթադրել, որ պոնտահայության թիվն ավելանում էր հետագա դարերում քաղաքական եւ տնտեսական ճնշումների հետեւանքով Հայաստանի տարբեր գավառներից արտագաղթածների հաշվին: Սա նաեւ ապացույց է այն բանի, որ Մեծ թե Փոքր Հայքերի բոլոր նահանգներում լավատեղյակ էին Պոնտոսի հայության պայմաններին եւ հայերի նկատմամբ Բյուզանդական կայսրության բարյացակամ վերաբերմունքին: Այլապես Ամատունյաց տան նախարարները չէին համարձակվի կազմակերպել նման մեծաթիվ արտագաղթ՝ սեփական ժողովրդին տանելով անհայտություն:

8-րդ դարի մեծ արտագաղթը Հայաստանից դեպի Պոնտոս. Համշենի իշխանության ստեղծումը Բյուզանդական կայսրության կազմում:

Արաբների բարձրացող Խալիֆայությունը 640 թ. եւ 642-643 թթ. փորձեց նվաճել Հայաստանը, սակայն՝ ապարդյուն: Թեեւ նրանց երրորդ հարձակումն էլ ավարտվեց պարտությամբ, բայց ակնհայտ էր, որ օրեցօր հզորացող եւ ծավալվող կայսրությանը երկար դիմադրել չի հաջողվի, ուստի Հայաստանի առաջնորդ Թեոդորոս Ռշտունին 652 թ. Խալիֆայության հետ կնքում է պայմանագիր՝ ընդունելով նրա գերիշխանությունը: Թեեւ այս պայմանագրով Հայաստանը գործնականում պահպանեց իր անկախությունը, սակայն 701թ. արաբներին հաջողվում է գրավել Հայաստանը: Նվաճված այլ տարածքները (Վիրքը և Աղվանքը՝ մինչև Դերբենդ) միավորելով Հայաստանի հետ՝ նրանք ստեղծում են մեկ մեծ վարչական միավոր՝ Արմինիա անունով:

Նվաճված երկրներում Խալիֆայությունը ստեղծում է հարկահանության ուժեղ եւ կազմակերպված համակարգ, որի դեմ հայ ժողովուրդն ըմբոստացել է բազմաթիվ անգամներ: Հարկահանության խիստ բնույթը պատկերացնելու համար բավական է նշել, որ արդեն 703 թ. արաբների դեմ հայոց իշխան Սմբատ Բագրատունու ղեկավարությամբ բարձրացվեց ապստամբություն: Նման մի ընդվզում էր 774-775 թթ. խոշոր ապստամբությունը, որից հետո արաբ կառավարիչներն անցան անանախադեպ ճնշումների եւ հալածանքների քաղաքականության: Ավելացվեցին հարկերը, իսկ հարկահավաքության համակարգն ավելի խստացրեցին: Սրա հետեւանքով աղքատացածներն ու ընչազուրկները փախչում էին հարեւան Բյուզանդական կայսրություն, իսկ ովքեր չէին կարողանում վճարել հարկերը կամ հեռանալ երկրից, տարվում էին Խալիֆայության մայրաքաղաք կամ այլ խոշոր քաղաքներ եւ վաճառվում ստրկության, որից հետո նաեւ հարկադրաբար կրոնափոխ էին լինում: Ի դեպ՝ արաբական տիրապետության շրջանում են գրանցվում հայերի բռնի իսլամացման առաջին դեպքերը:

Ճնշումները հատկապես ուժեղացան Հայաստանի ուստիկան հավատափոխ Օբայդուլլաի (Ովբեդլա) իբն-ալ-Մահդիի եւ նրա տեղապահ Սուլեյմանի կառավարման տարիներին, ընդ որում՝ այն աստիճանի, որ երկրից հեռանալ սկսեցին նաեւ նախարարական տների ներկայացուցիչներ: Նրանց վարած հարկային քաղաքականությունն ավելի շուտ նման էր թալանի ու

[21] Աշոտ Մելքոնեան, Համշէն. Պատմաաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր): Տե՛ս Համշէն եւ համշենահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան-Պեյրութ, 2007, էջ 30:

կողոպուտի: Հայերի արտագաղթը Սեւ ծովի ափեր նախ եւ առաջ պետք է բացատրել այն հանգամանքով, որ այս շրջաններում վաղուց անտի բնակվում էին հայեր, որոնք ունեին կազմակերպված ազգային կյանք:

8-րդ դարի վերջերին Հայաստանի Այրարատ նահանգի՝ Ամատունի նախարարական տանը պատկանող Արագածոտն եւ Կոտայք գավառներից Շապուհ Ամատունու եւ նրա որդի Համամի նախաձեռնությամբ եւ առաջնորդությամբ տեղի ունեցավ այդ ժամանակաշրջանի թերեւս ամենամեծ արտագաղթը: Նրանց միացան նաեւ այլ նախարարներ եւ պայազատներ: Այս մասին տեղեկություններ է հաղորդում 8-րդ դարի հայ պատմիչ Ղեւոնդը. «Ովբեդլայի գալու մյուս տարում նույն ծանր դժբախտությունները առավել եւս շատացան, քանզի դրանից հետո ոչ ոք իր ինչքի տերը չէր, այլ ամեն ինչ ավարի էին տանում: Շատերն ինքնակամ թողնում էին հոտերն ու նախիրները եւ փախստական էին դառնում, չկարողանալով աղետների ծանրությանը դիմանալ, իսկ թշնամիները քշում էին անասուններն ու ավարի տալիս ունեցվածքը:

Ապա, երբ այսպես ունեցվածքից զուրկ մնացին, մերկ, բոբիկ ու սովամահ, եւ իրենց ապրուստի միջոց չգտնելով, քաշվեցին փախստական գնացին Հունաց աշխարհը: Նրանց թիվը ասվում է, թե 12 հազարից ավելի էր, կանանցով ու մանուկներով հանդերձ, եւ նրանց առաջնորդներն էին Ամատունյաց տոհմից Շապուհը, նրա որդի Համամը եւ ուրիշներ Հայաստանի նախարարներից ու նրանց հեծյալներից»[22]:

Այս արտագաղթն, անշուշտ, Հայաստանի համար մեծ կորուստ էր թե տնտեսական, թե ժողովրդագրական, թե դիմադրա-

[22] Ղեւոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1982, էջ 132:

կան-պաշտպանական ուժի թուլացման տեսակետից, սակայն կառավարիչ Ովբեդլայի համար դա կորուստ էր մեծաթիվ հարկատուների, ուստի նա զորք է ուղարկում փախստականների հետեւից՝ նրանց վերադարձնելու հանձնարարականով. «Անօրեն չարաշուք թշնամին փախստականների ետեւից իր զորքով հետամուտ լինելով՝ հասավ Վրաց սահմանը՝ Կող գավառը: Ընդ որում մարտի մեջ մտնելով, փախուստի մատնվեց, եւ ոմանք սատակեցին, իսկ իրենք (փախստականները) անցան Ակամսիս գետը, որը, Տայքի կողմերից բխելով, գնում է հյուսիս-արեւմուտք, անցնելով Եգերաց երկիրը՝ մտնում է Պոնտոս:

Երբ գետն անցան, շուտափույթ իմաց տվեցին Հունաց Կոստանդին արքային: Սա իր մոտ կանչելով նրանց նախարարներին ու հեծյալներին՝ պատիվներ շնորհեց եւ մնացեալ խառնիճաղանջ ժողովրդին բնակեցրեց բարվոք ու արգավանդ երկրում: Սակայն ժողովրդի կեսը, որ մնաց (հայրենիքում), սաստիկ կարոտության պատճառով ստրկական ծառայության անձնատուր եղավ, փայտահատ ու ջրաբեր դարձավ...»[23]:

Փաստորեն Բյուզանդիայի կայսրը պահպանում է նախարարների կոչումները եւ նրանց հետ եկած ժողովրդին, որպես սեփականություն, հանձնում բարեբեր հողեր, որոնք պետք է դառնային ապագա իշխանության հիմքը: Հենվելով այն փաստի վրա, որ ժամանակակից Թուրքիայի Ռիզեի նահանգում՝ ծովափից մոտ 30 կմ դեպի հարավ՝ բարձրաբերձ ու խիտ անտառներով ծածկված բարեբեր տարածքներում են գտնվում ժամանակակից Հեմշին, Չամլըհեմշին եւ Բաշ Շեմշին բնակավայրերը, պետք է ենթադրել, որ հիմնականում այդ շրջանում էլ բնակեցվել են 12 հազար գաղթականները: Պատմական տեղեկություններն այն մասին, որ Համշենի իշխանությունը 9-10-րդ

[23] Նույն տեղում, էջ 132–133:

դարերում սահմանակից էր Բարձր Հայքի Սպեր գավառին, հաստատում են այս ենթադրությունը:

Ակադեմիկոս Լ. Խաչիկյանը, հենվելով այն իրողության վրա, որ պատմիչ Ղեւոնդն այս դեպքերի առիթով հիշատակում է Եսայի Եղիպատրուշցի կաթողիկոսին (775-788), Օբայդուլլահ ոստիկանին եւ նրա տեղապահ Սուլեյմանին (788-790), Բյուզանդիայի կայսր Կոստանդին VI-ին (780-799), եզրակացնում է, որ այս մեծ արտագաղթը եւ Համշենի իշխանության հիմնադրումը տեղի է ունեցել 789-790 թթ.[24]:

Այդ իշխանության սկզբնավորման մասին որոշ տեղեկություններ է հաղորդում մեկ այլ հայ պատմիչ՝ Հովհան Մամիկոնյանը, որոնց համաձայն՝ Կոստանդինը VI կայսրը հայ նախարարներին, հողերից բացի, նվիրում է նաեւ Տամբուր քաղաքը: Համամ Ամատունու մորեղբայր վրաց Վաշդեան իշխանը դավեր է նյութել Համամի դեմ, գործակցելով արաբների հետ՝ հարձակվել է Տամբուրի վրա եւ այն հրի մատնել. «Համամը, սակայն, հետո վերաշինեց քաղաքը եւ իր անունով կոչեց Համամաշեն»[25] (այստեղից էլ՝ Համշեն Հ.Ա.): Պատմության մեջ սա առաջին վկայությունն է Համշենի մասին:

Հավանական է, որ Վաշդեան իշխանը նախապես օժանդակել է Շապուհ Ամատունուն՝ իր քրոջ ամուսնուն, եւ զարմիկին՝ Համամին, արտագաղթը կազմակերպելու գործում՝ մտածելով, որ իր հարեւանությամբ ապրելու են անօգնական եւ իրեն պարտական գաղթականներ, ովքեր կարող էին իր իշխանության համար օժանդակ ուժի աղբյուր դառնալ: Սակայն, ինչպես երեւում է, վրաց իշխանի հաշվարկները սխալ են դուրս եկել. Կոստանդին կայսեր օժանդակությամբ հիմք է դրվում մի նոր իշխանության, որն ուներ ոչ միայն աշխատող եւ կազմակերպված բնակչություն[26], այլեւ՝ մարտունակ հեծյալներ, ինչպես նշում է Ղեւոնդ պատմիչը, որոնց շնորհիվ Համշենը վերածվում է ուժեղ եւ ինքնուրույն իշխանության: Ինչպես երեւում է Հովհան Մամիկոնյանի հայտնած տեղեկություններից, հետագայում Համամի եւ Վաշդեանի հարաբերությունները լարվում են: Համամը քեռուն մեղադրում է նենգության եւ դավաճանության մեջ, որին ի պատասխան Վաշդեանը, օժանդակ զորքեր ստանալով արաբներից, անցնում է Ճորոխ գետը եւ հարձակվում Տամբուրի վրա, այն գրավում է եւ հրի մատնում, իսկ Համամին ձերբակալում է եւ պատժում ձեռքերի եւ ոտքերի ծայրատումով[27]:

Անշուշտ Վաշդեանը չպետք է հանդուրժեր ուժեղ մի իշխանության ձեւավորումն իր սահմանների մոտ: Կարելի է ենթադրել, որ Տամբուրի վրա հարձակումն իրականացվել է Շապուհի եւ նրա կնոջ մահվանից հետո, քանզի նախ՝ Հովհան Մամիկոնյանը խոսում է միայն Համամի նկատմամբ գործադրված պատժի մասին, եւ ապա՝ Վաշդեանը թերեւս չհարձակվեր

[24] Լ. Խաչիկյան, Էջեր համշենահայ պատմությունից, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1969, N2, էջ 118–120:

[25] Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները՝ Վարդան Վարդանյանի, Երեւան, 1989, էջ 112:

[26] Անկազմակերպ ամբոխը ոչ միայն ի վիճակի չէր դուրս գալու այդ երկար ճանապարհորդությանը, այլև, որը խիստ ուշագրավ է, ճանապարհի գրեթե ավարտին արաբական հեծելազորի դեմ ճակատամարտել է և հաղթել: Ամեն ինչից երևում է, որ մենք գործ ունենք կազմակերպված և բավականաչափ ուժեղ մի հանրության հետ, որը, անգամ դավադրության զոհ դառնալուց հետո, կարճ ժամանակում կարողացել է հաղթել Վաշդեանին և վերակառուցել իշխանանիստ Տամբուր քաղաքը՝ ապագա Համամաշենը (Համշենը):

[27] Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները՝ Վարդան Վարդանյանի, Երեւան, 1989, էջ 112-113:

քրոջ իշխանության վրա (թեեւ սա նույնպես բացառված չէ):

Հետագա դարերում Համշենի իշխանությունը հզորանում եւ վերելք է ապրում: Հայաստանի տարբեր նահանգներից բազմաթիվ մարդիկ ապաստան են գտնում Համշենի իշխանությունում: Տեղեկություններ կան, որ համշենցիները, ինչպես նաեւ Ղրիմի հայերը, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում պոնտոսցիները, իրենց համարել են անեցիներ[28]: Սրա մեջ ճշմարտության մեծ չափաբաժին կա, քանի որ Անի մայրաքաղաքից բազմաթիվ հայեր, խուսափելով մոնղոլների հալածանքներից, 1239թ. ապաստան են գտել Տրապիզոնում: Ուղիղ մեկ դար անց՝ 1339թ., մեծ երկրաշարժի հետեւանքով Անիից եւ նրա շրջակա բնակավայրերից դարձյալ հազարավոր հայեր են տեղափոխվել Տրապիզոն:

Այլ վայրերից դեպի Համշեն մարդկանց հոսքին նպաստում էին նաեւ թշնամական բանակների համար դժվարամատչելի լեռները, անդնդախոր ձորերն ու կիրճերը, որոնք բնական ամրություններ էին: Ուշագրավ է, որ միջին դարերից սկսած մինչեւ մեր ժամանակները Համշենի բնության այս յուրահատկությունները հմայել են բոլոր ճանապարհորդներին, ովքեր հետաքրքիր եւ հիացական նկարագրություններ են թողել իրենց ուղեգրություններում[29]:

---

[28] Լ. Խաչիկյանն այս մասին գրում է «Համշենցի հայերը, ինչպես նաեւ տրապիզոնցիները, ղրիմցիները և նրանցից ծագած հայկական ուրիշ գաղթօջախների հին բնակչությունը ավանդաբար իրեն սերված է համարում Բագրատունյաց Հայաստանի նշանավոր կենտրոն Անի մայրաքաղաքից»: Տե՛ս էջեր համշենահայ պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի»:

[29] Տե՛ս, օրինակ, Հեթում պատմիչ թաթարաց, Վենետիկ, 1842: Ս.Հայկունի, Համշէն, տե՛ս «Արարատ»: 1895: Рюи Гонзалес де Клавихо, Дневник путешествия ко двору Тимура в Самарканд в 1403-1406 гг., перевод И. И. Срезневского, СПб. Թումայեանց Պ.,

Համշենը Բագրատունիների թագավորության կազմում 9-10-րդ դարերում

Շատ քիչ են տեղեկությունները Համշենի իշխանության հետագա պատմության մասին, հայտնի չէ նաեւ, թե ինչ դեր են ունեցել Ամատունիները իշխանության կյանքում Համամից հետո, ուստի բավականին դժվար է վերականգնել նրա պատմությունը քիչ թե շատ ամբողջական կերպով: Սակայն անգամ այդ սուղ տվյալներով կարելի է որոշ պատկերացում կազմել: Բ. Հարությունյանը, անդրադառնալով Համշենի պատմության այս շրջանին, գրում է. «Համաձայն արաբական աղբիւրների՝ Տրապիզոնը հարակից տարածքներով մտնում էր հայ Բագրատունիների տէրութեան կազմի մէջ. հետեւաբար՝ առնուազն 9-րդ դարի վերջերին - 10-րդ դարի սկզբներին Համշէնի իշխանութիւնը հանդիսանում էր Հայկական թագավորութեան տարածք»[30]: Լ. Խաչիկյանի բնորոշմամբ այս «մութ ժամանակահատվածի վրա»[31] որոշ լույս է սփռում համշենցիների մեջ պահպանված

Պոնտոսի հայերը, աշխարհագրական և քաղաքական վիճակ Տրապիզոնի, «Լումայ», Տփխիս, գիրք Բ (յուլիս), 1899: **Մինաս Վարդապետ Բժշկեան**, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 97: **Յակոբոս Հ., Տաշեան Վ.**, Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, պատմական-ազգագրական հարեւանցի ակնարկ մը, Վիեննա,1921: Պատմական ուսումնասիրութիւնք, Մասն Ա. Հետազօտական ուղեւորութիւն ի Պոնտոս **Յ. Գ. Կ. Անդերսընի**, Մասն Բ. Ուղեւորութիւն հնախօսական հետազոտութեան ի Պոնտոս եւ ի Փոքր Հայս **Փր. եւ Եւգ. Կիւմոն** եղբարց, թարգմանեց Հ. Յակոբոս Վ. Տաշեան, Վիեննա, 1919 և այլն:

[30] **Բաբգէն Յարութիւնեան**, Համշէնահայերի պատմութիւնից, Համշէն եւ համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան-Պէյրութ, 2007, էջ 17:

[31] **Լ. Խաչիկյան**, էջեր համշենահայ պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, N2, էջ 122:

մի ավանդություն, որը գրի է առել եւ հրատարակել Ս. Հայկունին: Իշխան Մարտիրոսը իշխան Գրիգորից խնդրում է դստերը կնության տալ իր որդի Արտաշենին: Մերժում ստանալով՝ Մարտիրոսը զորքով հարձակվում է Գրիգորի երկրի վրա, հաղթում է նրան եւ նրա աղջկան ամուսնացնում իր որդի Արտաշենի հետ: Վերջինս Գրիգորի երկրում՝ Համշեն գետի գետաբերանից ոչ հեռու, կառուցում է մեծ եւ անառիկ ամրոց[32]: Ավանդազրույցը հետաքրքիր է այն առումով, որ «թագավորական ցեղից» սերված իշխանների մասին այս պատումով որոշ պատկերացում է տալիս նախարարական տների միջեւ գոյություն ունեցող հարաբերությունների եւ երկրի ոչ այնքան ուժեղ իշխանության մասին: Հավանաբար թագավորական տան ներկայացուցիչների միջեւ նման հարաբերությունները եզակի չէին:

Այս պատմության մեջ ուշագրավ է նաեւ Արտաշեն անունը: Սա պետք է որ եղած լինի բավականին ազդեցիկ նախարար, քանզի նրա անունով կոչվում է ժամանակակից Թուրքիայի Ռիզե նահանգում պատմական ամրոցից ոչ հեռու գտնվող Արտաշեն բնակավայրը (տեղացիներն այն կոչում են Արդիշեն), իսկ ժողովուրդն առ այսօր հիշողություններ է պահպանել նրա մասին:

Համշենի իշխանությունը Տրապիզոնի կայսրության կազմում 13-15-րդ դարերում

Համշենի իշխանության պատմության մեջ որակական առումով նոր փուլ էր 13-րդ դարի սկզբներին Տրապիզոնի կայսրության ստեղծումը: Դա հնարավոր դարձավ այն բանից հետո, երբ խաչակրաց 4-րդ արշավանքի հետեւանքով Բյուզանդական կայսրությունը ռազմաքաղաքական եւ տնտեսական առումով խիստ թուլացավ եւ հայտնվեց մասնատման վտանգի տակ: Կայսրության հատկապես ծայրամասային գավառները, դրանից օգտվելով, փորձում էին ինքնուրույն լուծել սեփական խնդիրները:

Վիճակը կտրուկ վատացավ 1185թ., երբ զոհվեցին կայսր Անդրոնիկ 1-ին Կոմնենոսն ու նրա որդիները: Մանուել արքայազնի որդիներ Ալեքսեյը եւ Դավիթը, որոշ ժամանակ փորձելով թաքնվել Կոստանդինապոլսում, այնուամենայնիվ ստիպված եղան գաղտնի հեռանալ մայրաքաղաքից եւ ապաստան գտան նախ՝ Տրապիզոնում, ուր գտնվում էին իրենց տոհմական կալվածքները, ապա անցան Վրաստան՝ իրենց մորաքույր Թամար թագուհու մոտ: Որոշ ժամանակ անց՝ 1204թ., նրանք վրացական զորքերի աջակցությամբ վերադարձան Տրապիզոն եւ հռչակեցին կայսրության մասին: Ժողովուրդը նրանց համակրում էր՝ որպես Բյուզանդիայի զոհված կայսեր օրինական ժառանգների: Կայսրության ստեղծման հարցում հատկապես վճռական եղավ Համշենի իշխանության աջակցությունը, որի շնորհիվ այն ստացավ կիսանկախ կարգավիճակ:

Կայսրությունը բաղկացած էր երեք հավասարազոր վարչական միավորներից (Տրապիզոն, Մացուկա, Գիմոր) եւ Համշենի կիսանկախ իշխանությունից. «Այդ վարչական միավորների գլուխ կանգնած էին վարչական եւ ռազմական իշխանությամբ օժտված դուկերը: Դուկեր կարող էին դառնալ այդ մարզերի հեղինակավոր եւ ճանաչված տոհմերի ներկայացուցիչները: Դրանցից բացի՝ հատուկ դերակատարություն ուներ Խաղտիքի հարավային շրջանը (Համշենի իշխանությունը – Հ.Ա.), որը ղեկավարում էր կիսանկախ դուկը, ով ուներ սեփական ամրոցներ եւ վասալական հարաբերությունների մեջ էր կայսեր հետ: Այս կառավարիչը չանկախացավ միայն ագրեսիվ

[32] Ս. Հայկունի, Տրապիզոնի հայ գիւղացոց կեանքը, «Արարատ», 1905, էջ 789:

հարեւանների պատճառով»[33]:

Ունենալով բավականաչափ մեծ ռազմական ուժ՝ Համշենի իշխանները բնականաբար նաեւ մեծ դերակատարություն ունեին պատերազմներում: Նրանց քաջագործությունների եւ ռազմական ունակությունների մասին պատմության մեջ մնացել են հետաքրքիր վկայություններ: Սրանցից մեկի համաձայն՝ Իկոնիայի սուլթանության եւ Տրապիզոնի կայսրության միջեւ 1223թ. ռազմական ընդհարման ժամանակ համշենցիներն ու Մացուկա շրջանի բնակիչները համատեղ ուժերով ջախջախում են թշնամու գերազանցող ուժերին եւ վճռում ճակատամարտի ելքը[34]:

Մոնղոլների, սելջուկների, թուրքմենական ցեղերի եւ այլ թշնամիների դեմ երկարատեւ պատերազմների հետեւանքով Տրապիզոնի կայսրությունն աստիճանաբար թուլանում է եւ կորցնում տարածքներ[35]:

Բաբերդի էմիրի գերիշխանության ներքո

14-րդ դարի երկրորդ կեսին Համշենի իշխանությունը հայտնվում է «Բաբերդի էմիրի գերիշխանության ներքո, որն իր հերթին Զելաիրյանների եւ Թեմուրյանների վասալն էր»[36]:

Համշենի իշխանության մասին հաջորդ տեղեկություններ

[33] Сказкин С., Д. История Византии, Глава 3, Социально-экономический и политический строй Никейской империи, Эпирского царства и Трапезундской империи, М.: Наука, 1967. - Т. 3.

[34] Ф. И. Успенский, Очерки из истории Трапезундской империи, Л., 1929, стр.52, 56.

[35] Տրապիզոնի կայսրությունը ի վերջո պարտվում է հզորացող օսմանյան թուրքերից, ովքեր 1461 թ. օգոստոսի 15-ին գրավում են Տրապիզոնը և վերջ դնում կայսրության գոյությանը:

[36] Լ. Խաչիկյան, էջեր համշենահայ պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, N2, էջ 124:

ը վերաբերում են 15-րդ դարի սկզբներին: Հատկապես ուշագրավ են իսպանացի դիվանագետ Ռյուի Գոնսալես դը Կլավիխոյի ճանապարհորդական նոթերում Համշենին վերաբերող տեղեկությունները, որոնցից իմանում ենք, որ այդ շրջանում Համշենի իշխանությունը կոչվել է Առաքել (Arraguiel): Սակայն պետք է ենթադրել, որ դա ժողովրդի կողմից տրված անուն էր՝ Առաքելի երկիր (իշխանություն), քանի որ Կլավիխոն նաև հաղորդում է, որ երկրի իշխանի անունը նույնպես Առաքել է: Քանի որ իսպանացի դիվանագետի օրագրի՝ Համշենին վերաբերող հատվածը մեզ հասած հազվագյուտ եւ, պետք է ենթադրել, հավաստի տեղեկություններ է հաղորդում, նպատակահարմար է այն մեջբերել ամբողջությամբ՝ Լ. Խաչիկյանի թարգմանությամբ: Նկարագրվող դեպքերը տեղի են ունենում 1406 թ. սեպտեմբերի կեսերին. «Այդ գիշեր նրանք (Կլավիխոն եւ իր ուղեկիցները՝ Լ. Խ.) օթեւանեցին լեռան ստորոտում գտնվող մի գյուղում: Հաջորդ օրը՝ կիրակի (սեպտեմբերի 13-ին) բարձրացան անտառազուրկ բարձր լեռը, որն այնքան զառիվեր էր, որ ե՛ւ մարդիկ, ե՛ւ անասունները շարժվում էին մեծ դժվարությամբ: Այդ օրը նրանք դուրս եկան Գորգանիայից եւ մտան Առաքել (Arraguiel) [կոչվող] երկիրը: Հաջորդ երկուշաբթի նրանք ճաշեցին այդ Առաքել երկրի մի գյուղում եւ, անմիջապես մեկնելով, գիշերեցին մի այլ գյուղում:

Ահա պատճառը, որի հետեւանքով այդ մահմեդականները (Piahacabea-ն՝ Լ.Խ.) իշխում են [միաժամանակ] Սպերին եւ այդ Առաքել [կոչվող] երկրին:

Այդ երկրի բնակիչները դժգոհ էին իրենց իշխանից, որին, ինչպես եւ երկիրը, կոչում էին Առաքել: Նրանք ուղեւորվեցին Սպեր՝ վերոհիշյալ իշխանի մոտ, ասելով, որ նրան կդարձնեն իրենց իշխան, պայմանով, որ նա պաշտպանի իրենց: Եւ արեցին այդպես՝ հանձնվեցին նրա իշխանությանը: Նա ընդունեց եւ իր

փոխարեն մի մահմեդական նշանակեց այդ երկրի կառավարման համար, մի քրիստոնյայի ընկերակցությամբ:

Այդ երկրամասը շատ լեռնոտ է, ունի մի քանի լեռնանցներ, որոնցով կարող են անցնել կենդանիները: Որոշ տեղերում ժայռից ժայռ անցնելու համար փայտե կամուրջ են կապել: Բեռնակիր կենդանիներն այդ երկրամասում, ըստ մեծի մասի, անկարող են շարժվել, եւ մարդիկ ստիպված են ամեն ինչ կրել իրենց ուսերին: Հացահատիկն այնտեղ քիչ է [աճում]:

Այդ լեռներով նրանք շարժվում էին չորս օր, մինչեւ հասան ծովափնյա մի տուն, որից մինչեւ Տրապիզոն վեց օրվա ճանապարհ էր: Այստեղից նրանք վատ ճանապարհով գնացին մինչեւ Սյուրմենե կոչվող վայրը»[37]:

Այս տեղեկությունների մեջ, անշուշտ, կարեւոր է այն, որ Համշենն այդ շրջանում դեռեւս ինքնուրույն, բավականին ուժեղ եւ ազդեցիկ իշխանություն էր: Կլավիխոյի հիշատակած Առաքելի եւ նրա հաջորդների օրոք Համշենի իշխանությունը վերելք է ապրում: Առաքելին հաջորդած «պարոնաց պարոնի» անունը դարձյալ Առաքել է: Հայտնի է, որ 1422 թ. Համշենում իշխում էր այս Առաքելը, որը հավանաբար արդեն հիշատակված Առաքելի ժառանգներից էր[38]: 1425 թ. նրան հաջորդում է Դավիթ իշխանը[39]: Այդ շրջանում վերելք էր ապրում կարա-կոյունլուների թագավորությունը՝ Իսկանդար-բեկի առաջնորդությամբ, որում դերակատար էր նաեւ Համշենի իշխանությունը, քանի որ կարեւոր դերակատարություն ուներ Տրապիզոնի կայսրության և Կարա-կոյունլուների պետության միջև առևտրում: Սեւ ծովի նավահանգիստները եւ հարաբերական խաղաղ պայմանները լրջորեն նպաստում էին առեւտրի զարգացմանը: Մեծահարուստ առեւտրական խոջա Շամշադինը 1431 թ. վերակառուցում է Տրապիզոնի Չարխափան հայկական եկեղեցին[40]: Խոջա Շամշադինը Համշենի Դավիթ իշխանին գրած նամակում նրան հորդորում է բավարարվել սահմանված տուրքերով և ապահովել բեռների անվտանգ տեղափոխությունը նավահանգիստներից մինչեւ Բասենի սահմանը, նաև նույն խնդրանքով դիմել Սպերի էմիրին:

Պահպանված վկայություններից դժվար չէ ենթադրել, որ Դավիթի իշխանության տարիներին Համշենը բարգավաճել ու զարգացել է: Դա նաեւ խոսում է այն մասին, որ երկրում եղել է ուժեղ եւ կայուն իշխանություն: Սակայն Դավիթի մահվանից հետո տակավին երիտասարդ նրա որդի Վարդը նույնպես երկար չի իշխում եւ մահանում է: Նրան հաջորդած Վարդի որդի Վեքեն, որ հոր մահից հետո կառավարում է երկիրը, 1460 թ. պարտվում է Շահալի կոչվող ոմն ղզլբաշի զորքերից, գերվում է եւ հանձնվում «Արդաբիլում նստող ղզլբաշ ցեղերի առաջնորդ Սեֆյան շեյխ Հայդարին (1456-1488)»[41]: Թեեւ այս պարտությունից հետո իշխանությունը պահպանում է ինքնուրույնությունը, սակայն ակնհայտ է դառնում, որ այն երկար դիմանալ չի կարողանա: Վեքեին փոխարինում է հավանաբար նրա եղբայր Դավիթ Բ-ն՝ Համշենի վերջին իշխանը:

---

[37] Մեջբերումն՝ ըստ Լ. Խաչիկյանի նշված աշխատության, էջ 124-125, Լ. Խաչիկյանը հղում է կատարում հետեւյալին՝ Руи Гонсалес де Клавихо, Дневник Путешествия в Самарканд ко двору Тимура (1403-1406), пер. И. И. Серезневского, СПб., стр. 382-384:

[38] ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 365:

[39] Նույն տեղում:

[40] Լ. Խաչիկյան, էջեր համշենահայ պատմությունից, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 2, էջ 127:

[41] Նույն տեղում էջ128:

Համշենի իշխանության անկումը

Օսմանյան կայսրությունը, Կոստանդինապոլսի գրավումից հետո աստիճանաբար նվաճեց նորանոր երկրամասեր, հատկապես ուժեղ էր դիմադրությունը Պոնտոսում, բայց այստեղ դեռեւս գոյություն ունեցող մեծ ու փոքր իշխանությունները ի վերջո պարտվեցին եւ միացվեցին ընդարձակվող եւ հզորացող կայսրությանը: Նույն ճակատագիրն էր վիճակված նաեւ Համշենի իշխանությանը, որի վերջին պարոն Դավիթ Բ-ն, թերեւս մի քանի ռազմական պարտություններից հետո, ստիպված էր հրաժարվել իշխանությունից եւ տարագրվել: Նա ապաստան է գտնում Սպերի տիրակալի մոտ, իսկ ուղիղ 700 տարի գոյատեւած Համշենի իշխանությունը դադարում է գոյություն ունենալուց 1489 թ.:

Լ. Խաչիկյանը մեզ հասած ձեռագրերի հիման վրա վերականգնում է 1401-1489 թթ. Համշենի իշխանների կառավարման ժամանակագրությունը: Ահա այն[42].

[42] Նույն տեղում էջ 129:

ԱՌԱՔԵԼ

(1401-ից առաջ վտարվել էր իշխանությունից, 1423-ին կրկին հիշատակվում է որպես Համշենի պարոնաց պարոն)

ԴԱՎԻԹ Ա

(հիշվում է 1425 -1440 թթ.)

ՎԱՐԴ

(հիշվում է 1440 թ.)

ՎԵՔԵ ԴԱՎԻԹ Բ

(գերվել է 1460թ.) (իշխանությունից զրկվել է 1489-ից առաջ)

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Օսմանյան կայսրության իսլամացման քաղաքականությունն ու Համշենի պայքարը ինքնության պահպանման համար 15-19-րդ դարերում

Համշենի հայության իսլամացումը

Օսմանյան կայսրությունը Սեւ ծովի ափին վերջնականապես հաստատվեց Տրապիզոնի կայսրության վերջին հենակետի՝ մայրաքաղաք Տրապիզոնի անկումից՝ 1461թ. հետո, սակայն Համշենի իշխանության ազատատենչ եւ քաջ ժողովուրդը դրանից հետո մոտ երեք տասնամյակ էլ դեռ դիմադրում էր եւ, ինչպես տեսանք, Համշենն ընկավ 1489թ.: Թեեւ Համշենի իշխանությունը բավականին հզոր էր, իսկ ժողովուրդը՝ քաջ եւ ազատատենչ, բայց հասկանալի է, որ Օսմանյան հզոր կայսրության դեմ չէր կարող միայնակ պայքարել եւ անկախությունը պահպանել:

Իշխանության կորուստից հետո էլ անմատչելի լեռներում բնակվող Համշենի հայությունը պահպանեց որոշ ինքնուրույնություն, որը տեւեց մինչեւ 19-րդ դարի կեսերը[43]:

Օսմանյան տիրապետության հաստատումից հետո «Համշէնի մեծ մասը շուտով մտցում է նորաստեղծ Տրապիզոնի էյալէթի (հետագայում՝ վիլայէթ) չորս գաւառներից (սանջակ) Լազիստան գաւառի Աթինա գաւառակի (կազա) մէջ: Նախկին իշխանութեան արեւելեան մի փոքր հատուած մաս է կազմում նոյն գաւառի Խոփա, արեւմտեան մասը՝ Ռիզէ գաւառակների: Համշէնի հայ բնակչութեան օրինակով, որի թիւը 17-րդ դարի սկզբին հասել էր մօտ 10 հազ. տան (մօտաւորապէս 70-80 հազ. մարդ) Տրապիզոնի նահանգի, այսինքն՝ ողջ պոնտահայութեանը յաճախ սկսեցին կոչել համշէնահայեր»[44]:

Օսմանյան կայսրության ձեւավորման եւ ընդարձակման ողջ պատմության ընթացքում թեեւ բռնի իսլամացման նպատակով տեղի են ունեցել քրիստոնյաների զանգվածային կոտորածներ, սակայն դրանք խնդրո առարկա շրջանում համակարգային բնույթ չէին կրում եւ, բնականաբար, էապես չէին ազդում նվաճված տարածքների ժողովրդագրական պատկերի վրա:

Կայսրության արեւելքում՝ Արեւմտյան Հայաստանում եւ Պոնտոսում, վարչատարածքային միավորների հստակեցումից եւ կառավարման համակարգի ամրապնդումից հետո իշխանություններն անցան այդ տարածքների բնիկ ժողովուրդների՝ հայերի եւ Պոնտոսի հույների իսլամացման քաղաքականությանը, որն իրականացվում էր բռնություններով եւ կոտորածներով, ինչը հաճախ հանգեցնում էր պատերազմական գործողությունների: Նման քաղաքականության մեջ անկարեւոր չէր նաեւ այն հանգամանքը, որ կայսրության իշխանությունները, Պարսկաստանի հետ 1555թ. Ամասիայում հաշտության պայմանագրի կնքումից հետո այլեւս հրատապ արտաքին մարտահրավերներ չունենալով, անցան նոր նվաճված տարածքների իսլամացմանը:

---

[43] Այս մասին տե՛ս հաջորդ գլխում:

[44] Ա. Մելքոնյան, Համշէն. Պատմաաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր), տե՛ս Համշէն եւ համշէնահայութիւն, (գիտաժողովի նիւթեր), Երեւան-Պեյրութ, 2007, էջ 31:

Բնիկների կողմից ինքնության պահպանման հարցում օսմանյան իշխանությունները դավանանքից ոչ պակաս վտանգավոր էին համարում լեզուն: Այս ժամանակահատվածում Անատոլիայի եւ Արեւմտյան Հայաստանի շատ շրջաններում, ըստ որոշ տեղեկությունների, տեղական իշխանությունները հրամայել են կտրել հայերեն խոսողների լեզուները: Սա վկայում է այն մասին, որ «...թուրք կրոնական ու պետական պաշտոնյաները այստեղ եւս քաջ գիտակցել են, որ մայրենի լեզուն պահող նորաթուխ «օսմանցիները», վաղ թե ուշ, կարող են դառնալ իրենց պապերի հավատքին եւ մայր ժողովրդի գիրկը»[45]:

Համշենը, որպես դիմադրության, ըմբոստության եւ անհնազանդության զորեղ օջախ, առաջիններից մեկը պետք է հայտնվեր թիրախում: Համշենահայության իսլամացումն սկսվեց 17-րդ դարի 30-ական թվականներին եւ տեւեց մինչեւ 19-րդ դարի 30-ական թվականները: Երեքհարյուրամյա այս շրջանը իր տատանումներով՝ վերելքներով, վայրէջքներով եւ հարաբերականորեն խաղաղ ժամանակաշրջաններով, կարելի է բաժանել երեք փուլի:

Առաջին փուլ. 16-րդ դարի վերջեր - 1722թ.՝ շուրջ 150 տարի:

Երկրորդ փուլ. 1722թ. - 1838թ.՝ ավելի քան մեկդարյա շրջան:

Երրորդ փուլ. 1838թ. - 1915 թ., 77 տարի:

Չորրորդ փուլ. 1915թ. - 1930-ականներ, երբ Համշենում եւ ծովափնյա շրջաններում այլեւս խոսք լինել չէր կարող քրիստոնյա հայերի, հույների կամ այլ ժողովուրդների ներկայացուցիչների մասին[46]:

[45] Լ. Խաչիկյան, էջեր համշենահայ պատմությունից, տե՛ս «Բանբեր Երեւանի համալսարանի», 1969, թիվ 2, էջ 139:

[46] Անշուշտ 30-ականներից հետո էլ հատուկենտ ընտանիքներ մի

Կայսրության քրիստոնյա բնակչության իսլամացումն ուներ մեկ հիմնական նպատակ՝ թուլացնել կամ ոչնչացնել նվաճված երկրների բնիկ ժողովուրդներին՝ կանխելու համար ապագա անջատողական շարժումները: Սակայն նման մեծ գործընթացները լուծում էին նաեւ մարտավարական այլ կարեւոր խնդիրներ, ինչպիսիք էին սահմանների անվտանգության ապահովումը, գենետիկ եւ մշակութային խաչասերումների միջոցով նվաճված ժողովուրդներից մեկ միասնական օսմանյան ազգ ձուլելու հեռահար նպատակը, երկրի ներսում խաղաղ գոյակցության ապահովումը եւ այլն:

Առաջին փուլ (16-րդ դարի վերջեր - 1722թ.)

Սա ամենամեծ փուլն է՝ շուրջ 150 տարի տեւողությամբ: Ըստ էության՝ համշենահայության իսլամացումը հիմնականում տեղի ունեցավ այս շրջանում: Թեեւ բռնի իսլամացման գործընթացներն սկսվեցին 16-րդ դարի վերջերին, սակայն մինչեւ 17-րդ դարի 30-ական թվականները էական հաջողություններ չարձանագրվեցին: «Պատմութիւն հայկական Պոնտոսի» մեծարժեք աշխատության հեղինակ Հովակիմ Հովակիմյանը (Արշակունի) գրում է. «Մինչեւ ժէ դարու 30-ական թուականները Համշէնը կը մնար ամբողջովին հայ-քրիստոնեայ երկիր մը»[47] : Սակայն 17-րդ դարի երկրորդ կեսին վիճակը փոխվում է. արձանագրվում են համշենահայերի զանգվածային իսլամացման բազմաթիվ դեպքեր: Ճիշտ է, որ հայերը հեշտությամբ չէին կրոնափոխվում.

կերպ պահպանել են իրենց կրոնը՝ հիմնականում գաղտնի պայմաններում, սայկայն սա այլ հարց է եւ պետք է քննվի ծպտյալ հայերի պատմության համատեքստում:

[47] Յովակիմ Յովակիմեան (Արշակունի), Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պեյրութ, 1967, էջ 59:

գրեթե ամենուր ցույց էին տալիս զինված դիմադրություն, բայց պարտվում էին, քանզի թեեւ քաջ, բայց փոքրաթիվ մարդկանցով (հիմնականում՝ երկրագործ բնակչություն) չէին կարող հաղթել կանոնավոր զորքին: Յուրաքանչյուր դիմադրության դեպքից հետո շատերը դաժանաբար կոտորվում էին, բռնություններից եւ կոտորածներից փրկվածները սփռվում էին Սեւ ծովի ափով մեկ: Իսկ իսլամ ընդունածները փրկվում էին հետագա ճնշումներից ու կոտորածներից:

Այս շրջանի կրոնափոխության բուն նպատակները շատ դիպուկ է բնորոշել Լ. Խաչիկյանը. «Թուրք զավթիչների կողմից համշենցիներին մահմեդականություն պարտադրելու փորձերը մաս են կազմում օսմանյան բովանդակ կայսրության եւ մանավանդ նրա հյուսիսարեւմտյան շրջանների բուն բնակչությանը՝ քրիստոնյա հույներին, հայերին, վրացիներին ու լազերին կրոնափոխ անելու ճանապարհով ռազմավարական ու տնտեսական մեծ նշանակություն ունեցող այդ երկրամասը կայսրության հետ ամուր շաղկապելու ծրագրի, որը բուռն թափով ու բռնի միջոցներով գործադրել սկսեցին 17-րդ դարի վերջերից»[48]:

Երկրորդ փուլ. 1722թ. - 1838թ.

Այս շրջանում կրոնափոխության խնդիրը նոր շեշտադրում է ձեռք բերում: Բյուզանդական կայսրության կործանումով Օսմանյան կայսրությունը վերացրել էր խոշորագույն քրիստոնեական պետությունը եւ, փաստորեն, իր հարեւանությամբ չունենալով նրան փոխարինող որեւէ համարժեք պետություն, ստեղծել էր համաիսլամական նոր խալիֆայություն: Բայց 18-րդ դարի առաջին քառորդում Ռուսաստանի հզորացումը հյուսիսում եւ դեպի հարավ արագ առաջխաղացումը նոր խնդիրների առջեւ կանգնեցրեց Օսմանյան կայսրությանը: Հատկապես դեպի հարավ Ռուսաստանի ընդարձակումը վտանգավոր էր նրանով, որ սպառնում էր թե Իրանին, թե Օսմանյան կայսրությանը: Իրանը էականորեն թուլացել էր, որի հետեւանքով ազատագրական պայքարի հնարավորություն էին ստացել նրա տիրապետության տակ գտնվող ժողովուրդները: Այս տեսակետից կայսրության համար հատկապես վտանգավոր էր Սյունիքում եւ Արցախում հայ ժողովրդի ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ, որն սկսվեց 1722թ.: Այն հիմքում ուղղված էր նաեւ Օսմանյան կայսրության դեմ, քանի որ նրա տիրապետության տակ էր գտնվում Հայաստանի եւ հայության մեծագույն մասը:

1722 թվականից կրոնափոխության հարցում նկատվում է նոր մոտեցում. եթե մինչեւ այս թիվը հիմնական դրդապատճառները ներպետական էին, ապա այժմ վտանգ են տեսնում դրսից. այսինքն՝ Օսմանյան կայսրության հայերը կարող էին հետեւել Արցախի եւ Սյունիքի հայերի օրինակին, համագործակցել նրանց հետ կամ համակրել առաջացող քրիստոնյա Ռուսաստանին՝ վերածվելով ներքին վտանգի: Իշխանությունները շատ արագ են արձագանքում եւ 1723թ. դիմում նոր բռնությունների:

Համշենի հայության իսլամացման պատմության մեջ հատկապես ողբերգական է Սեւ գետի (Կարա դերե) բնակչության բռնի իսլամացման պատմությունը, որը մեզ է հասել հայտնի ազգագրագետ-բանահավաք Սարգիս Հայկունու շնորհիվ[49], ով

[48] Լ. Խաչիկյան, էջեր համշենահայ պատմությունից, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1969, N2, էջ 136:

[49] Սարգիս Հայկունի, «Կորած եւ մոլորած հայեր. Սեւ գետացիք», Հոդվածաշար, առաջին անգամ տպագրվել է «Արարատ» հանդեսում, 1895թ., այնուհետեւ՝ «Հայոց նոր վկաներ» ժողովածուի մեջ, «Տէր Կարապետ քահանայ Թորոսլեցի» վերնագրով, Վաղարշապատ, 1903 թ., էջ 702-709:

ավանդությունների հիման վրա շարադրել է Սեւ գետի (Կարադերեի) հայության մահմեդականացման պատմությունը, որ նրա կարծիքով տեղի է ունեցել 1708-1710 թթ.: Սակայն Լ. Խաչիկյանը ավելի հավաստի է համարում Պ. Թումայանցի հաղորդած տեղեկություններն այս մասին, որոնց սկզբնաղբյուրը եղել է մի Շարակնոց: Պ. Թումայանցն այդ Շարակնոցի հիշատակարանի բովանդակությունն է հիմք ընդունել Սեւ գետի հայերի իսլամացման դեպքերի եւ դրանց ժամանակի վերաբերյալ եւ այն համառոտ վերապատմել իր «Պոնտոսի հայերը» հոդվածում: Ըստ այդմ՝ Սեւ գետի հայերն այստեղ էին գաղթել մոտ 1690-1700-ական թվականներին Բաբերդից, Սպերից եւ Համշենից՝ խուսափելով կրոնափոխությունից[50], իսկ Սեւ գետի հայերի իսլամացումը տեղի է ունեցել 1780 թվականին: Ահա նրա հաղորդած տեղեկությունը. «Գարա-տերէի ամբողջ տաճկանալը եւ վերջին մաս մը մնացողներու սպաննուել եւ փախչելը՝ հայոց ՌՄԻԹ (1780) թուին պատահեր է. սակայն հալածումը շատ առաջ սկսեր եւ ոտք ոտք առաջացեր ու տաճկացած հայոց ձեռքով այլ շատ տնօրինութիւններ ու արիւնայեղութիւններ ըլլալէ յետոյ՝ վերոյիշեալ թուականին Գարա-տերէի վերին ծայրը Խաղաղ գիւղը վերջացրել է ուսկից փախել է գիշերայն եւ այս յիշատակարանը գրող տէր Կարապետ անուն առաքինին քահանան»[51]:

Պ. Թումայանցի հաղորդած տեղեկությունները կարեւորվում են նրանով, որ դրանք քաղվել են գրավոր աղբյուրից, որի հեղինակը՝ տեր Կարապետը, իրադարձությունների մասնակից է եւ հայերի դիմադրության առաջնորդի՝ նույնպես քահանա տեր Կարապետի որդին է: Պ. Թումայանցի տեղեկությունները լույս են սփռում Համշենի եւ հարակից շրջանների հայերի իսլամացման գործընթացների եւ, հատկապես, ժամանակագրության խնդիրների վրա: Եթե այդպես է, ուրեմն պետք է ենթադրել, որ Սարգիս Հայկունու հաղորդած պատմության մեջ Համշենի եւ Սեւ գետի իսլամացման պատմությունները միախառնվել են եւ ներկայացվել որպես նույն ժամանակաշրջանում կատարված դեպքեր: Այլապես չպետք է հավատանք Պ. Թումայանցի այն տեղեկությանը, թե Կարա դերեի հայերը գաղթել են հիմնականում Համշենից, նաեւ՝ Սպերից ու Բաբերդից, քանի որ ըստ Ս. Հայկունու՝ Համշենի եւ Կարա դերեի հայերի իսլամացումը տեղի է ունեցել միեւնույն ժամանակ՝ մոտ 1708-1710 թթ.:

Վերոնշյալը հիմք է տալիս ենթադրել, որ 1708-1710թթ. բռնի կրոնափոխության դեպքերը տեղի են ունեցել Համշեն գավառում, հետագա տարիներին ընդգրկել են նաեւ Սպերն ու Բաբերդը՝ իրենց գյուղերով: Ահա այս իրադարձությունների հետեւանքով է, որ նշված շրջաններից բազմաթիվ հայեր, չցանկանալով իսլամանալ, փախել եւ ապաստան են գտել Սեւ գետում: Սակայն, ինչպես տեղեկանում ենք Պ. Թումայանցից, բուն Համշենից, Սպերից եւ Բաբերդից հետո 1780թ. հերթը հասնում է Սեւ գետին:

Նկատի ունենալով այս դեպքերի հույժ կարեւորությունը բռնի իսլամացման գործընթացների մասին պատկերացում կազմելու գործում՝ փոքր-ինչ հանգամանորեն կանդրադառնանք դրանց:

Ըստ Հայկունու՝ 18-րդ դարի սկզբներին Համշենի եւ Սեւ գետի շրջակա հայկական գյուղերի թիվը հասնում էր հարյուրի, իսկ տների թիվը՝ 16 հազարի, որից մոտ 10 հազարը տունը Համշենում, 3 - 6 հազարը՝ Սեւ գետում: Նկատի առնելով այդ ժամանակաշրջանի ընտանիքների կազմը՝ 8-10 մարդ, խոսքը մոտ 120-150 հազար մարդու մասին է, հսկայական մի ուժ, որը հանգիստ չէր տալիս եւ աշխարհիկ, եւ հոգեւոր իշխանություն-

[50] Պ. Թումայեանց, Պոնտոսի հայերը, «Լումայ», 1899, Բ գիրք, էջ175:

[51] Նույն տեղում, էջ 176-177:

ներին, Համշենի հայության իսլամացման կազմակերպիչը Սյուրմենե գավառից Ղուռուֆ օղլի մոլլա Մեհմետն էր, ով իր շուրջ է հավաքում 40 մոլեռանդ աշակերտների, նրանց ուսուցանում է, նախապատրաստում եւ անցնում գործի: Նախ՝ համոզելով եւ քարոզչությամբ, ապա՝ սպառնալիքներով փորձում է հայերին կրոնափոխել: Շոշափելի արդյունքների չհասնելով՝ դիմում է ենիչերիների աջակցությանը՝ սրանց ստվար զորաջոկատներով շրջելով Համշենում եւ Սեւ գետում՝ բնակչությանն ահաբեկելու նպատակով:

Տասը տարի իզուր ջանքեր գործադրելուց եւ ընդամենը մի քանի տասնյակ հայերի իսլամացնելուց հետո ի վերջո որոշում է դիմել բռնի ուժի. հավաքում է մոլեռանդների մի հսկայական զանգված, նաեւ՝ բազմաթիվ հոգեւորականների եւ ենիչերիների, փորձում է ուժով լուծել հարցը: Սրանց կանոնավոր զորքերով աջակցում է Տրապիզոնի նահանգապետը:

Սեւ գետի Թորոսլի գյուղի քահանա տեր Կարապետն ամբողջ շրջանի հայության մեջ բացառիկ հարգանք եւ հեղինակություն ունեցող անձնավորություն էր. թուրքերի ղեկավարները գիտեին, որ քանի դեռ նա ողջ է, հայերը երբեք չեն ուրանա իրենց հավատը: Ղուռուֆ օղլի մոլլա Մեհմետն իր հսկայական բանակով անսպասելիորեն հայտնվում է Թորոսլի գյուղում, որը դիմադրության կենտրոնն էր (այս գյուղում էր բնակվում տեր Կարապետը): Հայերը, նախապատրաստվում էին Զատկի տոնին եւ տեղեկություն չունեին թուրքերի գաղտնի ծրագրից: Մոլլան նրանց առաջարկում է կամավոր կերպով ընդունել իսլամը, հայերը կտրուկ հրաժարվում են, որից հետո թուրքերը սպանում են տեր Կարապետին եւ սկսում կոտորածը: Ժողովուրդը տեղի չի տալիս եւ դիմում է ինքնապաշտպանության: Երբ երկու կողմից էլ շատերն արդեն զոհվել էին, «ժողովրդեան երկչոտ մասն խոնարհեցաւ մոլեռանդ գազանաց առջեւ, խոստացան կոտորածը դադարեցնել, որպէս զի հետեւեալ օրն որոշում մի տան եւ թլպատուին»: Մոլլա Մեհմետին տեղեկացնում են, որ հաջորդ օրը՝ Սուրբ Հարության տոնին, հայերը համաձայնել են թլփատվել:

Դադարից օգտվելով՝ հավատքի մեջ ուժեղները վերցնում են իրենց հետ այն ամենը, ինչ կարող էին, եւ դիմում դեպի անտառներ: Անհավանական տանջանքների եւ բազում զրկանքների գնով նրանք կարողանում են փրկվել եւ ապաստան գտնել տարբեր բնակավայրերում՝ Բաբերդում, Զաղփոսում, Կալաֆկայում, Աֆիոնում, Սամսունում (Ճանիկում) եւ այլուր: Նրանք իրենց հետ տանում են նաեւ տեր Կարապետի մասնատված մարմինը, որի մի մասը հողին են հանձնում Տրապիզոնի գավառի Կալաֆկա գյուղում, ուր բնակություն է հաստատում տեր Կարապետի որդին, իսկ մյուս մասն իրենց հետ տարել էին Բաբերդի կողմ գնացածները:

Թորոսլի գյուղից հետո թուրքերը կոտորում են շրջակա 100 հայկական գյուղերի բնակչությանը, որոնց մի մասը փախուստի է դիմում, մի մասն էլ, այլ ելք չունենալով, ընդունում է իսլամը:

Նահատակված քահանայի որդին Կալաֆկա գյուղում ձեռնադրվում է քահանա՝ ընդունելով իր հոր անունը եւ ուխտում, որ իրենց տոհմից միշտ քահանա ձեռնադրվի տեր Կարապետ անունով, եւ տարին գոնե մեկ անգամ ծպտյալ կերպով այցելեն Սեւ գետ՝ հոգեպես մխիթարելու համար ժողովրդի այն հատվածին, որը փրկվել չկարողացավ եւ ստիպված ընդունեց իսլամը[52]:

Հայտնի չէ, թե մինչեւ երբ են քահանա ձեռնադրվել տեր

[52] Սարգիս Հայկունի, Կորած եւ մոռացուած հայեր. Սեւգետցիք, հոդվածաշար, Արարատ, 1895, վերապատմված հատվածը՝ էջ 239, 240բ-242բ:

Կարապետի սերունդները, սակայն որ եւ ձեռնադրվել են, եւ երկար ժամանակ կատարել Սեւ գետ այցելելու պատգամը, իրողություն է: Այդ մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Ս. Վարդանյանը. «1984թ. ՈՒՍՖՍՀ (այժմ՝ Ռուսաստանի Դաշնության) Կրասնոդարի երկրամասի Մայկոպ քաղաքի մոտակա հայաբնակ Պրոլետարսկի գյուղում հանդիպեցի Տրապիզոնի Կալաֆկա գյուղացի 84–ամյա Մարգար Ղուկասյանին, որի տան պատին փակցված էր 1906թ. իր պապի գործած մի կարպետը, որի վրա հյուսված էր. «Տեր Խորեն քահանա Տեր Կարապետի, ծնվ. 1831թ.»: Տեր Խորենը զոհվել էր գաղթի ճամփաներին՝ 1915թ.: Նրա թոռը՝ Մարգար Ղուկասյանը, պատմեց տեր Կարապետի և նրա հաջորդների մասին իր իմացած մի քանի պատմությունները, որոնք վկայում էին, թե հայրենասեր քահանաների հիշատակը պահպանվել է նույնիսկ այսքան տարի անց[53]»:

Երրորդ փուլ. 1838 թվից մինչեւ 1915 թ. Հայոց ցեղասպանությունը

Այս փուլը շարունակվում է 19-րդ դարում Օսմանյան կայսրությունում. առաջին անգամ բռնի կրոնափոխությունը կառավարության համար դառնում է խնդրո առարկա: Արեւմտյան պետությունների, հատկապես Անգլիայի ճնշումների ազդեցությամբ 1839 թ. Թանզիմաթի[54] հռչակումով այս հարցը նոր բովանդակություն է ձեռք բերում: Հայերի՝ 19-20-րդ դարերի բռնի կրոնափոխության խնդիրներին մանրամասնորեն անդրադարձած հայտնի թուրք պատմաբան Թաներ Աքչամը հաստատելով, որ բռնի կամ կամավոր կրոնափոխությունը Օսմանյան կայսրությունում խիստ տարածված երեւույթ է, նշում է, թե «Հատկապես Թանզիմաթով կրոնափոխությունը, զարգացող ազգայնամոլության հետ կապված, սկսել է բացահայտ սոցիալական բախման հարց դառնալ, և օսմանցիները սույն խնդրի վերաբերյալ, թեև ակամա և հարկադրաբար, այնուամենայնիվ ստիպված են եղել համակարգված քաղաքականություն զարգացնել»[55]: Սա նշանակում էր, որ պետությունը պարտավոր էր պաշտպանել իր այն հպատակների իրավունքները, ում բռնի կրոնափոխում էին:

Ըստ էության՝ ավելի վաղ իրականացրած կրոնափոխության դեպքերը, որոնք կարելի է որակել որպես մարդկանց անձնական կյանքին առնչվող մասնավոր դեպքեր, նոր բովանդակություն են ձեռք բերում 1839 թ. Թանզիմաթի հռչակմամբ: Կառավարությունը հայտնվում է երկընտրանքի առջեւ. մի կողմից՝ նա պետք է կատարեր եւրոպական պետությունների, հատկապես Անգլիայի առջեւ ստանձնած պարտավորությունները, մյուս կողմից, ինչպես Թ. Աքչամն է նկատում, պետք էր «հաշվի առնել մուսուլման մեծամասնության «զգայուն լինելը» այս հարցի նկատմամբ»[56]:

Խնդիրը բարդանում էր նաեւ այն հանգամանքով, որ

---

[53] **Վարդանյան Ս.**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը եւ երգարվեստը, (նյութեր եւ ուսումնասիրություններ), Երեւան, 2009, էջ 37:

[54] 1839 թ. նոյեմբերի 3-ին սուլթան Աբդուլ Մեջիդը իր պալատում պետական բարձրագույն պաշտոնյաներին եւ արտասահմանյան դեսպաններին ներկայացրեց բարեփոխումների ծրագիր, որը կոչվում էր «թանզիմաթ ի-խեյրիյե» (օսմաներեն՝ تنظيمات خيريه}}՝ բարերար ռեֆորմներ): Այս թվականից սկսած՝ բարենորոգումների ողջ շրջանը կոչվեց թանզիմաթ: Բարեփոխումներն իրականացվեցին 2 փուլով. առաջինն փուլի մասին պաշտոնապես հայտարարվեց 1839 թվականին եւ տեւեց մինչեւ 1856թ., երկրորդն սկսվեց 1856 թ. (կոչվում էր Islâhat Hatt-ı Hümâyûn) եւ տեւեց մինչեւ 1876թ.՝ առաջին սահմանադրության շրջանը:

[55] **Թաներ Աքչամ**, Հայերի բռնի իսլամացումը. Լռություն, ժխտում եւ ուծացում, Երեւան, 2016թ., էջ 112:

[56] Նույն տեղում:

կրոնափոխվածները շարիաթի օրենքներով չէին կարող վերստին վերադառնալ իրենց նախկին կրոնին. նման քայլ անողները ենթարկվում էին մահապատժի: Թանզիմաթից հետո այս դեպքերը մեծ արձագանք էին ստանում, ուստի 1844թ. Թանզիմաթի խորհուրդն արգելում է նման մահապատիժը եւ օտարերկրյա դեսպաններին երաշխիքներ տալիս, որ այն այլեւս չի կիրառվի[57]: Սակայն այս երաշխիքն ապահովելը հեշտ չէր լինելու, որովհետեւ դարավոր ավանդույթները մեկ օրենքով եւ կարճ ժամանակահատվածում հնարավոր չէր վերացնել Օսմանյան կայսրության նման մի երկրում, որն ըստ էության կրոնապետություն էր, եւ որի գլուխ կանգնած էր իսլամական աշխարհի խալիֆը, ով ոչ միայն պարտավոր էր պաշտպանել իսլամը, այլեւ այն տարածել բոլոր «գյավուր» ժողովուրդների մեջ, մի երկրում, ուր իսլամական իրավունքը գերակա էր, իսկ երկրի ոչ մուսուլման բնակիչները՝ երկրորդ կարգի քաղաքացիներ, որոնց դարեր շարունակ ճնշել են, բռնի կրոնափոխել կամ սպանել՝ առանց մեղքի զգացումի եւ պատժվելու վախի: Ավելին՝ այդ քայլերը միշտ խրախուսվել էին թե կրոնական, թե աշխարհիկ իշխանությունների կողմից, ու հանկարծ օրենքով արգելվելու էր այն, ինչի համար նախկինում տրվում էր դրախտում հայտնվելու խոստում:

Նման պայմաններում մահապատժի արգելման մասին որոշումը չէր կարող հրապարակվել, ուստի իշխանությունները որոշեցին այն շրջաններ ուղարկել «գաղտնի գրությամբ». այս ձեւակերպանը հետագայում փոխարինեց «գաղտնի հրաման» արտահայտությունը[58]:

Անշուշտ այս որոշմամբ կրոնափոխությունը չէր արգելվում, սակայն այն այլեւս չէր կարող կատարվել այս կամ այն

[57] Նույն տեղում, էջ 113:
[58] Նույն տեղում , էջ 114:

անհատի, հոգեւորականի կամ պաշտոնյայի հայեցողությամբ. կառավարությունը որոշեց հարցը կարգավորել օրենսդրորեն: Սա ոչ միայն հնարավորություն էր տալիս սահմանել պետական վերահսկողություն, այլեւ խուսափել նախկին կրոնին վերադառնալու հետեւանքներից, որոնք լայն արձագանք էին ստանում դիվանագիտական դաշտում եւ օտար պետությունների առջեւ դուռ բացում Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու համար:

Կրոնափոխության կարգը սահմանվում է օրենքներով, իսկ «Նոր դատավարական իրավունքի համաձայն՝ կրոնափոխությունը պետք է կատարվեր դատարանում՝ քադիի[59] ներկայությամբ: Դատարանում պետք է ներկա գտնվեր նաև կրոնափոխվող անձի մի աջակից կամ նրան բարոյական աջակցություն ցուցաբերող մեկը: Բացի այդ՝ լինելու էին նաև վկաներ, և կրոնափոխվողը պետք է հայտարարեր, որ այդ որոշումը կայացրել էր ազատ կամքով և ոչ մեկի ճնշումներին չէր ենթարկվել: Դրանից հետո միայն հնարավոր էր անցնել կրոնափոխվելու համար անհրաժեշտ կրոնական կանոնների գործադրմանը: Պետք էր նույն գործառույթը հետագայում կրկնել համապատասխան տեղական վարչական խորհրդի առաջ: Այս հանգրվանում ներկա էին գտնվելու նաև կրոնափոխվողի մերձավորները և եկեղեցական քահանան, ովքեր հնարավորություն էին ունենալու նրան հետ պահել այդ որոշումից»[60]:

Կրոնափոխությունը օրենքով կարգավորելուց որոշ ժամանակ անց դեպի քրիստոնեություն վերադարձի շարժումն ավելի լայն թափ է ստանում: Դրա հիմնական պատճառը Ղրիմի պատերազմից հետո՝ 1856թ., Փարիզում գումարված հաշտության խորհրդաժողովում Օսմանյան կայսրությանը պարտադր-

[59] Հոգեւորական դատավոր:
[60] Նույն տեղում, էջ 14-15:

ված այն պայմանն էր, ըստ որի՝ նա պարտավոր էր ապահովել մուսուլմանների եւ քրիստոնյաների հավասարությունը: Այդ պահանջը նույն տարում ընդգրկվեց Բարեփոխումների մասին սուլթանական հրովարտակի 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներում:

Այստեղ հարկ է մի փոքր անդրադարձ կատարել կրոնափոխվածների մի մեծ հատվածի՝ դեպի քրիստոնեություն վերադարձին: Բռնի իսլամացվածների մեծ մասը հույս էր փայփայում, որ դա ժամանակավոր երեւույթ է, կգա ժամանակ, եւ իրենք նորից կվերադառնան իրենց պապերի կրոնին: Եւ ահա, կարծես, Թանզիմաթի շրջանում եւ, հատկապես, 1856թ. սուլթանական վերոնշյալ հրովարտակից հետո եկել էր այդ ժամանակը: 1840-50-ական թվականներին վերադարձի շարժումը լրջորեն անհանգստացնում է իշխանություններին: Սկսված գործընթացները կասեցնելու նպատակով ամենուր բացվում են դպրոցներ, ուր դասավանդելու են ուղարկվում մոլեռանդ մոլլաները: Հայոց լեզվով խոսելն արգելվում է եւ համարվում հանցագործություն:

Օգտվելով տեր Վահան Խոյյանի անտիպ հուշերից՝ Հ. Հովակիմյանը հետաքրքիր տեղեկություն է հաղորդում բռնի իսլամացված սեւգետցիների՝ դեպի հայության վերադարձի տապալված մի փորձի մասին: Եւ այսպես՝ պատմում է քահանա Վահան տեր Խոյյանը. «Կայսերական հրովարտակի տրամադրութեան համաձայն, Պոլսէն երեք բարձրաստիճան պաշտօնեաներ եկան Տրապիզոն եւ հոնկէ անցան Սիւրմենէ: Մահմետական Հայերը դիմեցին մեզի ծանոթ Սու Իշմէզօղլուին, յայտնեցին իրենց միտքը եւ խնդրեցին անոր արտօնութիւնն ու պաշտպանութիւնը Պոլսէն եկած Յանձնախումբին մօտ: Աղան խօստացաւ իր օգնութիւնը, բայց յաջորդ օրը խնդիրը տարբեր կերպարանք առաւ: Օֆի մոլլաներն ալ, որոնք 100 տարի առաջ օրթոտոքսութենէ դարձած սեւգետացի մոլեռանդ քարոզիչներ էին, շարժումը կասեցնելու մտքով դիմում կատարեցին իրենց նախկին կրօնքին դառնալու համար: Յանձնախումբը կացութեան լրջութիւնը տեսնելով, թրքական ճկուն խորամանկութեամբ պատրուակ մը ստեղծեց եւ մեկնեցաւ՝ նորէն Տրապիզոն վերադառնալու խօստումով: Սեւ գետացիները շատ ուշ հասկցան իրենց գլխուն խաղացած խաղը»[61]:

Հաչս եւրոպական պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների՝ պաշտոնյաների նման ցուցական այցելությունները որոշ հաջողության հասնում էին, հատկապես, որ հույները կարողացան օգտվել հայտարարված կրոնական ազատություններից. Կոռմի 2-3000 հույներ, ովքեր հայերի հետ միաժամանակ էին իսլամացվել, վերադարձան հունադաւանության[62]: Հույների այս հաջողության մեջ վճռորոշ էր Հունաստանի ցուցաբերած քաղաքական-դիվանագիտական աջակցությունը: Հայերի դեպքում, ինչպես տեսանք մեկ օրինակով, այս որոշումները գրեթե չկիրառվեցին. մինչեւ 20-րդ դարի սկիզբը բռնի կրոնափոխությունը մի իրողություն էր, որի դեմ անզոր էին եւ հայերի ջանքերը, եւ եւրոպական պետությունները, եւ, առավել եւս, Օսմանյան կայսրության՝ Թանզիմաթի շրջանում ընդունված օրենքներն ու որոշումները:

Հայերի (եւ մյուս քրիստոնյա ժողովուրդների) բռնի իսլամացման դարավոր պատմության մեջ այս ժամանակահատվածը որպես առանձին փուլ ենք ներկայացրել եւ կարեւորել հիմնականում այն պատճառով, որ այս շրջանում Օսմանյան կայսրությունում առաջին անգամ կրոնափոխության հարցն ստացավ միջազգային հնչեղություն եւ տեղափոխվեց, թեկուզ հիմնականում ձեւականորեն, իրավական ոլորտ:

---

[61] **Յովակիմ Յովակիմեան** (Արշակունի), նշվ. աշխ., էջ 67-68:
[62] Նույն տեղում, էջ 67:

Չորրորդ փուլ. 1915-1930-ական թվականներ

Հայոց ցեղասպանության շրջանում բռնի կրոնափոխության մասին խոսելիս հետազոտողներից շատերը գրեթե չեն անդրադառնում 1890-ականների կոտորածներին, որոնց զոհ գնաց ավելի քան 300 հազար արեւմտահայ, գրեթե նույնքան էլ արտագաղթեց, որից մոտ 100 հազարը՝ Ռուսաստան, իսկ 150-200 հազարը՝ Եւրոպայի, Աֆրիկայի եւ Ամերիկայի զանազան երկրներ: Որոշ մասն էլ ընդունեց իսլամ: Հայության թիվը երկրում նվազեց՝ ավելի քան 3 միլիոնից հասնելով 2,5 միլիոնի:

Փաստորեն այս կոտորածներով, կրոնափոխությամբ եւ հարկադրված արտագաղթով սկիզբ դրվեց Հայոց ցեղասպանությանը, քանզի դրանք կատարվել են ազգային-կրոնական հատկանիշի հիման վրա[63]: Արեւմտյան Հայաստանում եւ Թուրքիայի Հանրապետության այլ տարածքներում վերապրած կրոնափոխ հայության մի զգալի մասն իսլամացվել է հենց այս շրջանում: Իսլամացվածների այս խմբի մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում թուրք պատմաբան Հիլմար Քայզերը: Ներկայացնելով 1915թ. կոտորածների հետեւանքով որբ մնացած հայ երեխաների ծանրագույն վիճակը՝ հիշեցնում է 1890-ականների իսլամացման հետեւանքով ստեղծված մի հետաքրքիր իրողության մասին. «Տրապիզոնի վալի Զեմալ Ազմի բեյը եւս կիսում էր Խարբերդի իր պաշտոնակցի մտորումները: Բացահայտ դեմ էր արտահայտվում հայ երեխաներին մուսուլման գյուղերի ընտանիքներ ուղարկելու գաղափարին: Բացի այդ՝ հիշեցնում էր, որ 1890-ական թթ. կոտորածներից հետո կրոնափոխ եղածները վերադարձել էին իրենց համայքներ եւ երկրի համար

[63] Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության բանաձեւերը, կոնվենցիան ու հարակից փաստաթղթերը ցեղասպանության մասին:

խնդիր դարձել: Ավելին՝ ասում էր, որ մուսուլման դարձածները նոր շրջանակներում կարեւոր դիրքերի էին հասել»[64]:

Եթե 1890-ականներին իսլամացվածներն արդեն հասարակության մեջ, այսպես ասած, գտել էին իրենց տեղը, անգամ կարեւոր դիրքեր էին զբաղեցնում, ապա նոր իսլամացվողների խնդիրը բավականին բարդ էր. նրանք հաճախ չէին կարողանում խուսափել տեղահանությունից ու կոտորածներից:

Երիտթուրքական իշխանությունները 1915թ. մեծ տեղահանության նախօրեին որոշում են հայերի շուրջ 5 տոկոսին չտեղահանել[65], որովհետեւ երկիրը կմնար առանց արհեստավորների, բժիշկների եւ կենսականորեն այլ անհրաժեշտ մասնագիտությունների տեր մարդկանց: Հինգ տոկոսի մասին տեղեկանում ենք նաեւ ԱՄՆ-ի՝ Խարբերդի հյուպատոս Լեսլի Դեյվիսի հաղորդագրությունից. «Մեկ տարի առաջ այս վիլայեթում եղած գրեթե հարյուր հազար հայերից հիմա հավանաբար չորս հազարից ավելին չի մնացել: Վերջերս տեղեկություն է ստացվել, որ պետք է մնա հինգ տոկոսից ոչ ավելի հայ: Կասկածելի է, թե հիմա այդքան մնացած լինի»[66]:

Տեղահանված հայերը նոր բնակության վայրերում նույնպես պետք է կազմեին փոքրամասնություն. որոշված էր, որ նրանց թիվը չպետք է անցնի մուսուլման բնակչության 10 տո-

[64] http://www.agos.com.tr/haber.php?seo=cocuklar-musluman-ailelerin-yanina-verilerek-asimile-edildi&haberid=6103

[65] **Գրիկէր**, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 162:

[66] **Թաներ Աքչամ**, Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը եւ էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երեւան, 2015, էջ 354, Խարբերդի հյուպատոս Լեսլի Դեյվիսի զեկույցը Կոստանդնուպոլսում դեսպան Հենրի Մորգենթաուին, թվագրված 1915թ. դեկտեմբերի 30: Գտնվում է հետեւյալ տեղում՝ *United States Official Records, ed*. Sarafian, էջ 473:

կոսից: Ողջ մնացած հայերին պետք է բնակեցնեին «Մոսուլի նահանգի հարավային հատվածում՝ հյուսիսային հատվածից հեռու, որը սահմանակից է Վանի նահանգին, [Դեր] Զորի գավառում ու Ուրֆայում (կենտրոնական մասից հեռու), Դամասկոսի նահանգի արեւելյան մասում եւ Հալեպի նահանգի արեւելյան եւ հարավարեւելյան մասերում»[67] :

Ամբողջ երկրով մեկ տարբեր մակարդակի երիտթուրք մի շարք ղեկավարներ (Քավալալը Ռաշիդ բեյը, Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմի բեյը, Խարբերդի վալի Սաբիթ բեյը եւ այլք), սակայն, ընդդիմանում էին այս որոշմանը, քանզի համոզված էին, որ դա վտանգավոր քայլ է. նրանք կողմնակից էին արմատական լուծումների՝ ոչ մի փրկվող չպետք է լիներ: Հիլմար Քայզերը նշում է, որ Խարբերդի վալի Սաբիթ բեյը «...չէր հավատում հայերի կրոնափոխությանը՝ *դեմ դուրս գալով կառավարության ծրագրին* (ընդգծումը իմն է – Հ.Ա.): Դիարբեքիրի վալի Ռեշիդ բեյը եւս շեշտում էր, որ նախկինում կրոնափոխությունների արդյունքները գոհացուցիչ չեն: Ավելին՝ երեխաներին եւ աղջիկներին հայտնի ընտանիքներին տալու հանգամանքը գրավում էր ժողովրդի ուշադրությունը: Վալին նաեւ վստահ էր, որ այս կրոնափոխություններն ապագայում միայն վնասակար էին լինելու, եւ հորդորում էր ոչ մի կերպ թույլ չտալ կրոնափոխությունը»[68]:

Կառավարության այս որոշումը, անկախ իր բուն նպատակից, շատերի համար դարձավ փրկության ելք, մանավանդ

[67] Նշվ. աշխ., էջ 310: BOA/DH. ŞFR., nr. 53/94, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագիր հեռագիրը Կայսերական չորրորդ բանակին, թվագրված 1915թ. մայիսի 23: Միեւնույն տեղեկությամբ մեկ այլ հեռագիր միեւնույն օրն ուղարկվել է Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգներ, տե՛ս BOA/DH. ŞFR., nr. 53/93:

[68] http://www.agos.com.tr/haber.php?seo=cocuklar-musluman-ailelerin-yanina-verilerek-asimile-edildi&haberid=6103

որ տեղահանված եւ աքսորված առաջին քարավանների նկատմամբ գործադրվող անմարդկային բռնությունների եւ կոտորածների լուրերն արդեն տարածվել էին ամենուր: Քիչ չէին նաեւ այն մարդիկ, ովքեր մտածում էին, որ վաղ թե ուշ տեղահանությանը վերջ կտրվի, ամեն ինչ նորից կվերադառնա իր նախկին հունը, իսկ իսլամացումն էլ դիտում էին փրկության ժամանակավոր մի կարգավիճակ, որից հետագայում կարելի էր հրաժարվել՝ վերադառնալով Հայ Առաքելական եկեղեցու գիրկը: Այդ ծրագրով իսլամ ընդունածներից հիշենք հայտնի հայ արձակագիր Երվանդ Օտյանին, ով, հիրավի, կրոնափոխության միջոցով փրկվելով ստույգ մահվանից, հետագայում վերադարձավ իր նախկին կրոնին[69]:

Կառավարության այս որոշումից հետո սկսվում է զանգվածային իսլամացման գործընթացը: Մի քանի օրինակով տեսնենք, թե դա ինչպիսի դրսեւորումներ է ունենում Տրապիզոնի նահանգում՝ այսինքն համշենահայության շրջանում: Այս մասին հավաստի տեղեկություններ են հաղորդում ԱՄՆ-ի եւ եւրոպական պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցներն ու միսիոներները: 1915թ. հուլիսի 10-ին ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան Մորգենթաուն «Խիստ գաղտնի» դասիչով գրությամբ իր կառավարությանը տեղյակ է պահում հայերի նկատմամբ գործադրվող բռնությունների եւ կոտորածների մասին եւ հայտնում, որ փրկվել ցանկացող բազմաթիվ հայեր իսլամ են ընդունում: Նա հենվում է դեպքերի ականատեսի՝ Սամսունում ԱՄՆ-ի հյուպատոս Փիթերի՝ հունիսի 10-ին ուղարկած այն տեղեկության վրա, ըստ որի՝ «Թուրքերը կրոնափոխելու համար շատ մեծ ջանքեր են գործադրում: Մինչ

[69] Տե՛ս **Երուանդ Օտեան**, Անիծեալ տարիներ, 1914-1919 (անձնական յիշատակներ, աշխատասիրութեամբ Գրիգոր Յակոբեանի, Երեւան, 2004, էջ 233-234:

այժմ 150 ընտանիք է մահմեդականություն ընդունել, իսկ մնացածներն ուղարկվել են ներքին շրջաններ... գնացածների մեծ մասը նույնպես ուզում է այդ 150 ընտանիքների օրինակին հետևել»[70]:

Համանման զեկույցներ են ուղարկում նաեւ այլ պետությունների դիվանագիտական ծառայությունները:

Գերմանիայի հյուպատոսը նույն Սամսունից 1915թ. հունիսի 25-ին զեկուցում է, որ կառավարությունը հայերի տներ է ուղարկում մոլեռանդ մուսուլմանների, որպեսզի հայերին համոզեն իսլամանալ, ընդդիմացողներին սպառնում են: Ըստ այս զեկույցի՝ բազմաթիվ հայեր իսլամացվել են, շատերն էլ պատրաստ են դիմելու այդ քայլին: Հյուպատոսի զեկույցն ավարտվում է հետեւյալ նախադասությամբ. «Սամսունի շրջակայքի բոլոր հայկական գյուղերն իսլամացվել են»[71]:

Համանման տեղեկություններ է հաղորդում Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոսը: Այս տեղեկությունների հիման վրա Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Վանգենհայմը իր հունիսի 26-ին զեկույցում գրում է. «Տրապիզոնում հայերը զանգվածային կերպով իսլամ են ընդունում՝ աքսորից փրկվելու և իրենց կյանքն ու գույքը պաշտպանելու համար»[72]:

Հայկական աղբյուրների հայտնած տեղեկություններում նույնպես պատկերը գրեթե նույնն է: Հայ հեղափոխական դաշնակցության բալկանյան գրասենյակի 1915 թ. օգոստոսին ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուին ուղարկած մի զեկույցի համաձայն՝ «Մահմեդականություն են ընդունել Գիրեսունում 400 ընտանիքից 200-ը, Օրդուում՝ 250 ընտանիքից 160-ը»[73]:

Ինչպես ողջ կայսրության մեջ, այնպես էլ Տրապիզոնի նահանգում կիրառվում է խմբերով կրոնափոխվածներին մուսուլմաններով բնակեցված բնակավայրերում ցրելու քաղաքականությունը: Նպատակը շատ պարզ էր. թուրք իսլամական միջավայրում հեշտ էր նրանց ձուլել, իսկ համատեղ ապրելիս, թեկուզ կրոնափոխ, հայերը կպահպանեին սեփական լեզուն, մշակույթը, բացառված չէր, որ պահպանեին նաեւ կրոնը՝ երբեւե դրան վերադառնալու հույսով: Բացի այդ՝ առանձին-առանձին այդ մարդիկ անզոր կլինեին համատեղ ընդվզումների, ինչը չէր բացառվում եթե ոչ այդ պահին, ապա գոնե ապագայում:

Արդեն հիշատակված Սամսունում ԱՄՆ-ի հյուպատոս Վ. Փիթերը իր ղեկավարությանը հայտնում է, որ «Սամսունի մյութեսարիֆը իրեն հայտնել է, թե կրոնափոխված հայերը փոքր խմբերով ցրվելու են այնպիսի մոտակա նահանգներում և գա-

[70] Թաներ Աքչամ, Հայերի բռնի իսլամացումը. Լռություն, ժխտում եւ ուծացում, Երեւան, 2016, էջ 135-136: BOA/DH.ŞFR., nr 54/100, 1915 թ. հունիսի 22-ին Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայից Վանի նահանգապետ Զևդեթ, Տրապիզոնի նահանգապետ Զեմալ Ազմի, Էրզրումի նահանգապետ Թահսին, Բիթլիսի նահանգապետ Մուստաֆա, Մամուրեթյուլազիզի նահանգապետ Սաբիթ, Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդ և Սվասի նահանգապետ Մուամմեր բեյերին ուղարկված ծածկագիր հեռագիրը:

[71] Նույն տեղում, էջ 137, DE/PA-AA/R 14086, Սամսունի հյուպատոս Կուքոֆի՝ 1915 թ. հուլիսի 4-ի զեկույցը (Կուքոֆն իր զեկույցում վկայակոչում է նաև իր՝ ավելի վաղ՝ հունիսի 25-ին ուղարկած հեռագիրը):

[72] Նույն տեղում, էջ, DE/PA-AA/R14086, Արտակարգ և լիազոր դեսպան Վանգենհայմից կանցլեր Բեթման Հոլվեգին 1915 թ. հուլիսի 7-ին ուղարկված զեկույցը:

[73] Նույն տեղում, էջ 137-138, "NA/RG59/867.4016/122, «Հայ ժողովրդի բնաջնջումը Թուրքիայում», Բուխարեստում Դաշնակցության գրասենյակի՝ 1915 թ. սեպտեմբերի 5-ի զեկույցը, տե՛ս Ara Sarafian (ed.), *United States Official Record on the Armenian Genocide*, էջ 163:

վառներում, ինչպիսիք են Տրապիզոնը, Գիրեսունը, Ֆաթսան: Հ-յուպատոսի տված տեղեկությունները ճիշտ են: Իրապես էլ Սամսունի մյութեսարիֆը 1915 թ. հուլիսի 9-ին Ներքին գործերի նախարարությանն իր ուղարկած հեռագրում հաղորդում է, որ Սամսունում դատարկման գործողությունն ավարտվել է, իսկ նրանք, ովքեր մնացել են կրոնափոխ լինելու պատճառով, մեկական կամ երկուական հոգով ցրվել են իսլամական և գյուղական թաղամասերում»[74]:

Կրոնափոխվածների բնակեցման հարցում թեեւ, ինչպես նշեցինք, իշխանություններն ունեին այլ մոտեցում, սակայն տեղական իշխանությունները հաճախ դիմում էին վերադաս ատյաններ՝ խմբերով կրոնափոխվածներին իրենց բնակության վայրերում թողնելու խնդրանքով: Օրինակ՝ 1915թ. հուլիսի 1-ին Օրդու քաղաքի իմամի եւ մուֆթիի ղեկավարությամբ մի խումբ թուրքեր դիմում են Ներքին գործերի եւ Արդարադատության նախարարություններին՝ խնդրելով, որ «...իրենց հայ հարևանները կրոնափոխ են եղել, և որ նրանք ևս չաքսորվեն ու մնան

[74] Նույն տեղում, էջ 139, BOA/DH.EUM, 2. Şube, nr. 10/78/1, Զանիկի մյութեսարիֆ Նեջմի բեյից 1915 թ. հուլիսի 9-ին ուղարկված հեռագիրը, որի ամբողջական տեքստը հետևյալն է. «Սամսունից դուրս հանված հայերի վերջին քարավանը չորս օր առաջ հոգևոր առաջնորդների հետ միասին հեռացվել է, վտանգավոր լինելու պատճառով դրանից ավելի վաղ Ալաչամ աքսորվածների վերջին քարավանն էլ այսօր ուղարկվել է Քավաքից Հավզա տանող ճանապարհով, և այդ կերպ հեռացման գործողությունն ավարտին է հասցվել, իսկ կրոնափոխվելու համար անհրաժեշտ գործողություններն իրականացնելու նպատակով մնացածները, իրենց ավաններն ու գյուղերն անմիջապես փոխելու պայմանով, մեկական կամ երկուական հոգով ցրվել են մահմեդական և գյուղական թաղամասերում, և նրանց փոխարեն տեղավորվում է գաղթական ու փախստական և իսլամական բնակչություն»:

Օրդուում, ինչպես դա արվել է որոշ այլ շրջաններում»[75]:

Ուշագրավ է, որ նման դիմում-խնդրագրեր էին ուղարկում նաեւ հայերը: Հասկանալի է, որ դրանք կազմակերպվում էին տեղական իշխանությունների, հատկապես՝ հոգեւորականների միջոցով: Ահա նման մի գրություն, որ համապատասխան ատյան է ուղարկվել օգոստոսի 28-ին. «Խնդրում ենք, որ հրամայեք և հաճեք, որպեսզի ոչ մի ուժի և ազդեցության տակ չգտնված, բացառապես իրական աստվածային հավատքին և մեր խղճի ձայնին ապավինած՝ գյուղերի և քաղաքների հավատարիմ ստրուկներիս նկատմամբ, ընտանյոք հանդերձ իսլամի պատվին արժանանալու համար կիրառվեն սուրբ շարիաթի դրույթները, և որ մենք ներգրավվենք փրկված իսլամական խմբի սովորույթներում, և որ դա նշվի մեր գրանցման մեջ»[76]:

Ստեղծված իրավիճակում Թալեաթն ստիպված էր նոր հրաման արձակել, որով կասեցնում էր բոլոր ցանկացողների իսլամացման գործընթացը, բայց ո՛չ իսլամացումն ընդհանրապես: Թուրք պատմաբան Ֆուադ Դյունդարը հստակություն է մտցնում հարցի մեջ. այսինքն՝ կասեցվում է միայն չնախատեսված անձանց իսլամացումը, իսկ ովքեր հարկավոր էին պե-

[75] Նույն տեղում, էջ 141, BOA/DH.EUM, 2. Şube, nr. 8/61-a/1, Տ□ս Արդարադատության և Ներքին գործերի նախարարություններին մոլլա Ալիզադե Մուստաֆայի, մեդրեսեի ուսուցիչ Հալիմի, Գյոզյու Քանլըզադե Թահսինի, Իմամզադե Ռեջեփի, մյուֆթի Սաբրիի, Շեյիզադե Մուստաֆայի, Ռաշազադե Հյուսեյինի, Ֆելեքզադե Սյուլեյմանի, մեդրեսեի ուսուցիչ Ալիի, մեդրեսեի ուսուցիչ Համդիի և այլոց ստորագրություններով 1915 թ. հուլիսի 1-ին ուղարկված խնդրագիրը:

[76] Նույն տեղում, BOA/DH.EUM., 2. Şube, nr. 9/42/1, «Օրդուի քաղաքների և գյուղերի ընդհանուր բնակչության» անունից 1915 թ. հունիսի 28-ին Ներքին գործերի նախարարությանն ուղարկված հեռագիրը:

տությանը (վերը հիշատակված 5 տոկոսը), նրանց իսլամացումը ոչ միայն չի կասեցվում, այլեւ Թալեաթի նոր հրամանով դարձյալ հիշեցվում է, որ «...պետք է ընդունել միայն այն ընտանիքների դավանափոխության դիմումները, որոնց թույլ է տրվել մնալ Անատոլիայում»[77]:

Իսլամացման ցանկերում չընդգրկվածների մասին հրամանը նույնպես հստակ է. Թալեաթը հրամայում է, որ այդ մարդիկ, եթե անգամ կրոնափոխվեն էլ, դարձյալ պետք է ուղարկվեն աքսորի համար նշանակված վայրերը[78]: Այս առումով ուշագրավ է Տրապիզոնի ընդհանուր նահանգապետի խոսքը կրոնափոխության ցանկություն հայտնած հայերին. «Մահմեդականություն ընդունած հայը կտեղահանվի իբրեւ մահմեդական հայ»[79]: Այս մասին տեղեկացնում է Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Բերգֆելդը իր հուլիսի 9-ի զեկույցում: Որոշ ժամանակ անց էլ հայտարարում է, որ հավատափոխ լինելու դիմումները չընդունեն, որովհետեւ նմանատիպ դիմումները «մոլորեցնող են ու ժամանակավոր»: Չնայած կենտրոնից եկած կտրուկ

[77] **Ֆուադ Դյունդար**, Այն թեզը, որ իթթիհադականներն անգամ չեն արտահայտել,
http://www.radikal.com.tr/Radikal.aspx?aType=RadikalHaberDetayV3&ArticleID=825101&Date=27.04.2011&CategoryID=99

[78] **Թաներ Աքչամ**, Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը եւ էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երեւան, 2015, էջ 365, BOA/DH. ŞFR, nr. 54/254, Ներքին գործերի նախարարության՝ Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Բիթլիսի, Հալեպի, Դիարբեքիրի, Տրապիզոնի, Մամուրեթյուլազիզի, Մոսուլի, Վանի, Ուրֆայի, Քյութահիայի, Մարաշի, Իչելի, Էսքիշեհիրի նահանգներ և գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 1:

[79] Նույն տեղում, Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Հայնրիխ Բերգֆելդի զեկույցի թարգմանությունը՝ թվագրված 1915 թ. հուլիսի 9: Գտնվում է հետեւյալ տեղում՝ United States Official Record on the Armenian Genocide, ed. Ara Sarafian , 154.

հրամանին՝ նահանգապետերն ու գավառապետերը շարունակում են ընդունել կրոնափոխ լինելու մասին դիմումները, որից հետո Թալեաթը կտրականապես արգելում է կրոնափոխությունը՝ «տեղահանությունից ազատվածներից ու կենտրոնի հրամանով իրենց տեղում մնացածներից բացի: Մի ճանապարհ է մնում՝ ամուսնությունը: Իթթիհադականները հրամայում են միայն ամուսնանալու պայմանով ընդունել մահմեդականացման հայցերը: Այսինքն՝ այդ հրամանով, ըստ էության, հայտնում են, որ ընդունելի է միայն մուսուլման տղամարդկանց հետ ամուսնացող հայ կանանց կրոնափոխությունը»[80]:

Փաստորեն բավականին լայն տարածում գտած այն տեսակետը, թե կրոնափոխությունը միանշանակ կերպով ազատում էր տեղահանությունից կամ փրկում մահից, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը, «Սակայն կարելի է մի ընդհանրական օրինաչափություն մատնանշել. այն է՝ իսլամացումը ձեւական նախապայման է հանդիսացել գոյատեւման համար»[81]:

Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ հաճախ իսլամացածները նույնպես չեն խուսափել կոտորածներից: Ստամբուլի ռազմական դատարանի 1919 թ. փետրվարի 18-ի՝ թվով 7-րդ նիստում լսել են ազգությամբ հույն վկա Հրիստաքի Անդրեյադիսի ցուցմունքները: Նա մանրամասնորեն պատմել է Յոզղատի հայերի տեղահանության եւ կոտորածների մասին այն ամենը, ինչ տեսել է 1915 թ. հուլիսի 24-ից սկսած: Այդ պատմության մեջ դրվագ կա նաեւ իսլամացած հայերին կոտորելու վերաբերյալ. «Այնուհետեւ ժողովրդին զույգ-զույգ տարել են Բաղլըջայի եւ Բեզլիհանի կողմերը: Լցրել են մի փարախ, ո-

[80] **Ֆուադ Դյունդար**, նշվ. աշխ:

[81] **Կարեն Հրանտի Խանլարեան**, Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Ե., 2009 էջ 38:

րի շուրջը ճահճոտ է եղել, եւ այնտեղից երեք-երեք կամ հինգ-հինգ հանելով՝ սպանել: Փախած-թաքնվածներին բացահայտելու նպատակով ասել էին, թե իսլամ ընդունածները փրկվելու էին, սակայն երբ փախածները դուրս էին եկել իրենց թաքստոցներից, նրանց եւս կոտորել էին»[82]:

1915 թ. նոյեմբերին, երբ արդեն գրեթե ողջ հայությունը տեղահանված կամ բնաջնջված էր, այս կամ այն կերպ փրկվածներին դարձյալ պարտադրեցին կրոնափոխություն. «1915 թ. նոյեմբերի 5-ին շրջաններ առաքված հատուկ գրությամբ ծանուցվում է, թե «կրոնափոխների պահանջները պետք է ընդունվեն անկախ այն բանից՝ նրանք աքսորվել են, թե ոչ»: Իսկ 1916 թ. գարնանից սկսած՝ դավանափոխությունն այլեւս հարկադրական է դառնում: Հայերին կանգնեցնում են «կա՞մ մուսուլման դառնալու, կա՞մ էլ Դեր Զոր աքսորվելու» երկընտրանքի առաջ: Հայերը քաջապես տեղյակ են լինում, որ Դեր Զորի անապատներ ասելով՝ կոտորած եւ բնաջնջում նկատի ունեն: Այդ տարեթվից սկսած՝ ողջ մնացած յուրաքանչյուր հայ մահմեդական է դառնում: Հայերին թույլ է տրվում վերստին նախկին կրոնին վերադառնալ 1918 եւ 1919 թթ. հրապարակված շրջաբերականներով»[83]:

Նախկին կրոնին վերադառնալու որոշումն, անշուշտ, Օսմանյան կայսրության բարի կամքով կամ նոր ազգային քաղաքականությամբ չէր պայմանավորված, այլ Առաջին աշխարհամարտում կրած պարտության հետեւանք էր: Սակայն այս

[82] **Մելինե Անումյան**, Յոզղատի հայության տեղահանության եւ կոտորածների դատավարությունը՝ ըստ օսմանյան «Մեմլեքեթ» օրաթերթի, «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2 (8), Երեւան, 2013թ., էջ 37-38:

[83] **Թաներ Աքչամ**, Պետությունն ընկել է իսլամացած հայերի հետեւից, http://www.taraf.com.tr/haber/devlet-musluman-ermeninin-pesinde.htm

շրջաբերականներն ընդամենը ծխածածկույթ էին, քանզի սրանց զուգահեռ շրջաններ էին առաքվում գաղտնի շրջաբերականներ, որոնցով բոլորովին այլ հրահանգներ էին տրվում: Կ. Խանլարյանն իր գրքում անդրադառնում է Թուրքիայի ներքին գործերի նախարարության մի ուշագրավ շրջաբերականի, որը հրատարակել է «The Minneapolis Morning Tribune» թերթը դեռեւս 1920 թ. հունվարի 4-ի համարում. «Հաւանաբար 1919 թ. նոյեմբերի 28 թւակիր սոյն գաղտնի շրջաբերականի հիման վրայ կարգադրուել էր, որ բոլոր հայերը, որոնք զերծ են մնացել տեղահանութիւնից կամ վերադարձել են իրենց բնակավայրերը, պիտի անխտիր իսլամացուէին: Իսլամացուելու դէպքում միայն նրանք կը վերստանային իրենցից առգրաւուած ունեցուածքը: Շեշտւում էր նաեւ, որ մահմեդականների հետ ամուսնացած հայ կանանց եւ աղջիկներին են պատկանելու տեղահանուած հայերի բնակարանները եւ այլն[84]:

Պատերազմի ավարտից հետո փրկված հազարավոր հայեր վերադառնում են հայրենիք եւ փորձում վերահաստատվել: Երիտթուրքերի պարագլուխները փախել էին երկրից, նոր կառավարությունը հայերի կոտորածների ողջ պատասխանատվությունը դնում էր իթթիհադականների վրա: Ստամբուլի ռազմական ատյանը նույնիսկ դատավարություն սկսեց նրանց դեմ: Ուշագրավ է, որ այս դատավարության նիստերից մեկում վկայություն է տալիս կյանքը փրկելու համար ստիպված իսլամ ընդունած եւ հետագայում իր նախկին կրոնին վերադարձած մի կին՝ յոզղատցի Օժեն Ղազարոսը. «Դատախազի այն հարցմանը, թե Օժենն ինչպես է փրկվել, կոտորածից, վերջինս պատասխանեց, թե իսլամ է ընդունել եւ այդպիսով ազատվել մահից»[85]:

[84] **Կարեն Հրանտի Խանլարեան**, նշվ. աշխ., էջ 39-40:

[85] **Մելինե Անումյան**, Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երեւան, 2011, էջ 162:

Թեեւ, ինչպես տեսանք մի-երկու օրինակով, բազմաթիվ դիմումներ են եղել մուսուլման հոգեւորականների, տեղական իշխանությունների եւ թուրք հարեւանների կողմից[86], որ կրոնափոխված հայերին չտեղահանեն, սակայն իշխանությունները հետեւողականորեն առաջ են տարել իրենց ծրագիրը, այն է՝ բացի անհրաժեշտ քանակից, որի մասին նշվեց, բոլոր հայերին աքսորել անապատներ, ճանապարհին ոչնչացնել՝ որքան հնարավոր է, իսկ անապատ հասածների համար ստեղծել այնպիսի պայմաններ, որ մի կերպ փրկվածները մահանան անապատում: Սակայն, ինչպես նշում է Թ. Աքչամը, կան փաստաթղթեր, որոնք ապացուցում են, որ մուսուլման բնակչության կողմից կրոնափոխվածների տեղահանությանը անգամ հուլիսի 1-ից հետո հակադրվելը եւ իշխանություններին դիմելը որոշ արդյունք տվել է: Ահա նման մի դիմում-նամակ, որ իշխանություններին է ուղարկվել հուլիսի 24-ին՝ Օրդուի Մեսուդիյե գավառից, որում նամակի տակ ստորագրած՝ Շարիաթի դատարանի գլխավոր քարտուղար Ռահիֆը, գյուղաքաղաքի իմամ Արիֆը, մյուֆթի Իբրահիմը, Սերդարզադե Մուստաֆան եւ Ալի Չավուշզադե Իսմայիլը գրում են, որ Օրդու քաղաքի վերջին հայերի քարավանը (15 տուն)՝ բաղկացած մասամբ թույլ կանանցից և երեխաներից, հասել է իրենց գյուղաքաղաք, եւ խնդրում, որ այդ մարդիկ չշարունակեն աքսորի ճանապարհը եւ բնակեցվեն մի հարմար տեղում, քանի որ ունեն կրոնափոխության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոք վկայում են, որ սրանք

[86] Այս մասին առավել մանրամասն տես Թաներ Աքչամի հետեւյալ աշխատություններում. 1. Հայերի բռնի իսլամացումը. Լռություն, ժխտում եւ ուծացում, Երեւան, 2016: 2. Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը եւ էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երեւան, 2015:

կամավոր են իսլամ ընդունել. «Այդ կրոնափոխները... մի մոտակա գյուղաքաղաքում իրենց աքսորի դեմ որևէ միջոց ձեռնարկելու համար մզկիթի դռների մոտ և փողոցներում իսլամական բնակչությանը դիմելով և աղիողորմ արտասվելով՝ օգնություն են հայցում: Հետևաբար՝ քանի որ գիտենք, որ մեր գերագույն կառավարությունը ևս համաձայն չէ թույլ տալ, որ իրենց կրոնով ամեն ձևով և լիովին շարիաթին և օրենքներին համապատասխանող այդ օսմանցիները տուժեն, մեր իսլամական գերագույն կառավարությանը խնդրում ենք, որ նրանք ոչ թե ուղարկվեն, այլ բնակեցվեն մի հարմար վայրում»[87]:

Այն, որ կենտրոնական իշխանությունները եւ անձամբ Թալեաթը ամենայն ուշադրությամբ էին հետեւում գործընթացին եւ տեղյակ էին բոլոր մանրամասնություններից, ցույց են տալիս փաստաթղթերը: Ահա երկու նմուշ դրանցից. առաջին հեռագիրը վերաբերում է կրոնափոխության արգելքին. «Այն դեպքում, երբ բազմիցս է հաղորդվել, թե կրոնափոխությունները չեն կարող ընդունվել, ինչո՞ւ են կրոնափոխության որոշ դեպքեր դեռ ընդունվում»[88]:

Երկրորդը վերաբերում է տեղահանության խնդրին. «Բացառապես անձնական շահերից բխող այդ հավանական կրոնափոխություններն ըստ էության ոչ մի պաշտոնական արժեք չունեն, ...բացարձակապես բացառություն չանել այդ կերպ իրենց բնակավայրերում մնալու միջոցի դիմող կրոնափոխների նկատմամբ և ... չարաշահումներ թույլ չտալ այս ուղղությամբ»[89]:

Պետք է ենթադրել, որ մինչեւ հուլիսի 1-ը տեղահանությունից փրկվածները հիմնականում այն մարդիկ էին, ովքեր

[87] Թաներ Աքչամ, Հայերի բռնի իսլամացումը. Լռություն, ժխտում եւ ուծացում, Երեւան, 2016, էջ 146-147:
[88] Նույն տեղում, էջ 147:
[89] Նույն տեղում, էջ 148:

մտնում էին կառավարության կողմից սահմանված 5 տոկոսի մեջ, ուստի հուլիսի 1-ից հետո անգամ կամավոր կրոնափոխվածներին էին աքսորում: Իհարկե, այստեղ դեր ունեցավ նաեւ այն հանգամանքը, որ վերջիններիս թիվը սպասվածից շատ էր:

Եթե Օսմանյան կայսրությունը ձգտում էր ստեղծել ազգային պատկանելության տեսակետից մի հսկայական իսլամադավան զանգված՝ օսմանցի ազգ անորոշ սահմանմամբ, ապա երիտթուրքական իշխանությունները եւ, հատկապես, հիմնականում երիտթուրքերից բաղկացած հանրապետական Թուրքիայի ղեկավարությունը ունեին հստակ ծրագիր՝ ստեղծել թուրք ազգ: Ուստի չէին կարող թույլ տալ հայերի զանգվածային կրոնափոխություն, քանի որ Թալեաթը (նաեւ՝ իթթիհադի մյուս առաջնորդները) գիտեին, որ դա հայերի կողմից իրենց հողեր չլքելու միջոց է, որը կարող էր հետագայում լուրջ վտանգ ներկայացնել: Ուստի նրանք թույլ էին տալիս այնպիսի թվով հայերի կրոնափոխություն եւ դրանց համամասնորեն ցրում-բաժանում թուրք-իսլամական բնակավայրերում (5 տոկոս), որը հեշտությամբ կձուլվեր:

Պոնտոսի վերջնական պարպումը քրիստոնյա բնակչությունից

1918թ. զինադադարից հետո Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Օսմանյան կայսրությունը ստիպված էր փոխել քաղաքականությունը: Երիտթուրքերի կառավարությունը փախավ երկրից. նոր իշխանություններն ամեն կերպ փորձում էին փրկել կայսրության վերջին բեկորները՝ չհակադրվելով դաշնակից երկրների կառավարություններին: Բնականաբար առաջին քայլերից մեկը եղավ ազգային փոքրամասնությունների, հատկապես՝ հայերի նկատմամբ վերաբերմունքի կտրուկ փոփոխությունը: Ցեղասպանության տարիներին ընդունված բազմաթիվ որոշումներ բեկանվեցին, աքսորի ճանապարհներին եւ անապատներում մի կերպ վերապրած հայերին թույլ տրվեց վերադառնալ իրենց տները, բռնի կրոնափոխվածներն իրավունք ստացան վերադառնալ իրենց կրոնին:

Այս ամենին գումարվեց Հայաստանի Հանրապետության ստեղծման իրողությունը, որը համայն հայությանը նոր հույսեր ներշնչեց, որոնք կարծես կյանք էին ստանում Փարիզի խաղաղության վեհաժողովում: Այդ բանակցությունների ընթացքում ակնհայտ էր դառնում մեկ բան՝ ինչպիսին էլ լինեին Հայաստանի Հանրապետության ապագա սահմանները արեւմուտքում եւ հարավ-արեւմուտքում, կարծես բոլորը համաձայն էին Սեւ ծովի պոնտական ափը Հայաստանի կազմում տեսնելու գաղափարի հետ: Ի վերջո այդպես էլ եղավ. 1920թ. օգոստոսի 10-ին թուրք պատվիրակությունը Փարիզում, ի թիվս պայմանագրի կողմ այլ պետությունների, ստորագրեց Սեւրի պայմանագիրը, որի 89-րդ հոդվածը սահմանների մասին ասում է հետեւյալը. «Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև պայմանագիրն ստորագրած բոլոր պետությունները, համաձայնում են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի վճռին Թուրքիայի և Հայաստանի միջև Էրզրում, Տրապիզոն, Վան և Բիթլիս վիլայեթներում սահմանների որոշման հարցում և ընդունում են վերոհիշյալի շուրջ նրա յուրաքանչյուր որոշում, ինչպես նաև ընդունում են Հայաստանի՝ դեպի ծով ելքի և նշված սահմաններին հարող ցանկացած թուրքական տերիտորիայի ապառազմականացման վերաբերյալ նրա կարգադրությունը»:

Կարծես ի վերջո լուծում էր ստանալու դարեր շարունակ առկախ մնացած պոնտահայության խնդիրը: Սակայն շուտով իրավիճակն սկսվեց փոխվել հոգուտ թուրքերի: Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից որպես հանցագործ հետախուզման մեջ գտնվող զորավար Մուստաֆա Քեմալը, օգտ-

վելով հաղթող պետությունների միջեւ ի հայտ եկած որոշ տարաձայնություններից եւ հասկանալով, որ, ի դեմս բոլշեւիկյան Ռուսաստանի, կարող է ունենալ հավատարիմ դաշնակից ընդդեմ Անտանտի երկրների, դաշինք կնքեց Ռուսաստանի հետ եւ նրա ահռելի ֆինանսական եւ ռազմական աջակցությամբ սկսեց, այսպես կոչված, ազգային-ազատագրական պատերազմ: Օսմանյան կայսրությունը, որ փաստորեն մասնատվել էր, եւ կարծես ոչինչ չէր կարող նրան փրկել, բոլշեւիկյան Ռուսաստանի աջակցությամբ կարողացավ կայսրության մի մեծ հատվածի վրա հռչակել նոր պետություն՝ Թուրքիայի Հանրապետություն անունով:

Այս գործընթացներին զոհ գնաց ոչ միայն հայության հույսը, այլեւ Օսմանյան կայսրության համաներմանը հավատացած եւ երկիր վերադարձած հայության հիմնական զանգվածը: Ազգային–ազատագրական պայքարի անվան տակ Մուստաֆա Քեմալը շարունակեց հակահայկական քաղաքականությունը՝ ամենուր բնաջնջելով հայության այն բեկորները, որոնք մի կերպ փրկվել էին կամ, հավատալով համաներմանը, վերադարձել իրենց տները: Ինչ որ չհասցրեց անել կոտորածների եւ տեղահանությունների միջոցով, որոշեց եզրափակել խաղաղ պայմաններում՝ խաղաղ միջոցներով, քանի որ 1923թ. Լոզանի պայմանգիրը կաշկանդում էր նրան:

Խոսելով 1923 թ. հետո փոքրամասնությունների իսլամացման-թրքացման գործընթացների մասին՝ նախ պետք է նշել, որ այն տեղի էր ունենում 1923 թ. կնքված Լոզանի պայմանագրով Թուրքիայի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համապատկերում. այսինքն՝ հաչս աշխարհի, մանավանդ Լոզանի պայմանագրի տակ ստորագրած պետությունների՝ Թուրքիան պարտավորվում էր պաշտպանել փոքրամասնությունների իրավունքները:

Դեռեւս 1910 թ. Միություն եւ առաջադիմություն կուսակցության տեղական կոմիտեի՝ Սալոնիկում կայացած գաղտնի նիստում Թալեաթը հստակ շարադրում է հայերի (նաեւ՝ կայսրության քրիստոնյա այլ ժողովուրդների) ցեղասպանության ծրագիրը. «Դուք գիտեք, որ սահմանադրությամբ մահմեդականների եւ քրիստոնյաների հավասարություն է հաստատվել, բայց դուք բոլորդ միասին եւ ամեն մեկդ առանձին գիտեք եւ զգում եք նաեւ, որ դա անիրականանալի գաղափար է: Շարիաթը, մեր անցյալի ամբողջ պատմությունը, հարյուր հազարավոր մահմեդականների զգացմունքները եւ նույնիսկ իրենց՝ քրիստոնյաների զգացումը, որոնք համառորեն դիմադրում են իրենց օսմանականացման ամեն մի փորձի դեմ, անհաղթահարելի պատնեշ են իսկական հավասարության համար: Ուստի հավասարության մասին խոսք անգամ չի կարող լինել մինչեւ այն ժամանակ, քանի դեռ մենք հաջողությամբ չենք պսակել կայսրության օսմանականացման մեր նպատակը»[90]:

Նորաստեղծ Թուրքիայի Հանրապետության ղեկավարության համար ստեղծվել էին վերոնշյալ ծրագրերն ավարտին հասցնելու նպաստավոր պայմաններ.

Նախ՝ եթե 1870-80-ական թվականներին Թուրքիայի հիմնական զինակիցն ու բարեկամը Մեծ Բրիտանիան էր, ապա Խորհրդային Միության ստեղծումից հետո այդ զինակիցների թիվը կտրուկ ավելացավ, կամ առնվազն պակասեց թշնամիների թիվը Արեւմուտքում:

Երկրորդ՝ Թուրքիայում գրեթե մեկ տասնամյակ շարունակվող կոտորածների, տեղահանությունների, փոխանակությունների հետեւանքով ժողովրդագրական պատկերն արդեն կտրուկ փոխվել էր. թուրք-իսլամական տարրը բացարձակ մե-

[90] Նույն տեղում, էջ 8-9:

ծամասնություն էր:

Երրորդ՝ Լոզանի դաշնագրով Թուրքիայի համար փոխվեց նաեւ ազգային-կրոնական փոքրամասնություն հասկացության բուն բովանդակությունը: Ճիշտ է, Թուրքիան թեեւ նույն դաշնագրով ստիպված էր ընդունել երեք ազգերի՝ հայերի, հույների եւ հրեաների՝ կրոնական փոքրամասնություն լինելու հանգամանքը, բայց մյուս բոլոր իսլամադավան ժողովուրդները՝ քրդեր, չերքեզներ, լազեր, թաթարներ, թուրքմեններ, վրացիներ, զազաներ, բոշնաղներ, արաբներ, կարափափախներ, սուդանցիներ, ղրղըզներ, աբխազներ, օսեր, բոշաներ, նաեւ՝ իսլամացած հույներ եւ հայեր (ներառյալ՝ համշենցիները), ալեւիներ, ոչ մահմեդական եզդիներ եւ այլ մեծ ու փոքր էթնոկրոնական խմբեր չճանաչվեցին փոքրամասնություն, այսինքն՝ համարվեցին թուրքեր: Ըստ էության՝ սրանք այն փաստական (ստեղծված իրավիճակը) եւ, հատկապես, միջազգայնորեն ճանաչված իրավական (Լոզանի դաշնագիրը) հիմքերն էին, որոնց վրա ձեւակերպվեց նորաստեղծ հանրապետության սահմանադրության այն հոդվածը, ըստ որի՝ Թուրքիայի բոլոր քաղաքացիները թուրքեր են: Այստեղ հստակեցնենք, որ հայերը, հույները եւ հրեաները ճանաչվել էին ոչ թե ազգային, այլ՝ կրոնական փոքրամասնություն:

Հանրապետական Թուրքիայի ղեկավարությունն այս նպատակի վերջնական իրագործման համար առանձնապես մեծ դժվարություններ չուներ: Հարկավոր էր ուղղակի այդ գործն անել առանց մեծ աղմուկի եւ ցնցումների: Կ. Խանլարյանը ճիշտ է նկատել, թե «Լոզանի դաշնագրի մի շարք տրամադրութիւններ Քեմալ Աթաթուրքին հարկադրում էին մեղմ եւ զգուշաւոր վերաբերմունք ցուցաբերել կրօնական փոքրամասնութիւնների հանդէպ»[91]:

[91] Կարեն Հրանտի Խանլարեան, նշված աշխատությունը, էջ 37:

Սակայն ամեն ինչ այնքան էլ հեշտ չէր: Լոզանի պայմանագրի կնքումից երկու տարի անց Թուրքիայի վարչապետ Իսմեթ Ինոնյուի հայտարարությունը («Ինչ գնով ուզում է լինի, մենք թրքացնելու ենք մեր երկրում ապրողներին, իսկ թուրքերի եւ թրքականության դեմ դուրս եկողներին՝ ոչնչացնելու» իր մեջ ունի նաեւ մտահոգություն՝ «Ինչ գնով ուզում է լինի»: Այդ գինը, ինչպես կտեսնենք, շատ մեծ եղավ, որը Թուրքիային կանգնեցրեց նույնիսկ պետականությունը կորցնելու վտանգի առջեւ:

Այն, որ Մուստաֆա Քեմալը շարունակելու էր երիտթուրքերի քաղաքականությունը, զարմանալի չէ, քանի որ ինքը եւ իր կառավարության գրեթե բոլոր անդամները երիտթուրքեր էին: Նրա ազգային, ռազմական, պետական եւ քաղաքական գործունեությունը հասկանալու եւ գնահատելու համար «Չպետք է մոռանալ, որ Մուստաֆա Քեմալն ինքը, Յունուս Նադիի բնորոշմամբ, «ամենամեծն ու առաջինն էր երիտթուրքերի մեջ», եւ որ Թուրքիայի Հանրապետության բոլոր հիմնադիրները՝ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, եղել են իթթիհադականներ: Աթաթուրքը երբեք չի թաքցրել, որ «իր զգացմունքների հայրը եղել է Նամըք Քեմալը, իսկ գաղափարներինը՝ Զիա Գյոքալփը»: Նույնիսկ որպես Թուրքիայի Հանրապետության հռչակման ամսաթիվ է ընտրվել հոկտեմբերի 29-ը, քանի որ 1907 թ. հոկտեմբերի 29-ին Մուստաֆա Քեմալն անցել էր Իթթիհադի շարքերը»[92]:

Ինչպես տեսնում ենք, ազգային քաղաքականության հարցում թե սուլթանը, որը 1894-1996 թթ. կոտորեց մոտ 300 հազար հայ՝ հիմք դնելով Հայոց ցեղասպանությանը, թե՛ սահմանադրական երիտթուրքերը, թե՛ աշխարհիկ-ժողովրդավար Մուստաֆա Քեմալն առանձնապես շատ չէին տարբերվում,

[92] Մելինե Անումյան, Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921թթ. և 1926 թ.), Երեւան, 2013 թ., էջ 155-156:

իսկ եթե կային որոշ տարբերություններ, ապա դրանք ընդամենը մարտավարական բնույթի էին: Ի դեպ՝ Քեմալը նույնպես կոտորեց մոտ 300 հազար հայ, բայց նրա այս վայրագությունները նույնիսկ թուրք որոշ իսկապես առաջադեմ եւ լուրջ պատմաբաններ փոքր-ինչ վերապահությամբ են գնահատում՝ չկարողանալով կամ չցանկանալով այն դիտել, այսպես կոչված, ազգային-ազատագրական պատերազմի շրջագծից դուրս:

Այս երկակի վերաբերմունքի հիմքում հավանաբար ընկած է ցեղասպանության երկու ձեւերից անարյունը գերադասելու հանգամանքը, որը նկատելի է նաեւ արդեն հիշատակված պատմաբան Հիլմար Քայզերի խոսքում: Նա թեեւ այս խմբի անդամներին (Ֆալիհ Ռըֆքը Աթայ, Ալի Ֆուադ Էրդեն, Մուստաֆա Քեմալ եւ Հալիդե Էդիպ) համարում է ոճրագործներ, սակայն նույն տեղում նաեւ նշում է, որ նրանք դեմ էին մյուսների իրագործած ոճրագործությանը. «Միություն եւ առաջադիմություն կուսակցության ներսում կային անձինք, ովքեր դեմ էին այս ոճրագործությանը (նկատի ունի Հայոց ցեղասպանությունը–Հ.Ա.) եւ կարող էին Սիրիայում եւ Հալեպում այս քաղաքականությունը կյանքի կոչել (նկատի ունի որբանոցներում հայ որբերի ծուլումը- Հ.Ա): Եվ սրանք Ֆալիհ Ռըֆքը Աթայի, Ալի Ֆուադ Էրդենի, Մուստաֆա Քեմալի եւ Հալիդե Էդիպի պես անձինք էին, ովքեր կարեւոր դեր խաղացին նաեւ հանրապետության շրջանում: Միություն եւ առաջադիմություն կուսակցությունից հանրապետություն անցած երիտթուրքերի կապը իթթիհադականների փոքրամասնություն կազմող ֆրակցիան էր: Առաջին աշխարհամարտի ժամանակ ոճրագործները գերազանցում էին, սակայն պարտությունից հետո Հալիդե Էդիպ Ադըվարի եւ Մուստաֆա Քեմալի պես անձինք առաջ են անցել»[93]:

[93] http://www.agos.com.tr/haber.php?seo=cocuklar-musluman-ailelerin-yanina-verilerek-asimile-edildi&haberid=6103

Թեեւ շատերը Մուստաֆա Քեմալին ուղղակիորեն չեն տեսնում ցեղասպանության հանցակիցների մեջ, սակայն վերջին շրջանում նկատելի է, որ նրա կենսագրության այս «մաքուր» կամ «անխոցելի» կողմը նույնպես վերանայման է ենթարկվում: Սելիմ Դերինգիլը նշելով, որ Մուստաֆա Քեմալի մասին որեւէ ուղղակի մեղադրանք որեւիցե տեղ չկա, նաեւ ավելացնում է, թե «...հնարավոր չէ «լավ» կամ «վատ» իթթիհադականների ծիծաղելի տարանջատում մտցնել»[94]:

Այժմ տեսնենք, թե հանրապետական շրջանում հայերի (եւ մյուս փոքրամասնությունների) նկատմամբ ազգային քաղաքականությունն ինչ դրսեւորումներ ունեցավ:

Հանրապետության հռչակումով եւ սահմանադրության ընդունմամբ Մուստաֆա Քեմալը եւ համախոհները դրեցին աշխարհիկ պետության հիմքերը, որի ծրագիրը նույնպես ժառանգել էին Իթթիհադից:

Թուրքիայի Հանրապետությունը կրոնի հարցում սկզբունքորեն հակադրվելով Օսմանյան կայսրությանը՝ ազգային հարցում շարունակեց կայսրության հատկապես իթթիհադական շրջանի քաղաքականությունը, որը Բասքըն Օրանը բնորոշում է այսպես. «Հանրապետության էթնոկրոնական ճարտարապետության հանդեպ քաղաքականությունը մշտապես ուղղված է եղել երկու նպատակի.

ա. *Ազատվել ոչ մահմեդականներից*. քանի որ տարբեր կրոններ դավանելու պատճառով չէին կարող ուծացվել:

բ. *Զուլել քրդերին* եւ մյուս ոչ թուրք մահմեդական խմբերին»[95]:

Այս ծրագրի իրականացման նպատակով ընդունվեցին մի

[94] http://www.taraf.com.tr/nese-duzel/makale-selim-deringil-inonu-tehcire-karsi-cikmadi.htm

[95] www.baskinoran.com, տե՛ս նաեւ «Ակօս», 29. 05. 2009:

շարք օրենքներ, որոնցից հիմնականը, թերեւս, ամրակայվեց Սահմանադրությամբ. *«Թուրքիայի պետության հետ քաղաքացիական կապով կապված ամեն ոք թուրք է»: (Թուրքիայի Հանրապետության Սահմանադրություն. Հոդված 66):*

Այսինքն՝ Թուրքիայի քաղաքացին թուրք է:

Հանրապետական ողջ շրջանի պատմությունն ընթացավ այս ծրագրի իրականացման տրամաբանությամբ, որի հետեւանքով այսօր Արեւմտյան Հայաստանում եւ, հատկապես, Սեւ ծովի երբեմնի հայահոծ շրջաններում ոչ մի հայ քրիստոնյա չի բնակվում: Չկան նաեւ քրիստոնյա այլ ժողովուրդներ՝ հույներ, վրացիներ, լազեր եւ այլն: Այնինչ, ինչպես ճիշտ բնորոշում է Ա.-Մելքոնյանը, «20-րդ դարի սկզբին անկախ այն հանգամանքից, որ համշենահայերի ու պոնտահայերի զգալի մասը իսլամադավան էր, տարածաշրջանի բնակչության կենցաղը, լեզուն, բարքերը, ծեսերը, մնում էին գերազանցապես հայկական14: Առաջին աշխարհամարտի նախօրյակին ամբողջ Տրապիզոնի նահանգի հայության թիվն ըստ Բ. Թոռլաքյանի, որոնց հետազոտողը լայն իմաստով անվանում է հիմնականում համշենահայեր, հասնում էր ավելի քան հարյուր հազարի, որոնցից զուտ համշենցիներ՝ 65342-ը: Համշենահայերն ամբողջ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրությունում, առանց քաղաքային բնակչության հաշվառման, կազմում էին 81458 մարդ կամ 11606 ծուխ, որոնք տեղաբաշխված էին 322 գյուղերում»[96]:

2013 թ. պետքարտուղար Ջոն Քերրին Արտաքին գործոց նախարարությունում ներկայացրեց ԱՄՆ-ի պետդեպարտամենտի՝ աշխարհում կրոնի ազատության մասին զեկույցը: Ահա մեկ

[96]Աշոտ Մելքոնեան, Համշէն. Պատմաաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր), Համշէն եւ համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան-Պէյրութ, 2007, էջ 34:

հատված Թուրքիային վերաբերող բաժնից. «Իսկ մյուս կրոնական խմբերը, որոնց մեծ մասը բնակվում է Ստամբուլում եւ այլ մեծ քաղաքներում, բնակչության մեկ տոկոսն անգամ չեն կազմում: Թեեւ հաստատ թվեր չկան, սակայն այդ խմբերը ենթադրաբար հետեւյալն են՝ 500 հազար շիա ջաֆերի մահմեդական, 90 հազար Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդ (սույն խմբի անդամներից 60 հազարը Թուրքիայի քաղաքացի է, իսկ մնացած 30 հազարը՝ ենթադրաբար ընդգրկում է Հայաստանից եկած փախստականներին, որոնք գրանցում չունեն), 25 հազար կաթոլիկ քրիստոնյա (սրանց մեծ մասը կազմում եմ Աֆրիկայից ու Ֆիլիպիններից եկած գաղթականները), 21 հազար հրեա, 20 հազար ասորական ուղղափառ քրիստոնյա, 15 հազար ռուս ուղղափառ քրիստոնյա (որոնց մեծ մասը Ռուսաստանից եկած ու բնակության թույլտվություն ստացած գաղթականներ են), 10 հազար բահայականներ, 5 հազար եզդիներ, 5 հազար Եհովայի վկաներ, 7 հազար բողոքականներ, 3 հազար իրաքցի քաղդեացի քրիստոնյաներ, 2.500 էլ հույն ուղղափառ քրիստոնյաներ:

Բացի այդ, թեեւ կոնկրետ թիվը հայտնի չէ, սակայն այդ տոկոսի մեջ են մտնում նաեւ բուլղար ուղղափառները, նեստորականները, վրացի ուղղափառները, ասորի կաթոլիկները, հայ կաթոլիկներն ու մարոնիտները»[97]:

Այս զեկույցում ներկայացված տվյալներից շատ տարբեր չեն Պոլսո հայոց պատրիարքի ընդհանուր փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթեշյանի ներկայացրած տվյալները, որոնց համաձայն՝ Թուրքիայում բնակվում է 70 հազար հայ քրիստոնյա, որից «66-67 հազարը բնակւում է Պոլսում: Գաւառաբնակ հայութեան թիւը չի անցնում 3000-ից: Անկարայում են բնակւում աւելի քան 500 հայ: Սեբաստիայում ունենք 70 հոգի: Խարբերդում կայ

[97]Բիրգյուն http://www.kent34.com.tr/turkiyede-1-milyon-ateist-var/12433/ հայերեն թարգմանությունը՝ http://akunq.net/am/?p=41188

մօտաւորապէս 20 հայ ընտանիք: Մալաթիայում ապրում է մօտ 50 հայ: Իսքենդերունում, որտեղ ունենք 3 հայկական եկեղեցի, բնակւում է մօտ 300 հոգի»[98]: Սա է այսօրվա պատկերը. մյուս հայերը կամ իսլամացվել են, կամ արտագաղթել:

Ինչպես տեսնում ենք, երբեմնի Տրապիզոնի վիլայեթում, որ ընդգրկում է Սեւ ծովի պոնտական ափը եւ եղել է քրիստոնյա հնագույն ազգերի օրրան, այսօր ոչ մի քրիստոնյայի մասին խոսք չկա:

[98] «Ակունք»-ի հարցազրոյցը Պոլսոյ հայոց պատրիարքի ընդհանուր փոխանորդ, Արամ արք. Աթեշեանի հետ http://asbarez.com/arm/93261/

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հայոց ցեղասպանությունը եւ համշենահայերը

Տրապիզոնի նահանգի հայերի բռնի իսլամացումը, բնականաբար, պետք է դիտարկվի Հայոց ցեղասպանության համապատկերում, սակայն այն պայմանականորեն բաժանեցինք եւ դրան առանձնաբար անդրադարձանք այն պատճառով, որ համշենահայության իսլամացման ավելի քան երեքհարյուրամյա պատմության մեջ այն առանձին փուլ էր՝ իր տրամաբանությամբ ու դրսեւորումներով ամբողջությամբ լինելով այդ պատմության շարունակությունն ու ավարտը:

Տրապիզոնի նահանգում եւ Ձանիկի գավառում ցեղասպանության նախօրյակին ապրում էին եւ՛ իսլամացված հայեր, եւ՛ քրիստոնյա հայեր: Ցեղասպանությունը, բնականաբար, միայն քրիստոնյա հայության դեմ էր ուղղված, թեեւ տվյալներ կան, որ տուժել է նաեւ հայախոս իսլամացված հայերի մի մասը:

Տրապիզոնի նահանգ: Տրապիզոնն իր դիրքի բերումով այն նահանգներից էր, որ առաջինը դարձավ ռազմական գործողությունների թատերաբեմ. 1915 թ. հունվարին ռուսական ռազմանավերը մոտեցան Տրապիզոնին և ռմբակոծեցին ռազմական նշանակություն ունեցող շինություններ եւ ամրություններ, ինչը թուրք-մուսուլմանական բնակչության մեջ առաջաց-

րեց հակաքրիստոնեական տրամադրություններ: Օրեցօր աճող հակառուսական եւ հակաքրիստոնեական ատելությունն ու թշնամական վերաբերմունքը բնականաբար սկսեց տարածվել նաեւ հայերի վրա: Դրան նպաստում էր կուսակալ Ջեմալ Ազմիի եւ ռազմական հրամանատարության քարոզչությունը: Մոլեռանդ ամբոխի մեջ հարցն աստիճանաբար վերածվեց կրոնական հակամարտության:

Հայերի վիճակը ծանրացավ հատկապես այն ժամանակ, երբ օսմանյան բանակն իրար հետեւից սկսեց պարտություններ կրել: Այդ պարտությունների պատճառներն ամբոխին բացատրում էին ավելի շատ որպես հայերի դավաճանության հետեւանք, քան թշնամու ռազմական գերակա ուժի: Արդեն գարնանը ստեղծվել էր այնպիսի մթնոլորտ, որ մուսուլմաններին հասած բոլոր դժբախտությունների եւ ձախորդությունների համար մեղադրում էին հայերին: Որքան ռազմաճակատի գիծը մոտենում էր քաղաքին, այնքան ավելի էր բորբոքվում հակահայկական քարոզչությունը:

Երիտթուրքերի կողմից ծրագրված ցեղասպանական գործողություններն արդեն սկսվել էին ողջ կայսրությունով մեկ. 1915թ. փետրվարի 12-ի կարգադրությամբ պաշտոնանկ արվեցին բոլոր հայ պաշտոնյաները, իսկ զինվորականները զինաթափվեցին[99]:

Հակահայկական քարոզչությունն անհետեւանք չէր մնում. թեեւ 1915թ. փետրվար-ապրիլ ամիսներին դեռ ընդհանուր տեղահանությունը չէր սկսվել, սակայն հայերի սպանությունները, առեւանգումներն ու ծերբակալությունները Տրապիզոն քաղաքում եւ ողջ նահանգում դարձել էին սովորական երեւույթներ: Բոլորը՝ եւ ապագա զոհերը, եւ դահիճները զգում էին, որ հանգուցալուծումը հեռու չէ: Եւ ահա ապրիլի 19-ին կուսակալի հրամանով սկսվում են Տրապիզոն քաղաքի և շրջակա հայկական գյուղերի վաղօրոք ծրագրված խուզարկությունները[100]: Երեքօրյա խուզարկություններից հետո իշխանությունները համոզվեցին, որ հայերը զինված չեն, սակայն միջադեպը մարդկանց մեջ սարսափ առաջացրեց: Ժամանակից շուտ անհարկի հուզումների եւ խմորումների տեղիք չտալու համար նահանգապետ Ջեմալ Ազմին երեւելի հայերի մասնակցությամբ կյանքի կոչեց մի հանձնախումբ, որին պարտավորություն տրվեց շրջել քաղաքներում եւ գյուղերում՝ տագնապահար ու անհանգստացած ժողովրդին հանգստացնելու եւ խաղաղեցնելու նպատակով[101]: Սակայն իրական նպատակը ժողովրդի զգոնությունը բթացնելն էր, ինչպես գրում է Հ.Հովակիմյանը, «Յանձնախումբին շրջագայություններն ու քարոզները իրենց քայքայիչ ազդեցութիւնն ունեցան ժողովուրդի այն մասի վրայ, որ տրամադիր չէր տեղահանութեան, այլ որոշած էր տեղւոյն վրայ կռուիլ ու նահատակուիլ: Ճշմարտութիւնը սակայն կը պահանջէ ըսել, որ յանձնախումբին քանի մը անդամները կառավարութեան խօսքին հաւատ ընծայողներ էին...»[102]: Հանձնախումբը ծեւավորելիս հենց այս հանգամանքն էլ հաշվի էր առել Ջեմալ Ազմին:

Ինչպես Կոստանդինապոլսում, այնպես էլ հայկական գավառներում եւ հայաշատ այլ վայրերում տեղահանությունից առաջ նախապես կազմած ցանկերով սովորաբար գիշերները ծերբակալում եւ ոչնչացնում էին հայերի հոգեւոր առաջնորդներին, մտավորականներին, քաղաքական ազդեցություն ունեցող

[99] **Հայկազն Ղազարյան,** Ցեղասպան թուրքը, Բէյրութ, 1968, էջ 21-22: **Հովհաննես Նազլեան,** Հուշերս, Բէյրութ, 1960, էջ 56-67: **Լեւոն Վարդան,** Ժամանակագրութիւն Հայկական տասնհինգին, Բէյրութ, 1975, էջ 29-30:

[100] **Մ. Թոռլաքեան,** Օրերուս հետ, Բէյրութ, 2001, էջ 240:

[101] **Յովակիմ Յովակիմեան** (Արշակունի), նշվ. աշխ. էջ 219:

[102] Նույն տեղում:

եւ հեղինակավոր մարդկանց: Նույնը պատահեց նաեւ Տրապիզոնի նահանգում. նախ՝ էրզրումի ռազմական ատյանի առջեւ ինչ-ինչ բացատրություններ տալու պատրվակով պահակախմբի ուղեկցությամբ էրզրում ուղարկվեց Տրապիզոնի հայոց թեմի առաջնորդ ծայրագույն վարդապետ Գեորգ Թուրյանը: Նա դարձավ առաջին զոհը՝ ճանապարհին դավադրաբար սպանվելով իրեն ուղեկցողների կողմից: Նշենք, որ շատ ու շատ նվիրյալ հայորդիների նման նա նույնպես վտանգի նախօրեին միացավ իր ժողովրդին՝ նրան մենակ չթողնելու համար[103]:

Առաջնորդից հետո հունիսի 11-ին քաղաքապետարան են հրավիրում քաղաքի ընտրանուց 42 մարդ, որոնց հարցաքննության համար Սամսուն տեղափոխելու պատրվակով դուրս են բերում քաղաքից եւ բոլորին բարբարոսաբար սպանում Պլատանա կոչվող վայրում: Ծնունդով տրապիզոնցի հանրահայտ դերասան Արման Կոթիկյանը, որ տալիս է 25 սպանվածների անունները[104], հիշում է նաեւ այդ ոճիրն իրականացրած դահիճների պարագլխի անունը՝ Թեքքելի Նեշադ[105]:

Ժողովրդին զրկելով հոգեւոր ղեկավարությունից, մտավորականներից եւ քաղաքական առաջնորդներից՝ իշխանությունները հաջորդ օրն իսկ՝ հունիսի 13-ին, հրատարակեցին տրապիզոնահայության տեղահանության հրամանը: Գլխատված

[103] Վարդապետ Գեորգ Թուրյանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին գտնվում էր Կ.Պոլսում: Զգալով ժողովրդին սպառնացող վտանգը՝ շտապեց վերադառնալ Տրապիզոն: Նրա վերադարձից երկու օր անց նեղուցները փակվեցին:

[104] Հատկապես ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ սպանվածների ցանկում են Հայ հեղափոխական դաշնակցության Կենտրոնական կոմիտեի անդամները, այլ նշանավոր կուսակցական գործիչներ, մեկ հնչակյան եւ այլն: Այսինքն՝ ոչնչացվել է շրջանի քաղաքական ղեկավարությունը:

[105] Նույն տեղում, էջ 222:

ժողովուրդն ուղղակի չգիտեր անելիքը: Առաջնորդական փոխանորդ Շողա քահանա Զուլալյանը, հայր Ստեփանոս Սարյանը, պատվելի Զաքարիան (հայ առաքելական, կաթոլիկ եւ ավետարանչական եկեղեցիների շրջանի առաջնորդները), աջակցությամբ մի քանի ազդեցիկ մարդկանց, որ փրկվել էին հրաշքով, ժողովրդի անունից դիմեցին նահանգապետ Զեմալ Ազմիին, հունական մետրոպոլիտին, կաթոլիկ եկեղեցու միսիոներներին, գերմանական եւ ամերիկյան հյուպատոսներին, սակայն ոչ մի արդյունքի չհասան[106]:

Տրապիզոնի հույների մետրոպոլիտ արքեպիսկոպոս Խրիսանթոսը, որ հետագայում դառնում է Աթենքի եւ ողջ Հունաստանի արքեպիսկոպոսը, «Տրապիզոնի եկեղեցին» խորագրով իր հուշագրության մեջ բավականին հանգամանալից անդրադառնում է հայերի տեղահանությանը եւ կոտորածներին: Նրա հաղորդած տեղեկությունների համաձայն՝ համընդհանուր տեղահանության հրամանի օրը՝ հունիսի 13-ին, հավաքում են 300 հայ երիտասարդների, տանում ծովի խորքը եւ կոտորում, իսկ տեղահանությունից մեկ օր առաջ՝ հունիսի 17-ին, կոտորում են նախօրոք զինաթափված եւ բանտարկված 500 հայ զինվորականների[107]:

Հայ բնակչությանը տրված հնգօրյա ժամանակահատվածում կազմվեց առաջին քարավանը, որը քաղաքից դուրս եկավ հունիսի 18-ի վաղ առավոտյան: Քաղաքից դուրս հանելուց հետո նրանց՝ ընդհանուր թվով 6000 մարդու, տարան ծովափ, առանձնացրին 14-60 տարեկան տղամարդկանց, սրանց առանձին խմբերով տարան դեպի Զանիկի լեռները եւ բոլորին կոտորեցին: Հունիսի 19-ին քարավանում գտնվող 14-60 տարեկան բոլոր տղամարդկանց դուրս բերեցին ճամբարից, կապեցին

[106] Նույն տեղում, էջ 222-223:

[107] Նույն տեղում, էջ224-228:

ձեռքերը և բաժանելով 50-60 հոգանոց խմբերի՝ տարան Կալաֆկա գետի հունով ի վեր՝ դեպի Զանիկ լեռը: Ճանապարհին՝ Զևիզլիկ գյուղի մոտ, բոլորին կոտորեցին: Կանանցից, ծերերից ու երեխաներից բաղկացած մնացյալ խմբին տարան Սրղանլի դաշտը, ուր առանձնացրին գեղեցիկ կանանց եւ աղջիկներին, իսկ մնացյալին կոտորեցին չեթեները:

Առաջին քարավանին հաջորդեցին մյուսները. բոլորին էլ սպասում էր նույն ճակատագիրը: Արդեն հուլիսի սկզբներին Տրապիզոնում հայ գրեթե չէր մնացել: 1915թ. հուլիսի 28ի տեղեկագրում ԱՄՆ-ի հյուպատոսը դեսպանին հաղորդում է. «Երեքշաբթի 6 Յուլիսին, Տրապիզոնի բոլոր հայ տուները, շուրջ հազար, պարպուած էին եւ իրենց բնակիչները տարագրուած: Չհաստատուեցաւ երբեք, թե մեկը գտնուած ըլլա, որ կառավարութեան դեմ ուղղուած շարժումի մը մասնակցած ըլլալու յանցանքը գործած ըլլա»[108]:

Տրապիզոնի կոտորածների մեջ առանձնացվեց մարդկանց բնաջնջելու մի եղանակ, որ այլ տեղերում չի հիշվում. նահանգապետ Զեմալ Ազմին կողմնակից էր բոլորին խեղդել ծովում, ինչը դահիճների գործը կհեշտացներ, քանզի ճանապարհին սպանվածներին պետք է թաղեին: Թեեւ ինչ-ինչ պատճառներով դա զանգվածաբար չկիրառվեց, սակայն շատերը ծովամույն եղան: Այս կերպ վարվեցին այն հարուստների հետ, ովքեր տարբեր ճանապարհներով խուսափել էին տեղահանությունից: Ծովամույն արվեցին նաեւ 60 հղի կանայք:

Հատուկ դաժանությամբ վարվեցին այն 600 հայ մանուկների հետ, ովքեր կարողացել էին մի կերպ փրկվել տեղահանությունից եւ քաղաքում կամ շրջակայքում ապաստանել: Հույների մետրոպոլիտն այս երեխաներին հավաքել էր եւ փորձում

[108] Նույն տեղում, էջ 231:

էր տեղավորել որբանոցներում: Իշխանությունները դիմեցին նենգության. սկզբում համաձայնեցին, ինչը ոգեւորեց Խրիստոֆորոսին. նա ամեն տեղից հավաքում էր որբ ու անտեր երեխաներին՝ աշխատանքների մեջ ներգրավելով բազմաթիվ հույն հոգեւորականների: Երբ կարծես բոլորին հավաքել էին, իշխանությունները նրանց խլեցին հույն խնամակալներից եւ հանձնեցին նավավար Բայրաքտար Օղլի Ռահմիին, որի կարգադրությամբ երեխաներին լցրեցին ջվալների մեջ, ամուր կապեցին դրանք և տանելով բաց ծով՝ նետեցին ջուրը: 600 երեխաներից հրաշքով փրկվեցին ընդամենը ութ հոգի[109]: Նույն ճակատագրին արժանացան նաև այն 500 հայերը, որոնք, կաշառելով թուրք նավավարներին, ցանկացան փախչել Սամսուն, սակայն բոլորն էլ ծովամույն եղան:

1915թ. վերջերին Տրապիզոն քաղաքում եւ կուսակալությունում այլևս հայ չէր մնացել: Տրապիզոնում Իտալիայի ընդհանուր հյուպատոս Պ. Կորինին 1916 թ. փետրվարին «Մեսաջերո» թերթի թղթակցին տված հարցազրույցի ժամանակ նշել է, որ 1915 թ. վերջերին քաղաքի 14 հազար հայերից մնացել էր ընդամենը 100 մարդ, մնացածները «կամ Սև ծովն էին թափվել, կամ Դեյիրմեն Դերեյի գետն էին նետված»[110]: Երբ 1916 թ. ապրիլին ռուսական բանակը մտավ Տրապիզոն, այստեղ բնակվում էին ընդամենը 15 հայ կին և 50 որբ հայ երեխաներ: Տրապիզոնի և շրջակայքի 70 հազար հայերից փրկվել են մոտավորապես 2.800 հոգի, որոնք էլ ցրվել են ամբողջ աշխարհով մեկ:

Նույն ճակատագրին արժանացան համշենահայության բոլոր հատվածները: Յոմուրիայի եւ Սյուրմենեի 5000 հայերից քչերը հասան մինչեւ Երզնկա. նրանց դեպի լեռնային յայլաները

[109] **Սեպուհ Ակունի**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 178:
[110] «Հուշամատյան Մեծ եղեռնի», էջ 475:

տանող ճանապարհին դաժանաբար կոտորեցին[111]:

Օրդու քաղաքում տեղահանության նախօրեին Հայ հեղափոխական դաշնակցությունն ու Հնչակյան կուսակցությունը ելքեր են որոնում ժողովրդին զինելու եւ դիմադրություն կազմակերպելու համար, սակայն ձեռքի տակ եղած սուղ միջոցներով նման մի գործ կազմակերպելը խիստ դժվար էր, եթե ոչ՝ անհավանական: Այդ դժվարին պահին յունիացի եւ ֆաթսացի հայերն ուղարկում են վտանգավոր մի հեռագիր, որով տեղեկացնում են, որ իրենք իսլամ են ընդունել, հորդորում են նույնը անել նաեւ օրդուցիներին: Օրդուի հայերի անունից կայմակամը դիմում է նահանգապետ Ջեմալ Ազմիին՝ խնդրելով թույլ տալ հայերի իսլամացումը, որպեսզի դրանից հետո մնային տեղերում: Ջեմալի պատասխանը կտրուկ էր. «Անպայման աքսոր, եթէ ոչ՝ դուն ալ անոնց հետ կերթաս»[112]:

Օրդուում եւ, ընդհանրապես, Տրապիզոնի նահանգում, օգտվելով հանընդհանուր քաղաքականությունից, շատ ավելի խիստ իրավիճակ էր ստեղծվել. եթե կայսրության այլ բնակավայրերում մինչեւ հուլիսի մեկի հայտնի հրահանգը, որով արգելվեց կրոնափոխությունը, հայերը կարողանում էին այս ճանապարհով փրկել իրենց կյանքն ու ունեցվածքը, ապա, ինչպես տեսնում ենք, արդեն հունիսի կեսերին Ջեմալ Ազմին Օրդուի հայերի համար բացառում է այս հնարավորությունը:

Շատ վայրերում ժողովուրդը, գերադասելով անորոշությունը, լքեց ու հեռացավ անտառները կամ բարձրացավ լեռները՝ չպատկերացնելով, թե իրենց ինչ էր սպասելու ապագայում: Նման մի օրինակ է **Յոմուրիայ** գյուղախմբի գյուղերից մեկում պատահածը: Համընդհանուր տեղահանությունից առաջ ոստիկանական կենտրոնների ստեղծումը ժողովրդին զգուշավորության մղեց: Երկրի խորքերից եկող տագնապալի լուրերը անհանգիստ մթնոլորտ էին ստեղծել: Դաշնակցության Կենտրոնական կոմիտեն գաղտնի կերպով նախաձեռնեց ինքնապաշտպանական կառույցների շինարարություն տարբեր տեղերում: Շուտով այլեւայլ պատրվակներով գյուղից հեռացրին տղամարդկանց: Մնացյալներին տեղահանության համար տվեցին 5 օր ժամանակ, սակայն նախավերջին օրը գյուղը շրջապատվեց ոստիկանականներով, ովքեր հրացանաձգություններով ուզում էին ժողովրդին սարսափ ներշնչել:

Պարզվում է, որ հարեւան գյուղերի բնակիչները հեռացել են անտառները կամ բարձրացել լեռները: Գաղտնի կերպով խումբ-խումբ հեռանում են նաեւ Յոմուրիայի երիտասարդները, ովքեր հանձնվելու մտադիր չէին: Ժողովուրդը հավաքվում է վճիռ կայացնելու: Որոշում են վարվել նույն կերպ՝ ով կարող է, պետք է հեռանա: Ահա իրադարձությունների մասնակցի հուշերից մեկ հատված. «Միակ ճամբան էր՝ ձգել ամէն մէկը իր կամքին, - ով կ'ուզէ կ'երթա, ով կ'ուզէ կը մնա: Այդպէս ալ եղաւ: Չաշուտ փոսը մէկ ժամուան մէջ պարպուեցաւ եւ հազիւ 150 հոգի մնաց, ճնշող մեծամասնութիւնը այր մարդիկ, մնացածը դեռատի աղջիկներ եւ պատանիներ: Յաջորդ օրը ժողովուրդը պիտի տեղահանուէր առանց որեւէ պատրաստութեան: Ընկճուած եւ բոլորս ալ խղճով մտատանջ՝ քաշուեցանք աւելի բարձրերը, Ուզտաղիի փէշերը, առանց որեւէ խորհուրդի ու ծրագրի»[113]:

Պատահում էին նաեւ դեպքեր, երբ ժողովուրդը ոչ հասցնում էր նախապատրաստվել հեռանալու, ոչ էլ՝ անտառները փախչելու, որովհետեւ պետության ձեւավորած չեթեների խմբերը չէին սպասում, որ մարդկանց հեռացնեն բնակավայրերից, եւ նոր հարձակվեն նրանց վրա, այլ փորձում էին իրենց ա-

[111] **Յովակիմ Յովակիմեան** (Արշակունի), նշվ. աշխ. էջ 253:
[112] Նույն տեղում, էջ 520:

[113] **Յովակիմ Յովակիմեան**, նշվ. աշխ. էջ 351:

վարին տիրանալ անմիջապես: Նման դեպք է պատահում Տրապիզոնի նահանգի Գյուշանա գյուղում: Երբ ժողովրդին հավաքած՝ ուզում են դուրս հանել գյուղից, նրանց վրա է հարձակվում բաթումցի հանրահայտ ավազակապետ Ասլանը՝ իր 500 չեթեներով, որպեսզի տեղում տիրանա ավարին: Մարդիկ անզոր էին այս հզոր ուժի դեմ, սակայն ամենուր տարածված ողբի եւ լաց ու կոծի միջից լսվում է հրացանի կրակոցի ձայն, եւ ամեն ինչ հանկարծ փոխվում է. ժողովուրդն սկսում է դիմադրել: Շուտով օգնության են հասնում անտառներում ապաստանած հայերի զինված խմբերը. «Ալ սպասել չկար եւ ծայր տուաւ բախումը, որ սովորական կռիվ մը չէր, այլ օրհասական գուպար մը»[114]: Մինչեւ մայրամուտ տեւած այս կռվում չեթեները տալիս են երեսուն զոհ, հայերը՝ երեք:

Օրդուի հայության տեղահանությունն սկսվում է հունիսի կեսերին: Սակայն մինչեւ տեղահանությունը, ինչպես ամենուր, Օրդուում էլ կատարվեցին նախապատրաստական աշխատանքներ: Մոտ մեկ շաբաթ պահանջվեց հայերին իբր ցուցակագրելու համար. այդ նպատակով բոլորը կանչվեցին քաղաքային բանտ եւ արգելափակվեցին: Երբ բոլոր տղամարդիկ բանտում էին, հայտարարեցին, որ հայերի համար որպես բնակության նոր վայր է հատկացված Մուսուլի վիլայեթը:

Եւ սկսվեց տեղահանությունը: Նախ 80-100 հոգանոց խմբերով տեղափոխեցին տղամարդկանց. Օրդուի կայմակամը որքան նենգ ու դաժան, նույնքան էլ վախկոտ մի մարդ էր՝ Քեմալ անունով: Նա անակնկալներից վախենալով՝ տղամարդկանց տեղափոխում էր՝ չոչս-չորս մարդ իրար կապված: Բոլոր տղամարդկանց այսպես տարան անտառների խորքերը եւ կոտորեցին, որի մասին քաղաքում մնացածները շատ ուշ իմացան:

[114] Նույն տեղում, 353:

Հերթը հասավ անգլուխ մնացած ժողովրդին. սրանց քարավանը անասելի տառապանքներով Սեբաստիա-Մալաթիա-Հյուսնի Մանսուր ուղեգծով շարժվում է դեպի Եփրատ, որը դառնում է շատերի գերեզմանը:

Օրդուում եւս մի մասին ծովամույն են անում. դրանք այն հիվանդները, ծերերն ու անկարներն էին, ովքեր ճանապարհորդելու ունակ չէին. սրանց հավաքում են եւ Սամսուն տանելու պատրվակով հանում քաղաքից դուրս եւ լցնում ծովը:

Որոշ թվով երեխաներ թաքնվել էին բարեկամ հույների, վրացիների եւ, անգամ, թուրքերի տանը, իսկ բոլորովին անտեր մնացածները թափառում էին քաղաքում՝ մի կտոր հաց կամ աշխատանք ճարելու համար: Շուտով սրանց նույնպես հավաքում են, առողջներին բաժանում թուրքական ընտանիքներին, իսկ հիվանդներին՝ լցնում ծովը:

Կիրասոն քաղաքի 3000 հայերին նույնպես, տեղահանելուց առաջ, տարբեր խաբեություններով զրկեցին ղեկավարներից, հետո առանձնացրին երիտասարդներին եւ ինչ-ինչ պատրվակներով քաղաքից դուրս հանեցին ու բոլորին գնդակահարեցին: Անգլուխ եւ անպաշպան ժողովորդին քարավաններով հանում են քաղաքից եւ մեկ-երկու օր հետո առանձնացնելով՝ 17-50 տարեկան տղամարդկանց՝ բոլորին կոտորում են, մյուսներին վիճակվում է երկար ու տանջալից ճանապարհը դեպի անապատներ, ուր հասնում են քչերը:

Գյումուշհանեի եւ շրջակա գյուղերի 3-3500 հայերն ամբողջությամբ բնաջնջվեցին 1915 ին: Այս շրջանում հայերի «-...առաջին դահճապետը եղած է Միթէսարըֆ Ապտիլ Գատիր հրեշը, որ ինքզինքը հրէշապետ Ճեմալ Ազմիի նման «հայասեր ցոյց կուտար»...»:[115]

[115] Նույն տեղում, էջ 554:

Տրիպոլիի հայկական համայնքը 1915թ. ապրում էր բավականին բարգավաճ ազգային կյանքով, ուներ շուրջ 1000 բնակիչ: Համայնքը գլխովին ոչնչացվեց:

Զանիկի (Սամսունի) գավառ: Ցեղասպանությունից առաջ գավառի հայության թիվը հասնում էր 30-32000-ի, որից 5000-բնակվում էր գավառի կենտրոն Սամսուն քաղաքում, մնացյալը՝ գյուղերում: Սա կազմակերպված ազգային, կրթական եւ մշակութային կյանքով ապրող մի բարգավաճ համայնք էր: Սամսուն քաղաքի տնտեսական կյանքը հիմնականում հայերի եւ հույների ձեռքում էր:

1915թ. հունիսի 24-ին տրվում է տեղահանության մասին հրամանը, ուր ասվում է, որ հայերը պետք է 10 օրվա ընթացքում պատրաստվեն տեղահանության՝ դեպի ներքին գավառներ: Նույն օրվա երեկոյան պաշարվում է քաղաքի հայկական թաղը: Հայոց առաջնորդի բոլոր դիմումները իշխանություններին որեւէ արդյունք չեն տալիս: Լարված սպասումի 10 օրերն անցնում են, եւ սկսվում է տեղահանությունը. «Եւ քանի մը օրուան մէջ դատարկուեցաւ Սամսոնի 5000 հոգիանոց հայնոցը: Յուլիսի կէսին տեղւոյն վրա մնացած էին 15-20 թրքացածներ, քանի մը օտարահպատակներ եւ կարգ մը բանտարկեալներու ընտանիքներ... Ու այսպես, թուրք ոճրագործներու «պաշտպանության տակ» Սամսոն քաղաքի եւ ամբողջ գաւառի 30-32000 հայութիւնն ալ ծգեց իր տունն ու տեղը եւ հարստութիւնը եւ սկսաւ քալել մահուան ճամբարէն, առանց անդրադառնալու թէ անվերադարձ է իր մեկնումը...»[116]:

Զանիկի գավառի մեջ էին մտնում **Պարֆայի, Չարշամպայի, Թերմթի, Յունիեի, Ֆաթմայի** գավառակները:

[116] Նույն տեղում, էջ 678:

Համշենահայության զինված պայքարը 1915 -1923 թթ.

Համշենահայության զինված պայքարն սկսվեց տարերայնորեն: Տեղահանության անսպասելի որոշումը Տրապիզոնի նահանգի բոլոր բնակավայրերում համանման իրավիճակ ստեղծեց: Ժողովուրդն ամբողջությամբ տեղահանվեց, բացի փոքրաթիվ իսլամացածներից: Ովքեր ի վիճակի էին, հեռացան անտառներն ու լեռները: Նրանց միացան մահվան քարավաններից մի կերպ ազատվածներն ու բանակից փախած հայ զինվորականներ: Աստիճանաբար ձեւավորվեցին խմբեր, ընտրվեցին հրամանատարներ, կազմակերպվեց դիմադրական շարժում, որը գնալով մեծացավ, հզորացավ եւ ծավալվեց նորանոր տարածքներում:

Համշենահայության դիմադրության պատմությունը քիչ ուսումնասիրված, բայց հայ ժողովրդի դիմադրական պայքարի ամենահերոսական էջերից մէկն է: Նա աննախադեպ է նաեւ այն առումով, որ սկսվելով 1915-ի ամռան ամիսներին՝ շարունակվեց ութ երկար տարիներ. նախ՝ երիտթուրքական իշխանությունների, ապա՝ նրանց ազգային քաղաքականությունը որդեգրած Մուստաֆա Քեմալի իշխանության դեմ:

1915թ. հունիսի 20-ին կուսակալի հրամանով 40 հայ տղամարդկանց փորձեցին ծովում խեղդամահ անել, բայց նրանք հարձակվեցին ուղեկցող ոստիկանների վրա և ոչնչացրին նրանց, թեև իրենք էլ կորուստներ ունեցան: Սա, կարելի է ասել, տրապիզոնցիների առաջին ըմբոստությունն էր: Հատկապես ուշագրավ է Զեմալ Ազմիին սպանելու Գուրգեն և Պարույր Սարգսյան եղբայրների փորձը: Թեեւ այն չհաջողվեց, բայց փաստը խոսուն է:

Իրար հաջորդող ըմբոստության դեպքերից առանձնանում է Գյումուշհանե-Երզնկա խճուղու Թեքքե կայարանում տեղի ունեցածը. տրապիզոնցի տարագիր 100 տղամարդիկ հարձակվեցին

ուղեկցող ոստիկանների վրա եւ ոչնչացրեցին բոլորին: Իրենց տները պաշտպանելիս բազմաթիվ մարդիկ մինչեւ վերջ կռվել եւ նահատակվել են՝ նախընտրելով մահը տարագրությունից:

Տրապիզոնի մոտ գտնվող Խնե, Թրմե, Չարշամպա լեռներում ամրացված 600-ից ավելի հայեր կազմեցին դիմադրողական պայքարի առանցքը: Հսկայական կայսրությանը ձեռնոց նետած այդ անվեհեր մարտիկների հրամանատարներն էին հռչակավոր Զիլ Օհանները, Միքայել Զեյթունճյանը, Հակոբ Քեհյանը[117]:

Իշխանությունները, ցանկանալով դեռեւս ձեւաւորման շրջանում ջախջախել հայերի մարտական ուժը, 1915 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին կանոնավոր բանակի զորամասերով եւ հրետանու հզոր աջակցությամբ փորձում են ոչնչացնել Կոնկայի անտառներում ամրացված հայ մարտիկներին, սակայն պարտվում են եւ ստիպված նահանջում:

Շուտով, տրապիզոնցիների նման, օրդուցիներն էլ են դիմում զենքի: Մի քանի տասնյակ երիտասարդներ իրենց ունեցած զենքերով բարձրանում են լեռները՝ Վարդանօղլի Կարապետ Չաուշի (այս հիրավի ազգային հերոսը ժողովրդի մեջ հայտնի է որպես Վաշտոնօղլի) եւ Դելի Սեդրակի առաջնորդությամբ: Նրանց է միանում Քյուչուկ Արթինը: Խումբը երկար ժամանակ ասպատակում է թուրքական բնակավայրերը՝ վրեժ լուծելով իրենց հարազատների համար:

Անգամ զինադադարից հետո այս խումբը չհավատաց թուրքական իշխանությունների խոստումներին եւ լեռներից չիջավ ցած: Իսկ երբ Թուրքիայում հաստատվեց Քեմալի իշխանությունը, նրանք տեղափոխվեցին Աբխազիա, ուր մինչեւ այսօր ապրում են նրանց սերունդները:

Պատերազմից առաջ զորակոչից խուսափելով սարերում

[117] **Մ. Թոռլաքեան**, նշվ. աշխ., էջ 325:

ապաստանած Հրանտ Կյուրինյանը, Հովհաննես Էրյուկյանը, Միսակ Տեր Անդրեասյանը, Զիվան Ծատուրյանը, Մկրտիչ Լազյանը եւ Գրիգոր Ճգնավորյանը, մի խումբ փախստական գյուղացիներից իմանալով, թե ինչ է կատարվում, միանում են այդ խմբին եւ մինչեւ զինադադարը՝ 1918թ., կռվում թուրքական ոստիկանության դեմ: Նրանք զինադադարից հետո, օգտվելով հնարավորությունից, իջնում են լեռներից եւ հաստատվում Օրդուում: Ի դեպ՝ Օրդու վերադարձած հայերը, ի տարբերություն շրջակա բնակավայրեր վերադարձածների, ունեին որոշ ազատություններ: Մյուս տեղերում, անգամ զինադադարի՝ թուրքերի համար ծանր պայմաններում վերջիններս առիթի դեպքում չէին խուսափում սպանել հայերին: Հայերն էլ իրենց հերթին վրեժխնդիր են լինում թուրքերից: Ուշագրավ է մի օրդուցի հայի հուշերից հետեւյալ հատվածը. Չաքըր Ահմետ անունով մի թուրք իր մոտ է կանչում հայ պատանիներին եւ հետեւյալ խորհուրդը տալիս. «Ես ալ իմ ամբողջ հոգիովս կ'ատեմ թուրքերը իբրեւ վատ եւ ստոր ցեղ. ինչ որ ընէք անոնց, իրաւացի էք. անոնց գործած ոճիրները ձեր ազգին հանդէպ որեւէ կերպ չեն կրնար մոռցուիլ: Բայց, զաւակներս, դուք անփորձ էք. այսօր թուրքը ինկած է եւ թոյլ, սակայն մեռած չէ. կրնա ըլլալ, որ վաղը միւս օր նորէն ոտքի կանգնի, այն ատեն ձեզմէ ոչ մէկը ողջ կը մնայ, ինչ որ ընէք, ըրէք այնպէս, որ չիմացուի, թե ով ըրաւ եւ ինչպէս ըրաւ»[118]:

Զանիկի գավառում եւս շատերը, ձեռքի տակ ունեցած զենքերը վերցնելով, հեռանում են լեռներն ու անտառները: Սրանց են միանում օսմանյան բանակից փախած հայ զինվորականները, ովքեր ունէին եւ մարտական փորձ, եւ բանակային զենք: Հուլիսի վերջերին ձեւաւորվում են մարտական խմբերը, եւ ընտրվում հրամանատարները Ավետիս Չաքրյանը, Կարա-

[118] **Յովակիմ Յովակիմեան** (Արշակունի), նշվ. աշխ. էջ 529:

պետ Թահմազյանը, Գեւորգ Քյոսյանը, Տիգրան Զեյթունճյանը:

Հետագայում ձեւավորվեցին նորանոր խմբեր, հայտնի դարձան նոր հրամանատարներ եւ խմբապետներ Կարա Խաչիկը, Քահանա Գալենճյանը, Ադամ Չաուշը, Արութ Գրբաշյանը, Աբրահամ Խաչատուրյանը, Սարգիս Թութուլյանը, Սարգիս Գալենճյանը, Խաչիկ Թուլումճյանը, Արթին աղան, Ավետիս Տիգրանյանը եւ ուրիշներ:

Նրանց մղած կռիվներից հայտնի են Գոզ թեփեի, Թազ դաղի, Քել թեփեի, Քերիշ թեփեի, Քյոքլուկ գյուղի եւ բազմաթիվ այլ կռիվները:

1923թ. հանրապետություն հռչակված Թուրքիայի եւ նորաստեղծ Խորհրդային Միության միջեւ սահմանների փակումը ծանրացրեց Պոնտոսի լեռներում ապաստանած անվեհեր հերոսների վիճակը. կտրվեց կապը արտաքին աշխարհի հետ, ինչն անհնար էր դարձնում երկարատեւ պայքարի հեռանկարը. ամենուր գործակալական-լրտեսական ցանցեր տարածած իշխանությունը օրեցօր սեղմում էր օղակը: Անվեհեր հերոսները որոշեցին հեռանալ երկրից, բայց՝ ավարտելով կիսատ թողած գործերը: Պոնտոսի բոլոր մարտական խմբերի ընդհանուր հավաքի որոշմամբ 1923թ. մարտի վերջերին հիմնական ուժերն ուղարկվում են Ռուսաստան, Պոնտոսում թողնում են մի հատուկ խումբ: Մինչեւ աշուն այս խումբը ոչնչացնում է բոլոր այն թշնամիներին, ովքեր կարեւոր դեր են ունեցել հայերի բնաջնջման մեջ, մատնիչներին եւ դավաճաններին:

1923թ. նոյեմբերի կեսերին զենքը ձեռքներին վերջին 700 հայերը չպարտված հեռացան հայրենի եզերքից[119]: Երեւի համաշխարհային պատմության մեջ այսպիսի փաստ չի արձանագրվել:

Ահա մասնակցի ու ականատեսի հուշերից մեկ հատված.

[119] Մ. Թոռլաքեան, նշվ. աշխ224-228:

«Վերջին անգամ մը աչքերը դարձուցինք 8 տարի մեզ հյուրընկալած լեռներուն՝ Թազ տաղ, Քել թեփէ, Չաղման, Թեմի օլուխ, Պոզ թեփէ, Տաղլաղաջի գագաթ, եւ այլն եւ իբր երախտագէտներ ծունկ եկանք, տուինք մեր վերջին մնաս բարովը, վերյիշեցինք դարձեալ մեր նահատակները, անոնց գերեզմաններուն վրա արցունքներ թափեցինք եւ կարօտով ձգեցինք մեզի համար սրբատեղիներ դարձած այդ վայրերը»[120]:

Հայոց Մեծ եղեռնի կազմակերպիչներից շատերն ստացան իրենց արժանի պատիժը: Ուր էլ փորձեցին փախչել ու թաքնվել, հայ վրիժառուների անվրեպ գնդակները գտան նրանց: Հատուցումից չխուսափեցին նաեւ Տրապիզոնի ջարդերի կազմակերպիչները: 1922 թ. ապրիլի 17-ի գիշերը Բեռլինում Արշավիր Շիրակյանը սպանեց նահանգապետ Զեմալ Ազմիին[121]: Հայ վրիժառուի գնդակի զոհ դարձավ Ազմիի մերձավորագույն օգնականը՝ Թեքքեշ Նեշադը:

Ծնունդով տրապիզոնցի Միսաք Թոռլաքյանը, ով հայ վրիժառուների Նեմեսիս գործողության անդամներից էր, 1921 թ. հուլիսի 18-ին Կ. Պոլսում դիմահար կրակոցով սպանեց Ադրբեջանի ներքին գործոց նախկին նախարար Բեհբուտ խան Ջիվանշիրին, ով Բաքվի 30 հազար հայության 1918 թ. կոտորածների կազմակերպիչն էր: Ի դեպ՝ 1918 թ. զինադադարի օրերին Տրապիզոնում երիտթուրքերի կուսակցության կոմիտեի պատասխանատու, հայության դահիճներից Նայիլ բեյը փախավ Ադրբեջան եւ ապաստան գտավ Ջիվանշիրի մոտ[122], սակայն չփրկվեց. հայ վրիժառուի գնդակը նրան գտավ այստեղ:

[120] **Յովակիմ Յովակիմեան** (Արշակունի), նշվ. աշխ. էջ, էջ 762:

[121] Մանրամասն տե՛ս **Ա. Շիրակեան**, Կտակն էր նահատակներուն, Բեյրութ, 1975:

[122] Այդ ակտի մանրամասների մասին լայնորեն տե՛ս Մ. Թոռլաքեանի «Օրերուս հետ» հուշագրությունում:

Կ. Պոլսի ռազմական ատյանի մեղադրական եզրակացությունն ու դատարանի դատավճիռը Տրապիզոնի հայերի տեղահանության եւ կոտորածների վերաբերյալ

1919թ. Թուրքիայում տեղի ունեցավ մի աննախադեպ դատավարություն. սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի հատուկ հրամանագրով կյանքի կոչված Պոլսի ռազմական արտակարգ ատյանը քննեց Հայոց ցեղասպանության կազմակերպիչների եւ իրականացնողների՝ երիտթուրքերի պարագլուխների, կառավարության անդամների եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների գործը: Այդ դատավարության ժամանակ քննվեց նաւ Տրապիզոնի հայերի տեղահանության եւ կոտորածների հարցը: Ստորեւ ներկայացնում ենք երկու կարեւորագույն փաստաթուղթ, որ շատ քիչ են հայտնի ընթերցող լայն հասարակությանը:

Առաջինը դատախազի կողմից կազմված եւ դատարանին ներկայացված ամբաստանագիրն է:

Երկրորդը դատարանի կայացրած վճիռն է:

Այս երկու փաստաթղթերը լույս են սփռում հարցի բուն էության վրա:

Տրապիզոնի տեղահանության եւ կոտորածների ամբաստանագրի ընթերցումը[123]

Երեկ Ռազմական արտակարգ ատյանը դատարանի նախագահ Մուստաֆա փաշայի նախագահությամբ նիստ հրավիրեց եւ շարունակեց Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների մասնակցության մեջ մեղադրվողների դատաքննությունը: Ընթերցվեց դատախազի կողմից կազմված ներքոհիշյալ ամբաստանագիրը.

«Տրապիզոնի վիլայեթում Միություն եւ առաջադիմություն կուսակցության կենտրոնական կառավարության կողմից հայերի տեղահանության վերաբերյալ ընդունված որոշումների գործադրման ընթացքում նախ՝ հայ տղամարդկանց եւ ապա՝ կանանց ու երեխաներին նշանակված վայրեր տեղափոխելիս նրանց մի մասն անգթաբար սպանվել է Դեյիրմենդերեի կողմերում, մյուս կանայք ու երեխաներն էլ բեռնվել են նավակները եւ ջրախեղդ արվել բաց ծովում: Հայերի մի մասին էլ, իբր բուժման նպատակով, թունավորել են տարբեր միջոցներով «Կարմիր մահիկ» հիվանդանոցում, որից հետո կողոպտվել է նրանց գույքը, դրամը եւ թանկարժեք իրերը: Ողջ մարդկության կողմից անեծքով ու նողկանքով հիշվելու արժանի նման անամոթ արարքների ու հանցագործությունների հանդգնած եւ այժմ փախուստի մեջ գտնվող Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի եւ կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբահչելի Նայիլի, ինչպես նաեւ դատարանում ներկա գտնվող Մեհմեդ Ալիի, Մուստաֆայի, Նիազիի, Նուրիի եւ մյուս հանցա-

[123] Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. Դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երեւան, 2011, էջ 245-248:

կիցների մասնակցությունն այդ վիթխարի կոտորածին հիմք են տալիս պատիժ սահմանելու համար: Նրանց գործի հետաքննությունը, նախ եւ առաջ, բխում է օրենքի անհրաժեշտությունից: Եվ ի վերջո՝ ովքե՞ր են Ազմին ու Նայիլը: Սրանք ոչ թե պետական կամ վարչական պաշտոնյաներ են, այլ՝ ինը տարի առաջ պետության ղեկը պատահաբար ձեռք գցած, առանձին կամ միասին կատարված բռնությունների, կոտորածների, անօրինականությունների, անհատնում չարաշահումների արդյունքում սուլթանական կառավարությանն այսօրվա ողբալի վիճակին հասցրած կործանիչ ձեռքերից ու վայրենի ուղեղներից բաղկացած «Միություն եւ առաջադիմություն» կոչեցյալ ավազակախմբի հանցագործ ներկայացուցիչներն են Տրապիզոնում:

Մեղադրող կողմը վերոնշյալով ներկայացրեց Ջեմալ Ազմիին ու Յենիբահչելի Նայիլին վերաբերող իր տեսակետն ու մեկնաբանությունը: Այսինքն՝ վերոհիշյալ երկուսը գլխավոր հանցագործներն են, գործող անձինք: Բնականաբար, միայն Ջեմալ Ազմին ու Նայիլը չէին կարող այդ ահռելի սպանդն իրականացնել: Վերոհիշյալ ավազակախմբի ոճրային մտահղացումները կյանքի կոչելու համար բազմաթիվ գործիքների կարիք էր զգացվում: Գաղափարը եւ կիրառվող մեթոդն էլ այն էր, որ որպես գործիք ընտրվեն պրիմիտիվ, սահմանափակ, արագ ազդեցության տակ ընկնող, սեփական ջանքերով առաջընթաց գրանցելուն անկարող մարդիկ: Անկասկած է, որ քիչ թե շատ զարգացած մեկը չէր կարող ողջ մարդկությանը հուզած այդ ոճիրների մասնակիցը դառնալ: Այդ իսկ պատճառով կատարված հետաքննության եւ դատավարության ընթացքում հարցաքննված վկաների, ինչպես նաեւ բազմաթիվ այլ անձանց տված հավաստի տեղեկություններից ու Վեհիբ փաշայի փաստաթղթերի մեջ պահպանված զեկուցումներից արված մեր եզ-

րակացության համաձայն, քանի որ Ջեմալ Ազմին ու պատասխանատու քարտուղար Յենիբահչելի Նայիլը տվյալ դեպքերին մասնակցել են միասին, նրանք պետք է պատժվեն ըստ 45-րդ եւ 170-րդ հոդվածների: Քանի որ Նիազի, Մուստաֆա, Նուրի, Մեհմեդ Ալի եւ բժիշկ Ալի Սայիբ բեյերը տվյալ հանցագործություններին մասնակցություն են ունեցել մասնակի կերպով, ապա նրանք պետք է պատժվեն 45-րդ հոդվածի երկրորդ պարբերության մատնանշմամբ՝ 174-րդ հոդվածի համաձայն: Ինչ վերաբերում է Սայիբ բեյին, ապա նա որպես բժիշկ հիվանդին թունավորելու անհրաժեշտությունը չուներ. կարող էր հիվանդներին սպանել՝ դեղերի չափաբաժինը մեծացնելով կամ սխալ բուժելով: Դա անընդունելի է բանականության, տրամաբանության եւ օրենքի կողմից: Եթե անգամ նրանց մարմինները թաղվել են կրոնական արարողությամբ, պետք է դիակները հանել եւ տեղում դիազննություն կատարելով՝ պարզել, թե որ թույնն է նրանց մահվան պատճառը դարձել, որից հետո, եթե այդ հանցագործությունը հաստատվի, բժիշկ Ալի Սայիբը կարող է լինել տվյալ հանցագործության կատարողը: Քանի որ այսօր նման հնարավորություն չունենք, պահանջում եմ, որպեսզի վերոնշյալն այդ հարցում արդարացվի եւ միայն պատժվի երեխաներին մեծ կողովներով տեղափոխողների հանցագործ գործողություններին աջակից լինելու համար: Պահանջում եմ, որ Ալի Սայիբը մյուս հանցագործների հետ միասին պատժվի քրեական օրենսգրքի՝ տվյալ ոճիրներին վերաբերող 45-րդ հոդվածի երկրորդ պարբերության մատնանշմամբ՝ 174-րդ հոդվածի համաձայն: Քանի որ կայմակամ (գավառապետ) Թալաաթ բեյի՝ տեղահանությանն ու կոտորածներին, ինչպես նաեւ՝ Ռազմական հարկերի հանձնաժողովներում տեղի ունեցած չարաշահումներին մասնակցություն ունենալու վերաբերյալ դույզն-ինչ ապացույց եւ հաստատող վկա անգամ չի գտնվել, պահանջում

եմ, որ վերոհիշյալն արդարացվի»:

Ամբաստանագրի ընթերցումից հետո դատարանի նախագահի կողմից հաղորդվեց, որ դատն ընդմիջվում է մինչեւ շաբաթ օրը՝ ժամը ինն անց կես, որպեսզի լսվեն դատապաշտպանների պաշտպանական ճառերը, եւ նիստն ավարտվեց[124]:

Ռազմական արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը[125]

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա,
Անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
Գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
Գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
Գնդապետ Ռեջեփ Ֆերդի բեյ:

Տրապիզոնի տեղահանության եւ կոտորածի դատավարությունը

Դատի տրված ներկա գտնվող մեղադրյալների անունները- Տրապիզոնի հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյ, Տրապիզոնի ոստիկանապետ Նուրի բեյ, Տրապիզոնի [գաղտնի] գործակալության տեսուչ Մուստաֆա էֆենդի, Տրապիզոնի ժանդարմի քննչական տեսուչի օգնական՝ կայմակամ Թալաաթ բեյ, Տրապիզոնի հյուրանոցի տնօրեն Նիազի էֆենդի, Տրապիզոնի առողջապահության տեսուչ Ալի Սայիբ բեյ:

Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալների անունները - Տրապիզոնի վալի Զեմալ Ազմի բեյ, [կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյ]:

Դատավճիռ

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին նաև բոլոր դատական փաստաթղթերը:

Մեղադրյալները և նրանց դատապաշտպանները ջանացին ուրանալ կատարված հանցանքը և պահանջեցին ազատ արձակել: Բայց իսլամի բարձր դրույթները, օսմանյան օրենքները ընդհանուր են բոլոր հպատակների համար և պաշտպանում են նրանց կյանքն ու պատիվը, ունեցվածքը և հասարակական իրավունքները հավասարապես: Եվ այս բոլորի անխափան գործադրումը կատարելապես մտնում է պետության պաշտոնյայի պարտականությունների մեջ:

Մեղադրյալներ՝ Տրապիզոնի նախկին վալի Զեմալ Ազմի բեյը, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը սերտորեն համագործակցել են ստացված գաղտնի հրամանագրերը իրականացնելու գործում: Արտաքուստ նրանք իբրև թե գործել են տեղահանության օրենքի հիման վրա, մինչդեռ այդ գաղտնի հրահանգների համատեղ իրականացումը համարձակություն է տվել նրանց՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերին կոտորելու և բնաջնջելու համար:

[124] Մեղադրական եզրակացության տեքստը, «Ալեմդար» օրաթերթ, 16-ը ապրիլի, 1919 թ.: Արաբատառ օսմաներենից հայերեն է թարգմանել Մելինե Անումյանը:

[125] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1989 թ., էջ 167-173:

Մի շարք հանցագործ, անառակ մարդկանցից և նույն մակարդակի մի քանի ժանդարմներից նրանց կազմած հրոսակախմբերը իբրև թե ուղեկցելու էին տեղահանված հայերի քարավանները: Մինչդեռ շտապ տեղահանության ենթարկված և պաշտպանության միջոցներից զուրկ հայերի քարավանները քաղաքից հեռացվելուց հետո, ամայի վայրերում տղամարդկանց առանձնացրել են կանանցից և վերոհիշյալ հանցագործներից կազմված չեթեների հրոսակախմբերը հարձակվելով՝ կողոպտել են նրանց իրերը և այնուհետև աներևակայելի դաժանությամբ սպանել և բնաջնջել բոլորին: Իսկ խեղճ կանակց մի այլ վայր տանելով՝ հափշտակել են նրանց զարդեղեններն ու շորերը և ենթարկել բռնաբարության: Այնուհետև ամիսներով ճանապարհներին քարշ գալուց հետո, շատերը մահացել են՝ բոլորովին հյուծված, տառապալի ուղևորությունից, սովից և ծարավից: Իսկ [ողջ] մնացածներին էրզինջանի ճանապարհով ուղարկել են հեռավոր վայրեր:

Տրապիզոնում մնացած կանանց ու երեխաների մի մասին իբրև թե պաշտպանելու նպատակով տեղավորել են հիվանդանոցներում և դերվիշների տներում: Այնուհետև, ծովային ճանապարհով այլ վայրեր տեղափոխելու նպատակով, խմբերով նստեցրել են նավերը և տեսադաշտից հեռու ծովի խորքերը տանելով՝ գցել են ջուրը և խեղդելով ոչնչացրել բոլորին: Այս դատավարության վերջին նիստում պարզվեց և մենք բոլորս համոզված ենք, որ կոտորածն ու կողոպուտը մտահղացված է եղել ոչ թե Տրապիզոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ՝ կանոնավոր ու խիստ կազմակերպված:

Վերոհիշյալ մեղադրյալներից հարկային տեսուչ Մեհմեդ Ալի էֆենդին, վաղեմի ծանոթ լինելով վալի Ջեմալ Ազմի բեյին, սերտ համագործակցել է նրա հետ, կատարել նրա հրամանները և նպաստել վալիի կատարած չարագործություններին և այդ

ողբերգական արարքների իրականացմանը: Իսկ վալի Ջեմալ Ազմի բեյը օգտագործել է նրան, նկատի ունենալով, որ նա սերտորեն առնչություն ունի լքյալ գույքի, գոհարեղենների, ռազմական արտակարգ հարկային պաշտոնյաների, ռազմական շինությունների, կապի հանձնաժողովների, զինվորական, հեռախոսային և անձնագրերի ստուգման տեսչությունների, ինչպես նաև «Կարմիր մահիկ» հիվանդանոցի և «Կանանց ընկերության« հետ:

Մեհմեդ Ալի բեյի թույլտվությամբ հայ կանանց և աղջիկներին իբրև թե «պատսպարման» քողի տակ հապճեպորեն հավաքել են մարդասիրական նպատակներով կառուցված հիվանդանոցում, դերվիշների տներում և այնուհետև հայրենասիրական գործ կատարած լինելու պատրվակով, որպես աղախին և կին օգտագործելու նպատակով՝ բաժանել տարբեր մարդկանց տները: Եվ այդպես, նրա մեղքով շատերը կուսապղծվել և ենթարկվել են այլևայլ բռնությունների: Այդ դժբախտություններին տվյալ վայրերում հապճեպորեն հավաքելու և կարճ ժամանակամիջոցում քաղաքից դուրս հանելու, կուսապղծելու և այլ բռնությունների ենթարկելու մասին գոյություն ունեն հավաստի վկայություններ: Նույնիսկ իրենից ստորադաս հարկային տեսչության քննիչը բազմիցս գրավոր և բանավոր զգուշացրել է, որ իր պաշտոնի հետ առնչություն չունեցող այդ ստոր գործերի մեջ խառնվելը կարող է ունենալ խիստ վտանգավոր հետևանքներ: Իսկ նա (Մեհմեդ Ալի էֆենդին) բոլորին կարևորություն չտալով դրան, գիտակցաբար շարունակել է օժանդակել հիշյալ Ջեմալ Ազմի բեյի քաղաքի ներսում կատարած անմարդկային, դաժանաբարո բոլոր հանցագործություններին: Ոստիկանապետ Նուրի էֆենդին, որը այլ պաշտոնատար անձնավորությունների հետ նշանակվել է հետևելու քաղաքի կարգուկանոնին, միևնույն ժամանակ ընդգրկված է եղել տեղահանության

կազմակերպման, գաղտնի ոստիկանության և գոհարեղենների պահպանության հանձնաժողովների մեջ: Նրան է հանձնարարվել հավաքելու, գրանցելու տեղահանված հայերի լքյալ գույքը: Մինչդեռ նա ոչ մի գործնական միջոց չի ձեռնարկել լքյալ գույքի պահպանման հարցում: Ավելին, նրա թույլտվությամբ հայերի լքյալ գույքի պահեստավորումը կատարվել է անվստահելի մարդկանց միջոցով, անկազմակերպ և առանց «դաֆթար» կազմելու: Այսպիսով, նրա մեղավորությամբ լքյալ գույքը հափշտակվելով մատնվել է կատարյալ կորստի:

Չնայած, որ նա այդ ապրանքների գողության մեջ մեղադրվող մի քանի պաշտոնատար անձնավորությունների ուղարկել է ռազմական ատյանի հետաքննությանը, այնուհանդերձ ո՛չ մի պաշտոնական կամ անպաշտոն միջոց չի ձեռնարկվել Զեմալ Ազմի բեյի և նրա պաշտոնակատարների արարքները սանձահարելուն, ինչպես նաև սաստելուն այն ոստիկաններին և ժանդարմներին, որոնք օգտվելով գիշերային պարետային ժամից, զբաղվել են թալանով և հափշտակությամբ: Նա նույնիսկ ականատես լինելով այդ ողբերգական տեսարանին՝ ոչ մի արգելք չի հարուցել, և ժանդարմները և ոստիկանները քաղաքում մնացած կանանց և երեխաներին խեղդելու նպատակով նավ բարձրացնելով՝ տարել են ծովի խորքերը:

Ըստ նրա տված ցուցմունքի, իբրև թե խորապես ազդվելով իր ներկայությամբ կատարված մի շարք դեպքերից, քաշվել է իր սենյակը և այն աստիճան հուզմունք ապրել, որ չի կարողացել միառժամանակ դուրս գալ փողոց: Այդ բոլորով հանդերձ, նա աչք է փակել վալիի կատարած արարքներին և նույնիսկ քաջություն չի ունեցել կամովին հեռանալու և պաշտոնը զիջելու մեկ ուրիշին, որը գուցե կարողանար կանխել այդ հանցագործությունները:

[Գաղտնի գործակալության] գործակալ Մուստաֆա բեյը,

միաժամանակ զինվորական լինելով, կարողացել է վաղուց ի վեր շահել Զեմալ Ազմի բեյի համակրանքը և սերտ հարաբերություն հաստատել նրա հետ: Օգտվելով այդ մտերմությունից, Մուստաֆա բեյը ձեռք է բերել զինվորական շատ կարևոր պաշտոններ, ինչպիսին է նավահանգստային և առևտրական զինվորական տեսչությունները: Մուստաֆա բեյը կարողացել է նաև իր պաշտոնավարությունը երկարաձգել շնորհիվ Զեմալ Ազմի բեյին ենթակա զինվորական հրամանատարների աջակցության և կենտրոնական կառավարության հովանավորության: Հայերից հափշտակված գույքի տեղափոխության ընթացքում նա, չարաշահելով իր պաշտոնը, զինվորական փոխադրական միջոցները տրամադրել է վալիին և նրա պաշտոնակատարներին:

Նրան պաշտպանելու միտումով վկայություն տվողները նշեցին, որ նա լավ հարաբերության մեջ գտնվելով վալիի հետ, իբր կարողացել է մի շարք հայերի ազատել տեղահանությունից: Լինելով քաղաքի մեծահարուստներից մեկը, իր անձնական շահի համար չի զոհաբերել իր պատիվը: Նույնիսկ վալի Զեմալ Ազմի բեյի ագահ բերանը փակելու համար, իրեն հանձնված գանձարկղի զարդեղենն ու դրամը առանց հաշվարկի տրամադրել է նրան և նյութական վնաս կրել:

Նուրի բեյի, Մեհմեդ Ալիի և գործակալ Մուստաֆա էֆենդիի օգտին արված այդ վկայությունները, ինչպես նաև նրանց դատապաշտպանների կողմից առաջ քաշված պարզաբանումները իրականության հետ ոչ մի առնչություն չունեն և բոլորովին անհիմն են:

Այսպիսով, [ռազմական ատյանը] միաձայն որոշում կայացրեց, որ ոստիկանապետ Նուրի էֆենդին, [գաղտնի ոստիկանության] գործակալ Մուստաֆա բեյը, իրենց պաշտոնավարության ընթացքում կատարած չարաշահումների համար հան-

ցավոր են ճանաչվում: Կալի Զեմալ Ազմի բեյը, [կուսակցության] պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը, [հարկային տեսուչ] Մուհամմեդ Ալի էֆենդին մեղադրվեցին կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածով:

Տեղի ունեցած խորհրդակցությունից հետո [ատյանը] Զեմալ Ազմի և Նայիլ բեյերին ճանաչեց որպես հանցագործության անմիջական մասնակից և պատժի չափ սահմանեց վերոհիշյալ 45-րդ հոդվածի առաջին մասը, ուր ասված է. «Մի խումբ անձնավորություններ մի ոճրագործություն կամ հանցանք խմբովին կատարելու դեպքում, կամ մի խումբ անձնավորություններ բազմաթիվ արարքներից կազմված մի ոճրագործություն կամ հանցանք գործելիս, ոճրագործության ընթացքում նրանցից յուրաքանչյուրը այդ արարքներից որևէ մեկը կամ մի քանիսը կատարելու դեպքում նույնպես գործակից են համարվում և պատժվում են ուղղակի հանցանք կատարողի նման»:

Մեհմեդ Ալի էֆենդին, հանցագործությանը անուղղակի կերպով մասնակցություն ունենալու համար, մեղադրվում է վերոհիշյալ հոդվածի երրորդ մասով, ուր ասված է.

«Որևէ հանցագործության կամ ոճրագործության իրականացմանը ինչ-որ ձևով օժանդակողները, այսինքն՝ սպառնալիքով կամ խարդավանքով գործարքի մեջ մտնել, դրամ կամ նվեր տալ, պաշտոնը չարաշահելով ազդեցություն բանեցնել. զենք, այլևայլ գործիքներ կամ միջոցներ հայթայթելով նախապատրաստական գործունեություն ծավալել, ինչ-որ ձևով հանցագործությանը նպաստել, դատապարտվում են այդ հանցագործությանը կամ ոճրագործությանը անուղղակի մասնակցություն ունենալու մեղադրանքով»:

Զեմալ Ազմի և Նայիլ բեյերը դատապարտվում են կայսերական զինվորական քրեական օրենսգրքի 171-րդ և քաղաքացիական քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածներով: Հիշյալ

171-րդ հոդվածում ասված է.

«Եթե մի խումբ մարդիկ, կանխամտածված ճնշում բանեցնելով, զինված կամ անզեն՝ խորտակելով դռներն ու ցանկապատերը կողոպտեն կամ փչացնեն պարենամթերքը, վաճառքի ապրանքները... դատապարտվում են մահվան»:

170-րդ հոդվածում ասված է.

«Կանխամտածված սպանություն կատարողները կամ իրենց մերձավոր ազգականներին, լինի հայր կամ պապ, մայր կամ տատ, առանց կանխամտածվածության սպանողները մահվան են դատապարտվում»:

Այս հոդվածների հիման վրա վերոհիշյալ Զեմալ Ազմի և Նայիլ բեյերը դատապարտվում են մահվան, իրենց ունեցվածքի բռնագրավումով: Մեհմեդ Ալին վերոհիշյալ քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի ստորև բերված երկրորդ մասի հիման վրա դատապարտվում է 10 տարվա բանտարկության.

«Մի ոճրագործության կամ հանցագործության անուղղակի մասնակցություն ունեցած անձնավորությունները օրենքի չբացահայտված մասերում, պատժի են ենթարկվում հետևյալ կերպ. եթե գլխավոր հանցագործին մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աքսոր է սպասվում, ապա մեղսակիցներին 10 տարուց ոչ պակաս ժամանակավոր բանտարկություն»:

[Գաղտնի ոստիկանության] գործակալ Մուստաֆա էֆենդին, ոստիկանապետ Նուրի բեյը ստորև բերված քաղաքացիական քրեական օրենսգրքի 172-րդ հոդվածի հիման վրա դատապարտվում են մեկական տարվա բանտարկության և երկուական տարի ժամկետով պաշտոնազրկման:

«Օրենսգրքում լուսաբանված հոդվածներից բացի, ինչ ձևով էլ պատահած լինի, պաշտոնը չարաշահող անձնավորությունը իր պաշտոնավարության աստիճանի համաձայն դա-

տապարտվում է (...) մինչև երեք տարի բանտարկության: Եթե մեղմացնող հանգամանքներ լինեն, 15-ից (...) ոչ պակաս ժամկետով բանտարկություն է հասնում կամ էլ 5-ից մինչև 100 լիրա տուգանք: Բոլոր դեպքերում տևապես կամ առժամյա պաշտոնազրկումը պարտադիր է»:

Պաշտոնական (...-ilk)-ից հայտնված է, որ մեղադրյալ Նիազի էֆենդին ծովից հայտնաբերված ինքնաշարժ տորպեդները հավաքելու և տեղափոխելու նպատակով երկու անգամ մոտորային նավով մեկնել է Ստամբուլ, որպես նավը վերանորոգելու համար որոշ ժամանակ մնացել է այնտեղ: Այնուհետև նրա Տրապիզոն վերադարձը չի համընկել հայերի տեղահանության տարեթվի հետ: Նրա առնչությունը տեղահանության, կոտորածի և լքյալ գույքի հափշտակման հետ բավարար ապացույցներով չի հաստատվում: Միայն պարզվում է, որ Զեմալ Ազմի բեյի կարգադրությամբ լքյալ գույքի մի մասը աճուրդով և էժան գնով ծախելու համար հանձնվել է հիշյալին: Այս վաճառքը և էժան գնով ծախելու պարագան զուգադիպել է պատերազմի ամենավտանգավոր ժամանակամիջոցին, այսինքն՝ ռմբակոծության շրջանին: Բացի այդ, Զեմալ Ազմի բեյի կարգադրությամբ այդ ինքնաշարժ տորպեդների տեղափոխման խնդիրը ընդհատել է վերոհիշյալ վաճառքի աշխատանքները: Փաստեր չկան նաև, որ նա կաշառք կամ շահույթ ձեռք բերելու նպատակով գործարքի մեջ մտած լինի որևէ մեկի հետ: Քրեական օրենսգրքում չկա նաև մի հոդված, որը դատապարտեր աճուրդի հետ կապված նրա գործունեությունը: Հետևաբար՝ նա պատասխանատվությունից դուրս է մնում, քանի որ չի մասնակցել կոտորածին, կողոպուտին և ընդհանրապես տեղի ունեցած այլ հանցագործություններին:

Կատարված հանցագործություններին չի մասնակցել նաև կայմակամ Թալաաթ բեյը: Դատարանում տրված մի շարք

վկայությունների համաձայն, «սովորութային հարկերի» հավաքման հանձնախմբում իր պարտականությունները կատարել է առանց չարաշահումների:

Այսպիսով, [կայմակամ] Թալաաթ և Նիազի բեյերը վերոհիշյալ հանցագործությունների հետ առնչություն չունենալու պատճառով բանտից ազատ են արձակվում: Մեղադրյալ՝ առողջապահության տեսուչ Ալի Սայիբ բեյի նկատմամբ որոշակի հանցանշան չլինելու պատճառով դատաքննությունը կարճվում է:

[Ռազմական ատյանի] միաձայն որոշումը հրապարակվեց բոլորի ներկայությամբ, իսկ Զեմալ Ազմի և Նայիլ բեյերի նկատմամբ՝ հեռակա կարգով:

1919 թ. մայիսի 22

Նազըմ, Զեքի, Մուստաֆա, Ալի Նազըմ, Ռեջեփ Ֆերդի

Ռազմական արտակարգ ատյանի

արձանագրական հանձնախմբի պետ՝ Աբիդին Դավեր.

Takvim-i Vekayi, 22 Mayis 1335 (1919) N 3616

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Համշենահայերի համայնքների ձեւավորումը Ռուսական կայսրությունում եւ նրանց հետագա վիճակը ԽՍՀՄ-ում

Համշենահայերի գաղթը դեպի Ռուսական կայսրություն 19-րդ դարում

Մինչեւ 1915թ. Հայոց ցեղասպանությունը՝ Ռուսաստանի ծովափնյա շրջաններում եւ Աբխազիայում ձեւավորվել էին համշենահայերի բավականին մեծ համայնքներ: Օսմանյան կայսրությունում դարեր շարունակ համշենահայերի նկատմամբ գործադրված կրոնափոխության քաղաքականության հետեւանքով համշենցիները նախ՝ սփռվեցին Սեւ ծովի հարավային ափերին՝ Սամսունից մինչեւ Բաթում, իսկ այնուհետեւ տարածվեցին ռուսական ափերին: Ռուսական կառավարությունը արգելք չէր հանդիսանում հայ տարրին, ավելին՝ միշտ էլ պատրաստակամ է ընդունել նրանց, քանի որ նոր յուրացվող այդ շրջաններում հարկավոր էին ոչ միայն աշխատող մարդիկ, այլեւ լեռնականների դեմ մշտապես հակամարտությունների մեջ գտնվող եւ մեծ ու փոքր ռազմական բախումներ ունեցող իշխանությանը հարկավոր էր իր քաղաքականության նկատմամբ

լոյալ, առավել եւս՝ քրիստոնյա ազգաբնակչություն, որը կամրապնդեր կայսրության տնտեսական եւ ժողովրդագրական դիրքերը երկրի հարավային եւ ծովափնյա շրջաններում:

Նախքան Եկատերինոդարի (ներկայիս Կրասնոդարի) երկրամասում եւ Աբխազիայում հիմնավորվելը՝ համշենահայերը բնակություն են հաստատել Ղրիմում, որտեղ մեծ էր նաեւ անեցի հայերի թիվը: Հետագայում նաեւ Ղրիմից են տեղափոխվել Եկատերինոդարի մարզի ծովափնյա շրջաններ: Լ. Խաչիկյանի կարծիքով՝ Ղրիմի հայերի մեծ մասը համշենցիներ էին, տրապիզոնցիներ, սպերցիներ եւ բաբերդցիներ[126]: Ղրիմում հայության թիվն այնքան շատ է եղել, որ դեռեւս 15 դարում թերակղզին եւրոպացիների կողմից կոչվել է Ծովային Հայաստան:

19-րդ դարի կեսերին արձանագրվում են համշենահայերի տեղափոխության առաջին դեպքերը: Այսպես՝ Նովոռոսիյսկ քաղաքի հիմնադրումից հետո այստեղ բնակություն են հաստատում Սինոպից եւ Տրապիզոնից եկած հայեր[127]:

Թեեւ Պոնտոսից դեպի նշված ռուսական շրջաններ համշենահայերը տեղափոխվել են 19-դ դարի երկրորդ կեսի ողջ ընթացքում[128], սակայն նրանց թիվը կտրուկ մեծացավ հատկապես 1894-96թթ. հայերի կոտորածների ժամանակ: Իսկ 1915-23թթ. Ցեղասպանությունից մի կերպ փրկված ողջ պոնտահայության հիմնական մասը տեղափոխվեց Ռուսաստանի ծովափնյա շրջանները: Այլ պետություններում թիվը մեծ չէ. թեեւ մինչեւ Ամերիկա էլ հասան ցեղասպանությունից փրկվածները,

---

[126] Լ. Խաչիկյան, նշվ. Աշխ., էջ 142:

[127] Միքայելյան Վ., Ծովակալ Լ. Մ. Սերեբրյակով (Ղազար Մարկոսի Արծաթագործյան), Երեւան, 1979թ., էջ 265:

[128] Այս մասին մանրամասն տե՛ս М.Г. Минасян, Армяне причерноморья, Ереван, 1990, Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը եւ երգարվեստը, (նյութեր եւ ուսումնասիրություններ), Երեւան, 2009:

սակայն քիչ թե շատ նկատելի թիվ են կազմում միայն Ֆրանսիայում եւ Պոլսում: Համշենահայերի մեծամասնությունը հիմնականում բնակվում է Աբխազիայում եւ Սեւ ծովի ռուսական ափերին:

Այս շրջանները համշենահայերին գրավում էին մի քանի պատճառով. նախ՝ մոտ էին իրենց նախկին բնակության վայրերին, այստեղ հաստատվելով՝ նրանք չէին կորցնում կապը հարազատների հետ, երկրորդ՝ այս շրջանների բնակլիմայական պայմանները շատ նման էին Սեւ ծովի պոնտական ափի պայմաններին, ուստի կարող էին ընտրել նույն զբաղմունքը, երրորդ՝ Ռուսական կայսրությունը նոր էր նվաճել այդ շրջանները. դրանք գրեթե ամայի էին եւ կարիք ունեին եւ բնակեցման, եւ մշակման: Հայերը համեմատաբար կարճ ժամանակահատվածում կարողացան լուրջ հաջողությունների հասնել Աբխազիայում եւ Կրասնոդարի ծովափնյա շրջաններում: Հատկապես բարձր գնահատվեց նրանց բերած «Տրապիզոն» եւ «Սամսոն» տեսակի ծխախոտը, որի մշակությունն այնքան ընդարձակվեց, որ շուտով Ռուսաստանը ծխախոտ ներմուծող երկրից վերածվեց ծխախոտ արտահանող երկրի: Համշենահայերի տնտեսական հաջողություններն ակնհայտ էին, ինչը նորանոր ասպարեզներ էր բացում նրանց առջեւ:

Մինչեւ 1915թ. Ռուսաստանում բնակություն հաստատած հայերի մի մասը դեռեւս հույս ուներ եւրբեւէ վերադառնալ հայրենի Պոնտոս, սակայն Հայոց ցեղասպանությունը ոչ միայն խորտակեց նրանց հույսերը, այլեւ այս շրջանները հեղեղեց բազմահազար համշենահայ գաղթականներով: Պետք է ասել, որ 1915-ից հետո եկածների վիճակը փոքր-ինչ մեղմվում էր այն հանգամանքով, որ գրեթե բոլորն էլ այս շրջաններում ունեին բարեկամներ եւ ազգականներ, ինչը դյուրացնում էր նորեկների կեցության ու աշխատանքի հարցը:

հետ կապերի սերտացման համար: Այդ ծրագրերից հատկապես արդյունավետ են նրանք, որ կազմակերպվում են Հայաստանում՝ Սփյուռքի երիտասարդության մասնակցությամբ: Սակայն, ցավոք, երիտասարդները վերադառնալով բնակության վայրեր (խոսքը Ռուսաստանի եւ ԱՊՀ այլ երկրների մասին է)՝ հիմնականում չեն գտնում ձեռք բերածի պահպանման եւ զարգացման պայմաններ. հայմայնքային կառույցները չեն կարողանում ստեղծել համապատասխան միջավայր:

Առավելաբար համշենահայերով բնակեցված ծովափնյա շրջաններում այսօր գործում են հետեւյալ համայնքային եւ կրթամշակութային կազմակերպությունները՝ ըստ շրջանների.

Անապայի շրջան

Համայնքն ունի եկեղեցի, մշակութային խումբ: Անապա քաղաքում գործում է ՑԱՆԿ միությունը:

Հայկաձոր ավանի համայնքն ունի երկու ժամատուն, պարախումբ:

Ապշերոնսկի շրջան

Ապշերոնսկի համայնքն ունի եկեղեցի, մշակութային միություն, համայնքում գործում է ՀԱՄՇԵՆ գիտալրատվական կենտրոնը:

Խադիժենսկում նույնպես գործում է համայնքային կառույց:

Գորյաչեկյուչեւսկի շրջան

Ունի համայնքային կառույց, ժամատուն:

Տուապսեի շրջան

Տուապսե քաղաքում գործում է ՀԱՄՇԵՆ միությունը, որն ունի երգի եւ պարի ժողովրդական համույթ:

Շահումյան ավանում գործում է Հայկական մշակութային-բարեգործական միությունը, «Հայկական շրջան» անունով թանգարանը: Համայնքն ունի եկեղեցի:

Նովոմիխայլովսկի ավանում գործում է շրջանային ՄԻԱՑՈՒՄ միությունը: Համայնքն ունի երկու նոր եկեղեցի: Ավանում գործում է նաեւ ՈՀՄ-ի շրջանային բաժանմունք:

Տենգինկա ավանում գործում է ՄԻԱՑՈՒՄ միության բաժանմունքը: Ավանն ունի երկու եկեղեցի՝ նոր եւ հին:

Ձուբգա ավանում գործում է ՄԻԱՑՈՒՄ միության ավանային բաժանմունքը:

Բելորեչենսկի շրջան

Ունի համայնքային կառույց

Ադիգեա Հանրապետություն

Մայկոպ քաղաքում՝ համայնքային կառույց:

Մայկոպի շրջանի Տուլսկի ավանում գործում է մշակութային միություն:

Սոչի քաղաք

Այստեղ գործում է ՍԵՒԱՆ միությունը, ունի քաղաքային մի քանի մասնաճյուղեր:

Սոչիի կենտրոնական շրջանում՝ ՍԵՒԱՆԻ մասնաճյուղ: Շրջանն ունի Ազգային տուն, մշակութային խումբ, կիրակնօրյա դպրոց, ունի եկեղեցի կառուցելու ծրագիր:

Ադլերի շրջան

Ադլերի շրջանում գործում է ՍԵՒԱՆԻ շրջանային բաժանմունքը: Համայնքն ունի միջնակարգ դպրոց եւ եկեղեցի, շրջանի գյուղական դպրոցներում կան հայկական բաժանմունքներ: Ադլեր քաղաքում գործում է ՀԱՄՇԵՆԱԿԱՆ ՏՈՒՆ թանգարան-սրճարանը: Համայնքն ունի երգի-պարի երկու ինքնագործ խումբ:

Խոստայի շրջան

Գործում է ՍԵՒԱՆԻ բաժանմունքը:

Լազարեւսկի շրջան

Գործում է ՍԵՒԱՆԻ բաժանմունքը:

Շրջանի 18 հայկական գյուղեր ունեն երգի-պարի համույթներ: Լազարեւսկ քաղաքի ՀԱՄՇԵՆ եւ ՆԱԻՐԻ ժողովրդական համույթները հայտնի են կատարողական բարձր մակարդակով:

Համայնքում գործում է ՉԱՅՆ ՀԱՄՇԵՆԱԿԱՆ գրական միությունը:

Վերին Լոռ եւ Սերգեյ Պոլե ավաններում կան հայկական դպրոցներ, իսկ շրջանի գյուղական դպրոցներն ունեն հայկական բաժանմունքներ: Լազարեւսկ քաղաքում գործում է ազգա-

յին մշակույթների մեծ կենտրոն, որի տարբեր խմբակներում ընգրկված են մեծ թվով հայ երեխաներ: Կենտրոնի տնօրենն է Գրիգոր Մազլումյանը:

Համշենահայերով բնակեցված մի շարք բնակավայրերում դեռեւս չեն ձեւավորվել համայնքային կառույցներ: Բազմաթիվ այլ խոշոր քաղաքներում (Նովորոսիյսկ, Կրասնոդար, Արմավիր, Պյատիգորսկ, Կիսլովոդսկ, Մինվոդի, Ստավրոպոլ, Ռոստով եւ այլն) եւ հարակից շրջաններում ու գյուղերում էլ, ուր համշենահայերն ապրում են այլ շրջաններից եկած հայերի կամ օտար ազգությունների հետ, հայրենակցական միություններ կամ առանձին համայնքներ չունեն. ընդգրկված են տարբեր համայնքների ու միությունների մեջ:

Լրատվամիջոցներ

Կրասնոդար քաղաքում հրատարակվում է ռուսալեզու ԵՐԿՐԱՄԱՍ ամսաթերթը:

Համշենահայերի համայնքները Աբխազիայում

Մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը՝ 1922թ., համշենահայերը Աբխազիայում ապրել են համայնքային կյանքով. ունեցել են եկեղեցիներ, դպրոցներ, ազգային եւ բարեսիրական հաստատություններ, քաղաքական կուսակցություններ, հրատարակում էին թերթեր. Սուխումում հրատարակվում էին «Լույս» (1912-13 թթ.) գրական-ժողովրդական շաբաթաթերթը, «Նոր կյանք» (1918) քաղաքական-հասարակական լրագիրը, «-

Փարոս» (1919) քաղաքական, հասարակական լրագիրը, «-Կարմիր աստղ» (1920-23 թթ.) թերթը[135]:

Խորհրդայնացումից հետո բոլոր ազգային հաստատություններն ու կազմակերպությունները արգելվեցին, 10-15 տարում փակվեցին նաեւ եկեղեցիները, թերթերը. տպագրվում էր միայն կոմունիստական «Կարմիր աստղ» թերթը: Ի տարբերություն Ռուսաստանի՝ այստեղ հայկական դպրոցները պահպանվեցին: Ավելին՝ բոլոր հայկական բնակավայրերում, որտեղ չկային, բացվեցին դպրոցներ, իսկ գյուղերից մեկում՝ նաեւ հայկական մանկավարժական ուսումնարան: 50-60-ականներին Սուխումում գործում էին հայկական թատրոն եւ հրատարակչություն: Հայերի այս համեմատաբար նպաստավոր կացության ստեղծման մեջ երկրորդական չէր Վրաստանի իշխանությունների՝ ռուսացման դեմ վարվող քողարկված քաղաքականության դերը: Խորհրդային վարչակարգի թուլացման եւ Արցախյան շարժման հետեւանքով Աբխազիայի հայության ազգային գիտակցությունը զարթոնք ապրեց. ստեղծվեցին ազգային մշակութային, բարեգործական կազմակերպություններ, հրատարակվել սկսեցին «Կռունկ» ռուսալեզու եւ «Համշեն» հայալեզու թերթերը, գյուղերից մեկում՝ Լեչկոպում, բացվեց աղոթատուն: Արցախին օգնելու նպատակով պարբերաբար կազմակերպվում էր դրամահավաք կամ այլ կարգի օգնություն:

Ձեւավորվող համայնքային կյանքի վերելքի պայմաններում՝ 1992 թ. օգոստոսի 14-ին, սկսվեց վրաց-աբխազական պատերազմը, որը տեւեց մեկ տարուց ավելի: Ստեղծված իրավիճակում հայերը ստիպված էին ազգային հատուկ զորաջոկատով մասնակցել պատերազմին՝ հոգուտ աբխազական կողմի եւ վճռական դերակատարություն ունենալ երկրի ազատագր-

[135] Վարդանյան Ս., Նշվ., աշխ., էջ 26:

ման գործում: Բազմաթիվ հայ մարտիկներ արժանացան ազգային հերոսի կոչման եւ այլ բարձրագույն պարգեւների:

Պատերազմը մեծ վնասներ պատճառեց երկրին եւ հատկապես նոր ձեւավորվող հայկական համայնքին. ավերվել, թալանվել կամ մեծապես վնասվել էին հայկական դպրոցները, գրադարանները, համայնքային գրասենյակներն ու ողջ գույքը: Ժողովուրդը հայտնվել էր ծայր աղքատության մեջ, հազարավոր հայեր ստիպված հեռացան Ռուսաստան:

Հետագա տարիներին աստիճանաբար վերականգնվեցին համայնքային կառույցները, դպրոցներն ու մյուս հաստատությունները: Հետպատերազմյան 5-6 տարիներին հայերը լուրջ մասնակցություն ունեին պետական կառավարման համակարգում. 3-4 պատգամավոր, խորհրդարանի փոխխոսնակ, փոխվարչապետ, նախարար, մի քանի փոխնախարար, պետական կոմիտեների եւ վարչությունների նախագահներ, բազմաթիվ միջին օղակի պաշտոնյաներ, 50-ից ավել գյուղապետեր, բարձրաստիճան պաշտոնյաներ բանակում, անվտանգության մարմիններում, ոստիկանության մեջ եւ այլն:

Վերջին տարիներին գործադիր մարմիններում հայերի թիվը նվազեց: Դրանում իրենց բացասական դերակատարությունն ունեցան նաեւ համայնքային տարբեր կառույցների ու ղեկավարների որոշ տարակարծությունները, անհամաձայնություններն ու հակադրությունները: Հետագայում գործադրված ջանքերի շնորհիվ դրանք աստիճանաբար վերացան, եւ 2004 թ. ապրիլին բոլոր կազմակերպությունների համաձայնությամբ երկարատեւ նախապատրաստական աշխատանքներից հետո հրավիրված համագումարում ստեղծվեց մեկ միասնական կառույց՝ Աբխազիայի հայկական համայնքը. մյուս բոլոր կազմակերպությունները հայտարարվեցին լուծարված: Սրանով համայնքի ձեւավորման ու ետպատերազմյան վերականգնման փուլն ավարտվեց:

Համայնքի համախմբումը մեծապես նպաստեց ընդհանուր բարոյահոգեբանական վիճակի առողջացմանը, հայության դիրքերի ամրապնդմանը եւ լուրջ նախադրյալներ ստեղծեց երկրի հասարակական, քաղաքական ու տնտեսական կյանքում նրա դերի աճի համար: Սակայն ազգային կյանքի, ազգային դիմագծի պահպանման տեսակետից համայնքի առջեւ ծառացած խնդիրները բավականին բարդ են եւ դժվար լուծելի՝ գրեթե բոլոր բնագավառներում:

Կրթական կյանքը

Պատերազմից առաջ Աբխազիայում կար 50-ից ավելի հայկական դպրոց, պետական համալսարանն ուներ եւ ասօր էլ ունի տարրական դասարանների մանկավարժության բաժին: Սակայն վերջին տարիներին հայկական դպրոցների թիվը գնալով կրճատվում է: Պատճառները բազմաթիվ են. կա ուսուցիչների խիստ պակաս, չկան ծերացածներին փոխարինողներ, ուսուցիչների մի մասն էլ հեռանում է դպրոցից՝ ցածր աշխատավարձի պատճառով: Հայաստանի հետ կապի գրեթե իսպառ բացակայության, Հայաստանում ուսումը շարունակելու նյութական դժվարությունների պատճառով հայերը գերադասում են ռուսական դպրոցները: Այսօրվա դրությամբ գործում է 28 հայկական դպրոց՝ մոտ 2000 աշակերտով: Երբեմնի ամենամեծ Սուխում քաղաքի Հ. Թումանյանի անվան հայկական միջնակարգ դպրոցում այժմ սովորում է մոտ 200 աշակերտ (մինչպատերազմյան շրջանում այս թիվը հասնում էր 1500-ի, իսկ Աբխազիայի բոլոր հայկական դպրոցներինը՝ 12000-ի):

Հայաստանից ստացվող միակ աջակցությունը դասագրքերն են: Այնինչ դպրոցների պահպանման համար հարկավոր է շատ ավելին՝ ուսուցիչների վերապատրաստում, մեթոդական, ծրագրային, մասնագիտական եւ այլ կարգի աջակցություն, Աբխազիայի հայ շրջանավարտների համար Հայաստանում բարձրագույն կրթություն ստանալու արտոնյալ պայմաններ, համայնքի եւ հայրենիքի միջեւ կրթական, մշակութային, մարզական, լրատվական, տնտեսական եւ այլ կապերի հաստատում եւ ամրապնդում: Համայնքն անմասն է նույնիսկ Հայաստանում կազմակերպվող համահայկական մարզամշակութային միջոցառումներին:

Մշակութային կյանքը

Մշակութային կյանք, որպես այդպիսին, գրեթե գոյություն չունի: Դպրոցներն իրեց աշակերտական ինքնուս խմբերով կազմակերպում են որոշ միջոցառումներ, նշում ազգային տոնը եւ այլն: Համայնքի միակ քիչ թե շատ կայացած մշակութային միավորը «Ծովաշունչ» երգի-պարի ինքնագործ համույթն է:

Կա նաեւ հայ գրողների միություն, որը վերջին տարիներին որոշ աշխուժություն է դրսեւորում. հրատարակում է սեփական եւ թարգմանական (աբխազերենից) գրքեր:

Աբխազիայում կան նաեւ մի քանի տասնյակ հայ գեղանկարիչներ, ովքեր անդամակցում են Աբխազիայի նկարիչների միությանը:

Մամուլ եւ լրատվամիջոցներ

1990 թվականից համայնքում լույս էին տեսնում «Կռունկ» եւ «Համշեն» թերթերը: Առաջինը այլեւս լույս չի տեսնում, իսկ երկրորդը, թեեւ մեծ դժվարություններով, դեռեւս շարունակում է հրատարակվել: Համայնքը չունի հրատարակչություն, տպարան: Հայկական մամուլը սահմանափակվում է այսքանով: Հայաստանից որեւէ թերթ, ամսագիր չի հասնում, չեն հասնում նաեւ ռադիոհեռուստատեսային հաղորդումներ:

Մասնավոր նախաձեռնությամբ Հայաստանից այստեղ է առաքվում «Ձայն համշենական» երկամսյա թերթը:

Եկեղեցական կյանք

Խորհրդային շրջանում փակվեցին եկեղեցիները եւ այլեւս չբացվեցին: 20-րդ դարի 70-80-ականներին տեղի հայ մտավորականները մի քանի անգամ դիմեցին Վրաստանի եւ միութենական իշխանությունների ամենաբարձր ատյաններ՝ Աբխազիայում գոնե մեկ հայկական եկեղեցի ունենալու խնդրանքով, սակայն՝ ապարդյուն: Վերակառուցման տարիներին նոր ծեւավորվող համայնքը մի քանի փորձ արեց, բայց կարողացավ ունենալ լոկ մի աղոթատուն: Միայն վերջին տարիներին մեծ ջանքերի գնով հնարավոր եղավ Գագրա քաղաքում կառուցել եկեղեցի՝ Հարավային Ռուսաստանի թեմի հովանու ներքո:

Թեեւ սա լուրջ ձեռքբերում է, սակայն հայաշատ Սուխումի եւ Գուլուրիփշի շրջաններում նույնպես զգացվում է դրա կարիքը, քանզի 100-150 կմ հեռավորության վրա գտնվող Գագրայի եկեղեցին ի վիճակի չէ բավարարելու Աբխազիայի այս մեծ շրջանների հայերի հոգեւոր պահանջները: Խնդրի կարեւորութ-

յունը կայանում է նրանում, որ հայության օրեցօր աճող հոգեւոր պահանջմունքներին փորձում են բավարարություն տալ կամ Պրովոսլավ եկեղեցին, կամ Ռուսաստանից ներթափանցած տարաբնույթ աղանդները:

Հարցը պահանջում է շուտափույթ լուծում, որովհետեւ աղանդների մեջ ընդգրկվածները ոչ միայն օտարվում են հայությունից, այլեւ ակտիվ գործունեություն են ծավալում՝ իրենց շարքերն ընդլայնելու ուղղությամբ:

Մեկ կողմից՝ վերոնշյալ բազմաբնույթ առարկայական դժվարություններն ու հոգսերը, մյուս կողմից՝ Հայաստանի հետ կապերի բացակայությունը, դպրոցների օրեցօր խորացող ճգնաժամը, սրանց հետեւանքով ռուսական ազդեցության կտրուկ մեծացումը լրջորեն սպառնում են համայնքի ազգային դիմագծի խաթարմանը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Տեղեկություններ կրոնափոխ համշենցիների վերաբերյալ

Բնակության վայրերն ու խմբերը

20-րդ դարի 20-ական թվականները ինչպես ողջ հայության, այնպես էլ համշենահայերի համար եղան բախտորոշ. բռնի իսլամացման երկարատեւ ու հետեւողական քաղաքականության, հալածանքների եւ Ցեղասպանության հետեւանքով համշենահայությունը բաժանվեց երկու մեծ խմբի.

1. Թուրքիայի պոնտական ափին բնակվող իսլամացած համշենահայեր. սրանց կոչենք հարավային համշենահայեր:

2. Սեւ ծովի աբխազական եւ ռուսական ափերին բնակվող քրիստոնյա համշենահայեր: Սրանց էլ կոչենք հյուսիսային համշենահայեր:

Նման բաժանման հիմքում ընկած է երեք կարեւոր գործոն.

ա. բնակության վայրը,

բ. դավանանքը,

գ. լեզվական-մշակութային հանգամանքը:

Հարավային՝ իսլամացած հատվածը բնակվում է Թուրքիայի պոնտական ափին, դավանում է սունիի իսլամը, հիմնա-

կանում գտնվում է լեզվական-մշակութային միեւնույն դաշտում: Սրանք իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի.

1. Խոփա-հեմշիլներ. բնակվում են Արդվինի նահանգի Խոփա քաղաքում եւ շրջակա երեք տասնյակ գյուղերում, իրենց կոչում են՝ թուրքերենով՝ հեմշիլ, Համշենի բարբառով՝ *հոմշեցի,* տիրապետում են Համշենի բարբառին, որին իրենք տվել են *հոմշէցնակ (հոմշէսնակ)* անվանումը[136]:
2. Բաշ-հեմշիլներ. բնակվում են Ռիզեի նահանգում, ուր 8-րդ դարում ձեւավորվեց Համշենի իշխանությունը, եւ ավելի արեւմուտք ընկած տարածքներում: Թրքախոս են, Համշենի բարբառից բավականաչափ բառեր են պահպանել իրենց խոսվածքային լեզվում:

Քրիստոնյա հատվածը բնակվում է Սեւ ծովի ռուսական եւ աբխազական ափերին, Հայ Առաքելական եկեղեցու դավանանքի հետեւորդ է, գտնվում է լեզվական-մշակութային միեւնույն դաշտում:

Այստեղ պետք է կատարել մեկ պարզաբանում. թե Ցարական Ռուսաստանը, թե Խորհրդային Միությունը, ըստ էության, նույն պետությունն էին, իսկ Աբխազիայի՝ Վրաստանի կազմի մեջ կամ անկախ լինելն այս տեսակետից էական չէ: Այսօր էլ Աբխազիան փաստորեն գտնվում է Ռուսաստանի տիրապետության տակ:

Հարկ է անդրադառնալ նաեւ լեզվական հարցում գործող մի հետաքրքիր օրինաչափության. իսլամացած հատվածի համար թուրքերենը մայրենի լեզու է, ընդհանուր՝ բոլորի համար: Սակայն Արդվինի նահանգի 35-40 հազար հայությունը, ինչպես նշեցինք, տիրապետում է նաեւ Համշենի բարբառին, թեեւ վերջին 25-30 տարում այն որոշ նահանջ է արձանագրում:

Համանման գործընթաց է նկատվում քրիստոնյա հատվածի մեջ. եթե 50-60 տարի առաջ Համշենի բարբառը (նաեւ՝ գրական հայերենը) հասկանալի էր գրեթե բոլորին եւ կենցաղում հիմնական գործածական լեզուն էր, ապա այսօր նույնը չի կարելի ասել. հատկապես քաղաքաբնակ համշենահայության մեջ ռուսերենը դարձել է գերիշխող նաեւ կենցաղում: Իսկ երիտասարդ սերունդը գրեթե ամբողջությամբ ռուսերեն լեզվի ազդեցության տակ է:

Համշենահայությանն ըստ բնակության վայրի, դավանանքի եւ լեզվի՝ բաժանում են նաեւ երեք հիմնական խմբի (Բերտ Վուքս)[137].

ա) Արեւմտյան համշենահայեր. ապրում են թուրքական Սամսոն, Օրդու, Կիրասոն, Տրապիզոն եւ Ռիզե նահանգներում: Սրանք հիմնականում թրքախոս են: Դավանում են սուննի իսլամը:

բ) Արեւելյան համշենահայեր. բնակվում են Արդվինի նահանգում, հայախոս են. պահպանել են Համշենի բարբառը: Դավանում են սուննի իսլամը:

գ) Հյուսիսային համշենահայեր. բնակվում են Աբխազիայում եւ Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում, խոսում են Համշենի բարբառի Օրդուի, Ձանիկի, Տրապիզոնի խոսվածքներով, տիրապետում են ռուսերենին, մեծ մասը՝ նաեւ գրական արեւելահայերե-

---

[136] *Հոմշէցնակ* (հոմշէսնակ) ձեւը զուտ հայկական ձեւ է, նշանակում է *Համշենի բարբառով* կամ *համշեներեն:* Լեզվաբան Բերտ Վուքսը, հավանաբար այս բանը չգիտենալու հետեւանքով, գործածության մեջ է դրել բառի աղավաղված *հոմշեցմա* ձեւը, որը, ցավոք, տարածում է գտել անգամ որոշ համշենցիների մեջ:

[137] Vaux B., The Forgotten Black Sea Armenians, Columbia University, 1996, April 2, p. 1.

նին: Քրիստոնյա են, Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդ:

Նման բաժանումը որոշ տրամաբանություն ունի, սակայն անտեսում է առավել ընդհանուր օրինաչափությունները, քանզի եթե որպես պայման ընդունենք լեզվական փաստը, Խոփայի հայերին կարելի է մտցնել երկրորդ խմբի մեջ, իսկ դավանանքի եւ տարածվածության ավազանի հաշվառմամբ նրանք առարկայորեն առաջին խմբում են:

Համշենահայերի համայնքներ կան նաեւ Ամերիկայի ու Եւրոպայի մի քանի երկրներում: Վերջին տասնամյակներին Թուրքիայից արտագաղթած մահմեդական համշենահայերի (հեմշիլների) նոր համայնքներ են ձեւավորվում եւրոպական երկրներում, որոնցից ամենամեծը Գերմանիայում է:

Բացի իրենց պատմական հայրենիքից՝ բազմաթիվ համշենահայեր բնակվում են նաեւ Թուրքիայի այլ բնակավայրերում՝ Իզմիթի շրջանում, հատկապես խոշոր բնակավայրերում՝ Էրզրումում, Անկարայում, Իզմիրում, Ստամբուլում եւ այլն:

Իսլամացած համշենահայերն իրենց կոչում են հեմշիլ (համշենցի). նրանց այսպես են կոչում նաեւ թուրքերն ու մյուս ժողովուրդները: Սա խիստ հետաքրքիր փաստ է. կորցնելով հավատը, մեծ մասը՝ նաեւ լեզուն, նրանք չկորցրին իրենց ինքնության գիտակցությունը, չթրքացան եւ թուրքերին էլ պարտադրեցին իրենց կոչել այս կերպ՝ իրենց հայրենիքի անունով: Այս հարցը ավելի լավ, քան իսլամացած համշենահայը, ոչ ոք չի կարող ձեւակերպել: Ահա համշենցի գրող, բանահավաք, մտավորական Մահիր Օգքանի տեսակետը. «Մուսուլման համշենցիների համար Համշենը էթնիկական պատկանելիություն է արտահայտում: Սխալ չի լինի ենթադրել, թե Համշեն անունն սկսել է այդ իմաստը կրել համշենցիների մահմեդականացումից հետո: Մուսուլման դարձած համշենցիներն այդ ժամանակաշրջանում խուսափել են իրենց բնորոշել քրիստոնեության հետ նույնացվող ինքնություն ունեցող հայությամբ: Դա չափազանց հասկանալի իրավիճակ է: Սակայն մահմեդական համշենցիները միևնույն ժամանակ ցանկացել են շեշտել, որ իրենք իրենց լեզվով եւ մշակույթով տարբերվում են մյուս մուսուլման ժողովուրդներից՝ թուրքերից, լազերից, քրդերից, իսլամացած հույներից և այլն: Ինչպես երևում է, նրանց այդ դիրքորոշումն էլ տեղիք է տվել, որ իրենց բնակավայրի անվանումն սկսեն օգտագործել իրենց ինքնությունն արտահայտելու նպատակով»[138].

Համշենահայերի թվի մասին

Այս հարցի վերաբերյալ հետազոտողները հայտնել են տարբեր կարծիքներ, որոնցից ոչ մեկն էլ, բնականաբար, չէր կարող հենված լինել քիչ թե շատ հստակ հաշվարկների վրա: Խնդիրը բարդանում է նաեւ այն պատճառով, որ համշենահայերը տարբեր խմբերի են բաժանվում ոչ միայն ըստ բնակության վայրերի, այլեւ, ինչպես տեսանք, ըստ դավանանքի ու լեզվի, որն էլ, հատկապես Թուրքիայի պարագայում, դժվարություններ է առաջացնում: Հարցի հետազոտողներն էլ հիմնականում անդրադարձել են լեզվի, մշակույթի, բանահյուսության, դավանափոխության որոշ խնդիրների, քանի որ թուրքական իշխանություններին հաճո չի եղել հարցի արծարծումը:

Տարբեր հետազոտողներ նշում են տարբեր թվեր՝ մի քանի տասնյակ հազարից մինչեւ 1.5-2 միլիոն եւ նույնիսկ ավելի: 25-40 հազար թիվն ընդունողները հավանաբար նկատի ունեն

[138] http://akunq.net/am/?p=52815 Հոդվածը հրատարակվել է Ստամբուլում տպագրվող «Գոր» ամսագրի չորրորդ համարում:

միայն Խոփայի շրջանի հայախոս համշենահայերին:

Հեմշիլներ բնակվում են նաեւ Միջին Ասիայում եւ Ռուսաստանում: Սրանց ընդհանուր թիվը 5 հազարի մոտ է: Գրեթե բոլորն էլ տիրապետում են մայրենի բարբառին:

Աբխազիայում բնակվող համշենահայերի թիվը մինչ վրաց-աբխազական պատերազմը հասնում էր 90 հազարի: 1992-93 թթ. պատերազմից հետո այդ թիվը նվազեց. այսօր պաշտոնապես ընդունվում է մոտ 45 հազար թիվը, մյուսները տեղափոխվել են Ռուսաստան:

Բավականին դժվար է որոշ եզրակացություն անելը ռուսաստանաբնակ համշենահայերի թվի մասին. այն տարբեր հաշվարկներով տատանվում է 300-ից 400 հազարի միջեւ: Առավել հավանական է թվում 300 հազարը:

Հայաստանում չճշտված տվյալներով ապրում է 4-5000 համշենահայ:

Որոշ տեղեկություններ կան Ցեղասպանությունից հետո Եւրոպայի տարբեր երկրներում եւ ԱՄՆ-ում համշենահայերի բնակություն հաստատելու մասին, սակայն այդ ուղղությամբ ուսումնասիրություններ չկան:

Համշենի լավագույն հետազոտողներից մեկը՝ Բարունակ Թոռլաքյանը, ամենայն բծախնդրությամբ ուսումնասիրելով ասպարեզում եղած բոլոր տվյալները, գրում է. «Ի մի բերելով Սեւ ծովի հարավային ափերին՝ Ճորոխի գետաբերանից մինչեւ Մարմարա ծովի ափերը (Նիկոմեդիայի նահանգ) սփռված քրիստոնյա համշենահայության թվաքանակը, կարելի ասել, որ այդ երկրամասի 17 քաղաքներում ու ավաններում եւ շուրջ 322 գյուղերում ապրում էր ավելի քան 122 681 հայ, որոնց գերազանց մեծամասնությունը համշենահայ էր:

Ավելացնենք, որ բերված այս թվերի մեջ չեն մտնում դեռեւս 18-19-րդ դարերից սկսած, յաթաղանի սպառնալիքի տակ,

իսլամի «սուրբ» դավանանքը բռնությամբ «ընդունած» գրեթե նույնաքանակ համշենահայության այն սերունդները, որոնք սփռված էին նշված երկրամասում եւ որոնք առավել կամ նվազ չափով պահպանել էին հայ ազգային սովորություններն ու քրիստոնեական կրոնի վերապրուկները»[139].

Եթե նկատի ունենանք, որ 1915 թվականից մինչ այսօր Թուրքիայի բնակչությունը աճել է մոտ 8 անգամ, ապա իսլամացած համշենահայերի թիվը մոտ մեկ միլիոն է:

Նույն տեսակետին է ժամանակակից հետազոտողներից Ալիե Ալթը. նրա համոզմամբ իսլամացած համշենահայերի թիվը հասնում է մեկ միլիոնի[140].

Այս տվյալներով համշենահայերի ընդհանուր թիվը մոտ մեկ ու կես միլիոն է, որը, բնականաբար, չի կարող արտացոլել իրական վիճակը: Որքան էլ այն ուռճացված լինի, այնուամենայնիվ մի բան պարզ է. մենք գործ ունենք հայության (մահմեդական թե քրիստոնյա) մի ստվար զանգվածի հետ: Թերեւս ժամանակն է, որ, ի թիվս համշենագիտության այլ բնագավառների, լուրջ ուշադրություն դարձվի նաեւ համշենահայության թվին ու սփռվածության աշխարհագրությանը:

Հեմշիլներն այսօր

Հեմշիլները թեեւ զգալի չափով գտնվում են թուրքական մշակույթի ազդեցության տակ, բայց հիմնականում պահպանել են ազգային ծեսերը, սովորույթները, երգն ու երաժշտությունը, պարերը, կենցաղավարության շատ յուրահատկություններ, մի մասը՝ նաեւ մայրենի բարբառը: Հատկանշական է, որ հիմնա-

---

139 Բարունակ Թոռլաքյան, Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, հ. 13, Համշենահայերի ազգագրությունը, Երեւան, 1981, էջ 109-111:

140 Դիտակ, Բեյրութ, 2002, մարտ-ապրիլ, էջ 26:

կանում խուսափում են խառն ամուսնություններից եւ օտար գերեզմանատներում թաղումներից: Իսլամից քրիստոնեություն դարձ կատարած եւ նախնիների ազգանունը վերականգնած արձակագիր Տիգրան Կոստանյանը վկայում է. «Մեր ծննդավայր Ռիզե քաղաքին բնակիչներէն շատեր գիտեին, թէ հայեր են: Մենք գերեզմանատուն չենք ունեցած թուրքերուն հետ, այլ մեր հանգուցեալները կթաղենք մեր պարտեզներուն մէջ»[141]:

Ազգային ինքնության գիտակցումն ու այն պահպանելու ջանքերն ունեն հետաքրքիր ու ինքնատիպ դրսեւորումներ: Դրանցից թերեւս պետք է կարեւորել հետեւյալները.

ա) մայրենի լեզվի (բարբառի) պահպանումը: Անգամ թրքախոս համշենահայերի (բաշ-հեմշիլ) մի մասը ինչ-որ չափով տիրապետում է Համշենի բարբառի բառապաշարի որոշ շերտի, հատկապես՝ մտերմական հարաբերություններ, մարմնի մասեր ցույց տվող բառեր, համագործածական բառեր, միկրոտեղանուններ եւ այլն, իսկ խոփա-հեմշիլները (Արդվինի նահանգ) հիմնականում պահպանել են մայրենի բարբառը:

բ. Մեծ չափով պահպանել են ավանդույթները, ծեսերը, սովորույթները, բանահյուսությունը, ժողովրդական երգերն ու պարերը, երաժշտական գործիքները, տարազը եւ այլն: Խիստ ուշագրավ է հետեւյալ արտառոց փաստը. իսլամացած համշենահայերը (հիմնականում՝ թրքախոս բաշ-հեմշիլները) յուրաքանչյուր տարի՝ հուլիսի 15-22-ը, Ռիզեի նահանգի Այդեր եւ Չամլըհեմշին բնակավայրում տոնում են Վարդավառը (Վարթիվոր): Թեեւ հասկանալի պատճառներով կրոնական ծիսակարգը վերացել է, բայց այն վերածվել է ազգային երաժշտության, երգի ու պարի, ավանդույթների ու ծեսերի թատերականացված յուրահատուկ տոնի (երգերը թրքաբառ են, սակայն Խոփայի

[141] «Դիտակ», 2002, Մարտ – Ապրիլ:

հայերը պահպանել են նաեւ հայաբառ երգերը, ավելին՝ այսօր էլ ստեղծում են Համշենի բարբառով նոր երգեր):

Ընդհանրապես շատ ու շատ հարցեր դեռ սպասում են իրենց ուսումնասիրողներին՝ պարզելու, թե հատկապես վերջին 2-3 դարերի ընթացքում էթնոմշակութային ինչ օտար ազդեցությունների են ենթարկվել իսլամացած համշենահայերը, ինչ են կորցրել, ինչ են պահպանել եւ այլն:

Այսօր Թուրքիայում էթնոկրոնական ինքնության զարթոնքի արդյունքում արձանագրվում են բավականին ուշագրավ երեւույթներ: Համշենահայերի (ինչպես եւ մյուս ժողովուրդների) ազգային, հոգեւոր-մշակութային կյանքում նկատելի է կորցրած կամ ճնշված ինքնության ճանաչման ու վերականգնման հետաքրքիր ձգտում:

Վերջին 10 տարում Թուրքիայի սահմաններից դուրս՝ Եւրոպայում, Ռուսաստանում, Աբխազիայում, Հայաստանում եւ այլ երկրներում ապրող հայերի համար անակնկալ էր Համշենի բարբառով երգերի եւ հայկական պարերի տարածումը, որոնց կատարողները հիմնականում Արդվինի նահանգի համշենցիներն են: Այս հարցում հատկապես մեծ է «Վովա» (Համշենի բարբառով՝ «Ո՞վ է») խոսուն անունով երաժշտական համույթի դերը (հիմնադիրներն են Հիքմեթ Աքչիչեքն ու ընկերները), որն իր երգերով պատասխանում է իր իսկ առաջադրած հարցին: Նրանց հիմնադրած «Հատիկ» մշակութային միությունը մեծ հույս ու հավատ է ներշնչում, որ Համշենի մշակույթն առաջիկայում նոր ուժով ու փայլով կներկայանա աշխարհին՝ դուրս գալով մոռացության, եթե ոչ կորստյան ու անհայտացման վիհից:

Ինքնության որոնման ճանապարհ են հաղթահարում եւ հարթում երիտասարդ տաղանդավոր ռեժիսոր, Խոփայում ծնված եւ մեծացած Ալբեր Օզջանի ֆիլմերը, որոնց կերպարներն իրենք իրենց որոնող համշենցիներն են: Նրա ֆիլմերում,

առաջին անգամ Թուրքիայի պատմության մեջ, հնչեց հայոց լեզուն՝ եւ գրական տարբերակը, եւ Համշենի հնամենի ու չնաշխարհիկ բարբառը:

Թուրքական պաշտոնական պատմագրությունը կրոնափոխ համշենցիների մասին

Թուրքական պաշտոնական պատմագրությունը հիմնադրումից ի վեր հետապնդում է այն նպատակները, որ նրա առջեւ դրել էր անձամբ Քեմալ Աթաթուրքը 1923թ. Թուրքական պատմագիտական առաջին համագումարի ժամանակ: Եթե գոյություն ունի Թուրքիայի Հանրապետություն, ուրեմն պետք է գոյություն ունենա նաեւ թուրք ազգ: Այնինչ Օսմանյան կայսրությունում թուրքը արհամարհելի տարր էր, թուրք բառը՝ հայհոյական հասկացություն, որն օգտագործում էին դիմացինին վիրավորելու կամ ստորացնելու նպատակով[142]: Դա փաստորեն այն էր, ինչ հայ բառը ժամանակակից թուրք ազգայնական մտածողության մեջ[143]:

Հանրապետական Թուրքիայի նոր պատմագիտությունը պետք է ապացուցեր, որ թուրք ազգը ոչ միայն գոյություն ունի, այլեւ նա աշխարհի հնագույն ազգն է, իսկ Թուրքիայի տարածքում ապրող բոլոր ժողովուրդները թուրք են: Անգամ բազմամիլիոնանոց քուրդ ժողովուրդը թուրքական պաշտոնական պատ-

[142] Մի օսմանյան փաշա ասել է. «Ինձ մի թուրքի գլուխ բերողին օսմանյան կաֆտան (թանկարժեք վերարկու) կնվիրեմ»: «Քույուջու» («ջրհորի մասնագետ») մականվամբ մեկ այլ օսմանյան փաշա այդ մականունն ստացել է թուրքերին սպանելու և ջրհորները լցնելու համար: Տե՛ս http://akunq.net/am/?p=15999

[143]

մագրության մեջ երկար ժամանակ կոչվել է լեռնային թուրք: Եւ այսպես՝ Մուստաֆա Քեմալը նորաստեղծ Թուրքական պատմագիտական ընկերության առջեւ դրեց հետեւյալ հիմնական խնդիրները. ապացուցել, որ՝

ա. Թուրքիայի Հանրապետության տարածքը թուրք ազգի պատմական հայրենիքն է, ուր ձեւավորվել է այդ ազգը:

բ. Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդները թուրք են:

գ. Աշխարհի հնագույն ազգը թուրք ազգն է:

Այս համատեքստում կրոնափոխ համշենահայերի ազգային պատկանելության հարցն արդեն լուծված էր համարվում, մնում էր միայն պատմական փաստերով «գիտականորեն» ապացուցել այն, ինչ պահանջվում էր: Տվյալ հարցում առաջնությունը պատկանում է Ա. Սաքաօղլուին եւ, հատկապես, Ֆահրեդդին Քըրզըօղլուին, ովքեր փորձում են «ապացուցել» հեմշիլների թուրքական ծագումը: Մանավանդ Ֆահրեդդին Քըրզըօղլուն այս անհեռանկար գործում մեծ ջանքեր է գործադրել՝ համշենցիներին վերագրելով նախ՝ օղուզական, ապա՝ ղփչաղական, պարթեւական ծագում, բայց այլ առիթով էլ պնդում է, թե նրանք ծագել են քայան ուջուն ցեղից[144]:

Մեկ այլ աշխատության մեջ[145] («Ռիզեի նահանգը մեր ազգային պատմության մեջ») «ապացուցելով», որ քարթվելական ժողովուրդներին պատկանող լազերը նույնպես զտարյուն թուրքեր են, դարձյալ անցնում է իրեն հանգիստ չտվող համշենցիներին. «Ինչ վերաբերում է համշենցիներին (HEMŞENLİ), արդ-

[144] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Լ. Սահակյան, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետեվանքները, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հատ. IV, Երևան, 2006, էջ 207-228:

[145] Prof. Dr. **Fahrettin Kırzıoğlu,** Milli Tarihimiz'de Rize Bölgesi https://web.archive.org/web/20140209145039/http://biriz.biz/rize/rizetarihi.htm

դեն նշեցինք, որ Ք.ա. 250 թ. թուրքմենների ցեղը, որպես շրջանի պաշտպան, իր իշխան Մանուայի հետ Խորասանից եկել է Համադան, որտեղից 110 թ. Փոքր Արշակունիների թագավոր Արտաշեսը հարգանքով բերել և բնակեցերել է Սևանա լճի և Ալագյազ լեռան միջև: Համադանից գալու համար «Ամադ Ունի» անվամբ ցեղը 301 թ. թուրքմեն խորասանցի իշխանատոհմից սերող Սուրբ Գրիգոր Արշակունու շնորհիվ ընդունում են այդ ժամանակաշրջանի «ժողովրդական հավատք» համարվող Սուրբ Քրիստոսի կրոնը: Սակայն չէին մոռացել իրենց մայրենի լեզուն՝ թուրքմեն/օղուզների խոսվածքը, տեսնում ենք, որ Ռիզեի արևելյան հատված գաղթելիս նոր անունները թուրքերեն են: Այս կապակցությամբ մենք ունենք երկու հոգևորականի հայերեն ժամանակագրությունները»:

Քանի որ թուրքական համշենագիտությունը հենվում է այս պրոֆեսորի տեսության վրա, տեսնենք, թե իսկապես ի՞նչ կա նրա ասածներում, որ ուրիշները չգիտեն կամ չեն հասկանում: Եւ այսպես.

ա. Թուրքմենների ինչ-որ ցեղ Խորասանից եկել է Համադան, իսկ Փոքր Արշակունիների թագավոր Արտաշեսը հարգանքով բերել և բնակեցերել է Սևանա լճի և Ալագյազ լեռան միջև: Որտեղի՞ց են վերցված այս փաստերը, պարզ չէ: Ո՞վ է Փոքր Արշակունիների թագավոր Արտաշեսը, չգիտենք, այդ թագավորը եթե բերել է ուրեմն եղել է տվյալ երկրի թագավորը, սակայն այդ ժամանակաշրջանում տվյալ տարածքը մտնում էր Հայոց թագավորության մեջ, իսկ հայոց թագավորը եղել է Արտաշեսյան արքայատոհմից Տիգրան Մեծ հայոց թագավորի հայր Արտավազդ 1-ը (Ք.ա. 123-95)[146], որի օրոք որեւէ նման փաստ չի արձանագրվել, գոնե գիտությանը հայտնի չէ:

[146] Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով, Դ, Քննական պատմություն Հայոց, Երևան, 2009, էջ 485:

բ. Պետք է ենթադրել, որ թուրքմենական այդ ցեղը Համադան է եկել, որպեսզի պրոֆեսոր Քըրզըօղլուն հետագայում կարողանար բացատրել, թե հայոց Ամատունի նախարարական տոհմը որտեղից է առաջացել. Համադանից շատ հեշտ վերածելվում է «Ամադ Ունի» թուրքմենական ցեղը, որը, սակայն, դեռեւս ամբողջությամբ զտարյուն թուրք դառնալու համար, պարզվում է, նաեւ պետք է քրիստոնեություն ընդունի, այն էլ՝ 301թ. եւ անպայման թուրքմեն Սուրբ Գրիգոր Արշակունու շնորհիվ: Եւ այսպես՝ շարադրելով մի քանի պարզունակ ու հորինված պատմություններ, որոնք ոչ մի փաստով չի ապացուցում, անցնում է քրիստոնյա թուրքերի նկարագրին:

գ. Խորասանի Արշակունիների ճյուղից սերող իշխան Անակի որդի Սուրբ Գրիգորի ընդունած դավանանքը կոչվում է «գրիգորյան», որը մշտապես կրել է թյուրքականության սովորությունների դրոշմը եւ քրիստոնեության մյուս ճյուղերից՝ կաթոլիկ, ուղղափառ, ասորական, տարբերվում է հետեւյալ սկզբունքներով՝

1. Խոզի միսը պիղծ է (հարամ), և խոզ չեն բուծում
2. Նապաստակը անհաջողություն է բերում, միսն էլ չեն ուտում
3. Շարունակում են շիրիմների վրա ծիու և խոյի արձանների պես տապանաքարեր դնելու ավանդույթը:
4. Քահանաներն ամուսնանում և երեխա են ունենում:
5. Կնքահոր ընտանիքից աղջիկ չեն տանում, չեն տալիս (սա էլ այսօր Կասպից ծովից Սվաս և Ադանա ընկած հատվածում շարունակում է պահպանվել որպես քավորություն (քիրվայություն):
6. Կանայք օտար տղամարդ տեսնելուն պես ծածկվում են:

Երբ պարոն պրոֆեսորը գրել է այս տողերը, երեւի մտածել է, որ աշխարհում այլեւս հայ չի ապրում եւ, ուրեմն, այս գավեշտը թե զառանցանքը ոչ ոք չի բացահայտի: Բայց գոնե պետք է մատնանշեր, թե 301թ. մկրտված գրիգորյանական քրիստոնյա թուրք-օղուզները, թուրքական մտածողությամբ՝ թուրք գյավուրները որտե՞ղ են բնակվում, աշխարհագրական ո՞ր լայնություններում եւ երկարություններում:

Սակայն պատմության մեջ այս ժամանակավոր տատանումները երկար ժամանակ հարգելի պրոֆեսորին չեն կարողանում պահել մոլորության մեջ. հասկացանք, որ Ամատունի ստանալու համար կողքից պետք էր ասպարեզ նետել գրավիչ «Համադ ունի» թուրքմենական ցեղի գաղափարը, սակայն նա չի կարող մթագնել աշխարհի արարման կենտրոնում գտնվող եւ ամեն ինչի սկիզբը համարվող օղուզի գաղափարը:

Պարզվում է, որ թե հայագիտության մեջ, թե, ընդհանրապես, համաշխարհային պատմության եւ քրիստոնեության պատմության մեջ կա մի մեծ սխալ, երբ նշվում է, որ 301թ. քրիստոնեությունը շատ լայն տարածում չուներ, եւ Հայաստանը առաջին եւ միակ երկիրն էր, որ այն ընդունեց որպես պետական կրոն: Եթե կասկածներ կան, նորից դիմենք պրոֆեսոր Քըրզըօղլուին. «Այդ ամռանը (301թ.)16 սատրապների մասնակցությամբ գումարված ժողովի ժամանակ բոլորը ընդունում են Սուրբ Քրիստոսի կրոնը, որը դարաշրջանի հավատքն էր: Այսպիսով, այդ տարի երկիրն ամբողջովին դառնում է քրիստոնյա: Տրդատ III-ի Հռոմից բերած գրիչի՝ Ագաթանգեղոսի համաձայն՝ կարճ ժամանակում այս իշխանները, որոնցից ամեն մեկը հազար կամ 10 հազար զինվոր ուներ, վերադառնում են իր իշխանություն, որից անմիջապես հետո Ս. Քրիստոսի կրոնը ընդունում է թորգոմ (թուրքմեն/օղուզ) ցեղը: Քրիստոնեությունը տարածվում է Սաթալա (34) քաղաքից մինչեւ Խալդիկ երկիր, Քաղարչթան (35)՝ մցխեթների սահմանը (36), ալանների երկիր, կասպյան շրջան (37), Դիարբեքիր, Մծբին (38)»:

Պարզվում է, որ մի անորոշ երկրում ինչ-որ սատրապներ, անհայտ է, թե որ երկրի թագավոր Տրդատ III-ի գլխավորությամբ ընդունում են Քրիստոսի կրոնը, որը, ինչպես պարզում է Քըրզըօղլուն, «դարաշրջանի հավատքն էր»: Բոլոր այն քաղաքները, որ թվարկված են, հայկական քաղաքներ են եւ նշված են հին աշխարհի բազմաթիվ քարտեզներում: Քրիստոնեական որեւէ երկրի անուն չտալու համար նշենք, որ բավական է նայել միայն արաբական միջնադարյան քարտեզները, որոնց վրա մի թռուցիկ հայացք գցելու ժամանակ էլ չի ունեցել հարգելի պրոֆեսորը:

Այժմ տեսնենք, թե ինչու է «թորգոմ ցեղը» դարձել թուրքմեն/օղուզ: Թորգոմը հայ ազգի անվանադիր նախնի Հայկի հայրն է: Հին աշխարհում հաճախ օտարները Հայաստանն անվանել են Թորգոմա տուն: Աստվածաշնչի հին մեկնիչները «տուն Թորգոմայ» կամ «Թորգոմական աշխարհ» ասելով հասկացել են Հայաստանը: Եզեկիել մարգարեն հիշատակում է վաճառաշահ «Թոգարմա տունը» (Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ՝ «տուն Թորգոմայ»), որը Տյուրոս քաղաքի վաճառանոցը լցնում է ձիերով ու ջորիներով (Իէ, 14):

Պրոֆեսոր Քըրզըօղլուի պարզունակ հորինվածքի հիմքում կա մեկ նպատակ. ամեն գնով ապացուցել Մուստաֆա Քեմալի առաջադրած գաղափարը. Թուրքիան թուրքերի մայր հայրենիքն է, ուր նրանք ապրել են միշտ՝ Նոյ նահապետից էլ առաջ՝ Ադամի ժամանակներից, ուստի օտարների կողմից Հայաստանին տրվող Թորգոմ անունը կարող է նշանակել միայն թուրք-օղուզ:

Թվում է, թե իմաստ չուներ անդրադառնալ նման մի հակագիտական եւ փաստազուրկ աշխատության, սակայն պարզ-

վում է, որ համշենցիների (եւ ոչ միայն համշենցիների) օղուզական ծագման հակագիտական թեզը մինչեւ օրս էլ ունի հետեւորդներ, քանի որ քաղաքական պատվերը չի վերացել: Ռեմզի Յըլմազ անունով մի համշենցի վերջերս մի բավականին ծավալուն գիրք[147] հրատարակեց, ուր պատեհ-անպատեհ կրկնում է Քըրզըօղլուի, այսպես կոչված, օղուզական տեսությունը, իսկ որտեղ փորձում է լինել ինքնուրույն, ուղղակի հասնում է անհեթեթությունների: Ահա մի երկու բնորոշ հատված այդ ստվարածավալ գրությունից, որ հեղինակը թյուրիմացաբար գիրք է համարում. ««Համամա-շեն»-ի մասին պատմությունը հակասություններով լի, հորինված մի պատմություն ստեղծելու ջանք է: Ինչո՞ւ պետք է Համամ անվանումը Հեմշին դառնա: Ինչպիսի՞ մոտեցում է դա»[148]: Այս մարդուն, ով ոչ բանասեր է, ոչ պատմաբան է, ոչ հնագետ է եւ ոչ էլ, գոնե, արվեստաբան, ինչպե՞ս բացատրես, որ Համամից առաջացել է Համամաշենը (հայերենում մինչեւ այսօր տեղանուններ ստեղծելու այս ձեւը եղանակ է), որը կրկնվող ***մա*** մասնիկի անկմամբ դարձել է Համշեն, բայց ոչ երբեք՝ Հեմշին: Իսկ թե ինչպե՞ս է Համշենը դարձել Հեմշին, դժվար չէ բացատրել. ճիշտ այնպես, ինչպես Կոստանդինապոլիսը դարձել է Իսթանբոլ, հետո՝ Ստամբուլ, Զմյուռնիան՝ Իզմիր, Կեսարիան՝ Կայսերի, Ալաշկերտը՝ էլեշգիրտ, Անին՝ Անը, Անատոլիան՝ Անադոլու, Արմենիան՝ էրմենիստան:

Այս հարցը եզրափակենք՝ հղում անելով միջազգային ճանաչում ունեցող մի հեղինակավոր հրատարակությանը եւ տեսնենք, թե ինչ է ասում օղուզների մասին. «Օղուզները, ովքեր ներառում էին թյուրքական 24 ցեղերից 22-ը, 1000 թ. բնակվում էին Արալյան լճից հարավ: Օղուզյան ցեղերից առաջինը պեչենեգներն են գաղթում դեպի արևմուտք՝ հասնելով դանուբ-

[147] Remzi Yilmaz, Bozkırın Atlı Göçebeleri Hemşinliler, Ankara, 2015.

[148] Նույն տեղում, էջ 50:

յան շրջաններ: Օղուզների երկրորդ ալիքը հասնում է ռուսական հողերի սահմաններին: Բյուզանդական աղբյուրներում այս ցեղը հիշատակվում է իր էթնոնիմով՝ ուզեր՝ Ouzoi (Uzes): Բյուզանդական կայսրության համար օղուզների ամենակարևոր գաղթը սելջուկների գաղթն է: Սելջուկ Թուղրուլ բեկը, ով 1055 թ. Բաղդադի սուլթանն էր, այլևս չկարողանալով կառավարել օղուզ քոչվորներին, որպես զազիներ ուղղում է քրիստոնյաների դեմ: Նույն քաղաքականությունն էր վարում Թուղրուլ բեկին հաջորդած Արփ Արսլանը, ում հաջողվում է Մանազկերտի մոտ հաղթանակ տանել»[149]:

Կրոնափոխ համշենցիների ինքնության հարցը

Համշենցիների մեջ այս հարցում գոյություն ունի երեք հիմնական մոտեցում:

Առաջին տեսակետի հետեւորդները իսպառ ժխտում են իրենց հայկական անցյալը եւ պաշտպանում հեմշիլների օղուզթուրքական ծագումը: Այս տեսակետի պաշտպանները ոչ թե չգիտեն իրենց իրական ծագման մասին, այլ պարզապես տարբեր պատճառներով չեն ուզում նոր խնդիրներ ունենալ: Նրանք իրենց ամբողջությամբ համարում են թուրք-իսլամական մշակույթի արդյունք: Անգամ ցեղասպանության տարիներին կամ դրանից հետո իսլամացած բազմաթիվ հայեր ուղղակի չեն ցանկանում վերհիշել իրենց հայկական անցյալի մասին, քանզի այն իրենց միայն դժբախտություն է բերել: Մի երկրում, ուր հայ կամ

[149] The Oxford Dictionary of Byzantium, Edited by ALEXANDER P.KAZHDAN, Publisher: Oxford University Press, Print Publication Date:1991 (http://www.oxfordreference.com/view/10.1093/acref/9780195046526.001.0001/acref-9780195046526-e-5623?rskey=BFSic3&result=5

գյավուր լինելը գրեթե հավասարեցվում է պետական դավաճանության, նման կեցվածքը լիովին հասկանալի է: Նման տեսակետի կողմնակիցներից է, ինչպես համոզվեցինք վերեւում, Համշենի վերաբերյալ նշված գրքի հեղինակ Ռեմզի Յըլմազը: Թեեւ գրքի վերնագիրն իսկ բավական է նրա տեսակետը հասկանալու համար՝ «Տափաստանների հեծյալ վաչկատուն համշենցիները», սակայն բերենք բնորոշ մի հատված. «Հեմշինը մի թյուրքական բնակավայր է, որը երկրորդ անգամ «խմորվել է» հեմշենլի թուրքմեն ցեղերի կողմից: Այդ խմորիչի էությունը տափաստանային ինքնությունն է, որը հիմնված է հեծյալ-վաչկատուն ոգու վրա»[150]:

Երկրորդ տեսակետի կողմնակիցներն առավել չափավոր են, զգուշավոր: Նրանք ընդունում են, ու իրենց նախնիները հայեր են եղել, բայց կարծում են, որ դա պատմություն է, որին անդրադառնալու անհրաժեշտություն այսօր չկա: Այդ մտայնությունը բավականին ընկալելի է ձեւակերպել Համշենական մշակույթի ուսումնասիրության և պահպանության «Հատիկ» միության ղեկավար Հիքմեթ Աքչիչեքը. «Թուրքիայում ապրող համշենական համայնքի մի կարևոր զանգված, մերժելով իր հայկական արմատները, էթնիկական տեսանկյունից իրեն համարում է թուրք ժողովրդի մի մասը: Նրանց համար հայերը հնում հարևան եղած, իսկ ավելի հազվադեպ էլ ամուսնության ճանապարհով բարեկամ դարձած մի հանրություն են: Իսլամացած հայեր լինելու գաղափարն ընդունող համշենցիների համար էլ, որպես պատմական, սոցիալական և քաղաքական պայմանների անհրաժեշտ հետևանք, այսօր հայկական ինքնության մասին խոսելը շատ իրատեսական չէ: Եվ հայկական ինքնությունն ընդունողների, և այն ժխտողների համար այսօր համշենական ինքնությունն ավելի գերակա է»[151]:

Երրորդ տեսակետի հետեւորդներն այն կարծիքին են, որ իրենց նախնիները եղել են հայ քրիստոնյաներ, որոնց բռնի կերպով իսլամացրել են: Որքան էլ իրենք շատ բան են կորցրել իրենց հայկական ինքնությունից, սակայն իրենց համարում են հայ՝ մահմեդական հայ: Այս հարցում էլ ուշագրավ է Մահիր Օզքանի տեսակետը, որը բավականին թարմ եւ ինքնատիպ մոտեցում է. «Չնայած կրոնական տարբերություններին՝ կան բազմաթիվ ավանդույթներ, տոներ, նախաքրիստոնեական ժամանակից մնացած աղոթքներ, հավատալիքներ և մշակութային տարրեր, որոնք համշենական ու հայկական ինքնությունները բավականին մերձեցնում են: Այս իրավիճակը մի կողմից՝ համշենցի թուրքի ընկալման ազդեցությունն է նվազեցնում, մյուս կողմից՝ հետ է մղում քրիստոնեության հետ նույնականացվող հայկական ինքնության ընկալումը: Մեկը մյուսից սկիզբ առնող այս գործընթացը համշենցի թուրք կամ հայ դյոնմե հասկացության փոխարեն տարածում է մուսուլման հայի ընկալումը»[152]:

Հաճախ առիթ եմ ունեցել ինքնության հարցի շուրջ զրուցելու կրոնափոխ համշենցիների հետ, որոնց մեջ ունեմ ընկերներ եւ բարեկամներ՝ երեք խմբերից էլ: Նրանցից ոմանք այն համոզմունքն ունեն, որ հայ հետազոտողները նրանց, իրենց կամքին հակառակ, հայ են համարում, այդ մասին գրում են, տարածում: Իմ այդ բարեկամներին ցանկանում եմ ասել հետեւյալը. Համշենի եւ համշենցիների հարցերով զբաղվող հայ հետազոտողների խնդիրը բոլորովին այլ է (խոսքս պարզունակ եւ անպատաս-

[150] Remzi Yilmaz, նշվ. աշխ. էջ 79:

[151] http://akunq.net/am/?p=35328

[152] Մահիր Օզքան, Համշենական ինքնությունը՝ լեզու, կրոն, մշակույթ http://akunq.net/am/?p=37297

խանատու վայ-քարոզիչների մասին չէ): Մենք ունեցել ենք մեկ ընդհանուր անցյալ, պատմական ինչ-ինչ հանգամանքներում կրոնական, մշակութային, լեզվական օտարացման հետեւանքով դադարել ենք իրար ճանաչել, բայց դա չի նշանակում, որ մեր ընդհանուր եւ նույն պատմության շրջանը գոյություն չի ունեցել: Հայ հետազոտողները, ուսունասիրելով այդ խնդիրները, ուսումնասիրում են հայ ժողովրդի այդ շրջանի պատմության մեկ հատվածը: Եթե հետազոտությունները բերում-հասցնում են մեր օրերը, դա էլ է օրինաչափ, բայց բոլորովին չի նշանակում, որ այդ մարդիկ ձեզ համարում են հայ: Միայն դուք կարող եք որոշել, թե ինչ ազգի եք պատկանում, ինչ ինքնության կրողներ եք, այնպես, ինչպես յուրաքանչյուր մարդ՝ որեւէ հանրության մեջ:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Սովորաբար գրքերն ավարտվում են վերջաբաններով կամ ամփոփումներով: Այն հարցերը, որ քննարկվեցին այս աշխատանքի մեջ, բազում էին, սակայն կենտրոնական հարցը մնում է հետեւյալը՝ ովքե՞ր են կրոնափոխ համշենցիները: Վերջերս գիտական հանրության ուշադրության կենտրոնում հայտնվեցին երկու կարեւոր փաստաթղթեր: «Ակօս» շաբաթաթերթը հրատարակեց փաստաթղթերը հայտնաբերած Էրոլ Քեթենջիի, հայտնի թուրք պատմաբան Թաներ Աքչամի եւ իմ կարծիքները այդ փաստաթղթերի վերաբերյալ՝ խոսուն խորագրով: Որոշեցի վերջաբանի փոխարեն ձեր ուշադրությանը ներկայացնել «Ակօսի» այդ հրապարակումը:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԸ[153]

Երկու պատմական փաստաթուղթ՝ Համշենի վերաբերյալ

Հետազոտող Էրոլ Քեթենջիի՝ Ստամբուլում գտնվող Վարչապետարանի օսմանյան արխիվում հայտնաբերած երկու փաստաթղթեր խիստ կարեւոր տեղեկություններ են պարունա-

[153] http://www.agos.com.tr/tr/yazi/11640/hemsinle-ilgili-2-tarihi-belge

կում Համշենի եւ համշենահայության վերաբերյալ:

Փաստաթղթերից առաջինը գրվել է 1913 թ. հունիսի 1-ին: Տվյալ ժամանակաշրջանի օսմանյան գլխավոր շտաբի կողմից Ներքին գործերի նախարարությանը հղված սույն փաստաթղթում նշվում է, որ Համշենի շրջանում տեղ գտած որոշ գյուղերի բնակիչները, գյուղեր, որոնց անվանումները մեկ առ մեկ տրվում են, «Համշեն անվամբ հայտնի հայերից կրոնափոխված մահմեդականներ» են: Իսկ 1913 թ. հունիսի 1-ի ամսաթիվը կրող մյուս փաստաթուղթը մի պաշտոնական գրություն է՝ Ներքին գործերի նախարարությունից հղված Տրապիզոնի նահանգապետարանին: Սույն գրության մեջ նշվում է, որ առաջին փաստաթղթում մեկ առ մեկ հիշատակված գյուղերի բնակչությունը «թեեւ ծագմամբ հայ է, սակայն դավանափոխ է եղել»: Այս երկու գրությունների ընդհանուր նպատակը համշենահայերի «միամտության եւ անգրագիտության պատճառով միսիոներների խաբեություններին տրվելուն» արգելք հանդիսանալն է:

Փաստաթղթերը «Ակօս»-ի ընթերցողների համար մեկնաբանել է հայագետ Հայկազուն Ալվրցյանը:

Իսկ պատմաբան Թաներ Աքչամն անդրադարձել է համշենահայերի մասին հանրահայտ «գաղտնիքներին»: Թե Թաներ Աքչամը եւ թե համշենցի ուսումնասիրող Էրոլ Քեթենջին արձանագրեցին, թե վերոհիշյալ փաստաթղթերը որքան կարեւոր են՝ տվյալ շրջանի ժողովրդի պատմությունն ու մշակույթն ըմբռնելու առումով:

Ներքին գործերի նախարարություն
Փաստաթուղթ թիվ՝ 388
Պատրաստման ամսաթիվը՝ 1913 թ. հունիսի 3
Մաքրագրման ամսաթիվը՝ 1913 թ. հունիսի 4
Տրապիզոնի նահանգապետարանին

Ծագումով հայ, սակայն կրոնափոխ եղած եւ Համշեն անվամբ հայտնի Խոփայի սահմանային գումարտակի կողմերում գտնվող Զուրփիջի (Յոլդերե), Արվալա (Էշմեքայա, Չիմենլի), Հայկի, Զարգինա (Գյունեշլի), Գարձի (Հենդեք) գյուղերը միամտության եւ անգրագիտության պատճառով կարող են տրվել միսիոներների խաբեություններին: Տեղական իշխանությունները պետք է լուսաբանեն համշենցիներին եւ նրանց ցույց տան ճիշտ ուղին: Այդ անհրաժեշտության մասին մեզ է հայտնել մեր Պաշտպանության նախարարությունը՝ Ռուսաստանի հետ սահմանին գտնվող մեր կոմիսարության գրության վրա հիմնվելով եւ ուշագրավ համարելով իրավիճակը մեկնաբանող այդ գրությունը: Պետք է այդ ուղղությամբ անել այն, ինչ անհրաժեշտ է:

***

Գլխավոր շտաբի նախագահություն
Չորրորդ մասնաճյուղ
321
1
Ստամբուլ
Թեման՝ Խոփայի սահմանային գումարտակի շրջանում գտնվող գյուղերի բնակչության մասին
Ներքին գործերի նախարարությանը

Գաղտնի է

Հարգարժա՛ն պետական այր, Տրապիզոնի նահանգին ենթակա Խոփա գավառում գտնվող Խոփայի սահմանային գումարտակի կողմերի Զուրփիջի (Յոլդերե), Արվալա (Էշմեքայա, Չիմենլի), Չավուշլու, Հայկի, Զարգինա (Գյունեշլի), Գարջի (-Հենդեք) գյուղերի բնակչությունը հայտնի է Համշեն անունով եւ

բաղկացած է հայ կրոնափոխ մուսուլմաններից. մնացած բնակչությունը կազմված է մահմեդական լազերից: Քանի որ համշենցիները միամիտ եւ անգրագետ են, որեւէ միսիոներ կարող է հաջող կերպով գործունեություն ծավալել այնտեղ: Այդ պատճառով մեր տեղական իշխանությունների կողմից բնակչության նախազգուշացման եւ ուղեցույց լինելու անհրաժեշտությունը վերին աստիճանի կարեւոր է: Այդ կարեւորությունը շեշտվել է Ռուսաստանի հետ սահմանային կոմիսարության Խոփայի գումարտակին պատկանող զեկույցի մի պարբերության մեջ: Եվ մենք, սույն հարցն ուշագրավ համարելով, ցանկանում ենք, որ անհրաժեշտն արվի այդ ուղղությամբ:

1913 թ. հունիսի 1
Պաշտպանության նախարարի անունից՝ խորհրդական
Ստորագրություն

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼԿՐՑՅԱՆ. «Միսիոներ ասելով՝ հայերին նկատի ունեն»

Համշենի եւ համշենահայերի վերաբերյալ վերջին տասնամյակներին բավականին հետաքրքրություն է նկատվում. հատկապես շատ է խոսվում իսլամացած համշենահայերի մասին: Գիտական անաչառ ուսումնասիրությունների կողքին ի հայտ են գալիս հատուկ պատվերով գրվող նյութեր, որոնցում փորձ է արվում իսլամացած համշենահայերի պատմությունն ամբողջությամբ նենգափոխել կամ աղավաղել: Դրանցում, որպես օրենք, համշենահայերն անպայման ներկայացվում են որպես թուրքական այս կամ այն ցեղից սերվածներ: Այս համատեքստում ավելի անհեթեթ եւ անլուրջ են այն բացատրություն-

ները, թե նրանք ինչու են խոսում հայոց լեզվի Համշենի բարբառով:

Թուրքիայի բազմաթիվ ազգային փոքրամասնությունների նկատմամբ գործադրվող պետական այս քաղաքականության խարխլվելու հետեւանքով այսօր երկրի բազմաթիվ քաղաքացիներ հնարավորություն են ստացել, թեեւ առայժմ զգուշավոր կամ վարանոտ, խոսել իրենց ազգային ինքնության մասին:

Այս համատեքստում համշենցիների վիճակը փոքր-ինչ շահեկանորեն տարբերվում է: Ճիշտ է՝ նրանք երբեք իրենց թուրք չեն համարել, սակայն հիմնական զանգվածը, վախի կամ այլ գործոնների ազդեցության տակ, նաեւ իր հայկական ինքնության մասին բարձրաձայն չի խոսել:

Այսօր նորանոր հետազոտություններ են ի հայտ գալիս համշենահայերի պատմության, մշակույթի, լեզվի եւ ինքնության վերաբերյալ, որոնք, անշուշտ, ավելի են հիմնավորվում պատմական-արխիվային փաստաթղթերի առկայությամբ:

Այս առումով ներկայացվող փաստաթուղթը ձեռք է բերում գիտական-ապացուցողական կարեւոր նշանակություն հատկապես այն պատճառով, որ

1. Հերքում է Թուրքիայի այսօրվա իշխանությունների եւ նրանց կողմից ուղղորդվող այն «գիտնականների» պնդումները, թե հեմշիլները հայկական ծագում չունեն:
2. Հատկապես ուշադրություն է գրավում այն միտքը, թե, «Քանի որ համշենցիները միամիտ եւ անգրագետ են, որեւէ միսիոներ կարող է հաջող կերպով գործունեություն ծավալել այնտեղ»: Ակնհայտ է, որ սահմանապահ ծառայություններն անհանգստացած են համշենցիների եւ Հայաստանի այլ շրջանների հայերի միջեւ շփումներից, որոնք, ինչպես պետք է ենթադրել, եղել են բավականին ակտիվ, այլապես իշխանությունների համար անհանգս-

տանալու առիթ չէին դառնա: Ասվածի ապացույց է նաեւ այն, որ «Ծագումով հայ, սակայն կրոնափոխ եղած եւ Համշեն անվամբ հայտնի Խոփայի սահմանային գումարտակի կողմերում», ինչպես նշված է փաստաթղթում, բնակվում են նաեւ գրագիտությամբ համշենցիներից չտարբերվող մահմեդական լազեր, որոնց առիթով, սակայն, չի նշվում միսիոներների ազդեցության տակ ընկնելու վտանգի մասին: Դժվար չէ ենթադրելը, որ «միսիոներ» անվան տակ փաստաթղթի հեղինակը նկատի ունի հայերի:

3. Փաստաթղթից բխող մյուս կարեւոր եզրակացությունն էլ այն, է որ 200 տարի անց էլ իշխանությունները վախեցել են, թե բռնի իսլամացած համշենահայերը կարող են վերադառնալ իրենց հայկական ինքնությանն ու նախնիների կրոնին:

4. Եւ, վերջապես, փաստաթուղթը աներկբա պատասխան է տալիս նաեւ մի խիստ կարեւոր հարցի. ո՞վ, ե՞րբ եւ ինչու՞ սկսեց կեղծել Համշենի եւ համշենահայերի պատմությունը: Այդ մասին հստակ նշված է. «Տեղական իշխանությունները պետք է լուսաբանեն համշենցիներին եւ նրանց ճիշտ ուղին ցույց տան: Այդ անհրաժեշտության մասին մեզ է հայտնել մեր Պաշտպանության նախարարությունը:

ԷՐՈՒ ՔԵԹԵՆՃԻ «Մահմեդական հայ» իրողությունը

Իթթիհադականների՝ գրեթե Ալլահի դեմ պատերազմ հայտարարելով՝ ժողովուրդներին եւ նրանց լեզուներն անտեսող բռնապետական գործադրումների հետեւանքով իրենց ինքնությունները թաքցնել հարկադրված ժողովուրդներից մեկը հանդիսացող համշենական ժողովրդի ծագման վերաբերյալ ի

հայտ եկած սույն փաստաթղթերը խիստ մեծ կարեւորություն ունեն: Այս վավերագրերը մեզ մեկ անգամ եւս ցույց են տալիս, որ ոչ մի բան չի կարող մինչեւ վերջ գաղտնի մնալ: Ինքս, որպես այդ շրջանից գաղթած մի ընտանիքի անդամ, արդեն իսկ ներքուստ գիտեի այդ փաստի մասին: Բազմաթիվ համշենցիներ եւս առնվազն կասկածներ ունեն այդ հարցի վերաբերյալ: Թե գենետիկական ուսումնասիրությունները եւ թե տվյալ շրջանի ժողովորդի օգտագործած լեզուն եւս վերջին տարիներին վերստին օրակարգ են բերել այդ իրողությունը: Սակայն այսօր մեր կողմից հրապարակված այս փաստաթղթերը վերջ են տալիս այդ բանավեճին: Այսօրվա իմաստով օսմանյան Գլխավոր շտաբի եւ Ներքին գործերի նախարարության՝ իրար հետ ունեցած գաղտնի նամակագրություններում բացեիբաց ցույց է տրված, որ Համշենի բնակչությունը «մուսուլման հայ է»: Սույն հարցն այլեւս դադարեց քննարկման թեմա լինելուց եւ այնպիսի պարզորոշություն ձեռք բերեց, որը ոչ մի կասկածի տեղիք չի տալիս:

Սույն փաստը մի կողմից մեզ ցույց տվեց, որ այսուհետեւ հայերը եւս պարտավոր չեն իրենց միայն քրիստոնյա ինքնությամբ բնորոշել, իսկ մյուս կողմից Անատոլիայի բնակչությանը ներկայացրեց այն իրողությունը, թե ինչպես որ կարող են լինել քուրդ, վրացի, չերքեզ կամ ալբանացի մուսուլմաններ, այնպես էլ՝ հայ մահմեդական եղբայրներ:

ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ. Հանրահայտ «գաղտնիքները»

Հայերի շրջանում առկա են բազմաթիվ հանրահայտ «գաղտնիքներ»: Երջանկահիշատակ Հրանտը (նկատի ունի Դինքին-Հ.Ա.) շատ էր սիրում մեզ հետ կիսվել այդ «գաղտնիքներով»: Երբ ընդգծելով, թե այդ գաղտնիքների մասին տեղյակ

է յուրաքանչյուր հայ, մեզ հետ կիսվում էր այդ գաղտնիքներով, ծիծաղում էր՝ մեր մեջ առաջացած զարմանքը նկատելով: Բոլորս գիտեինք, որ համշենցիները հայ են, սակայն երբ նա հիշատակում էր նրանց հայտնիներին, բոլորս ապշում էինք: Հետագայում ես նույնպես սկսեցի առաջին վկան դառնալ այդ «գաղտնիքներից» մի քանիսին:

Հիմա էրոլ Քեթենջիի՝ օսմանյան արխիվում գտած այդ փաստաթղթերը թեեւ չափից դուրս հայտնի փաստերի արձանագրում են, սակայն դա չէ էականը: Ինչպես հայտնի է, խիստ հաճախ ասում են. «Իսկ որտե՞ղ է փաստաթուղթը, փաստաթուղթը»... Ահա՛ եւ ձեզ փաստաթուղթը:

Կարեւոր չէ, թե իրենց ինչ են զգում համշենցիները՝ մահմեդական, հայ, թուրք: Նրանք կրկնապատկում են այս երկրի գեղեցկությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.....7

Համշենի իշխանության ձեւավորումն ու վերելքը.....7

Հայերը Պոնտոսում մինչեւ 8-րդ դարը.....7

8-րդ դարի մեծ արտագաղթը Հայաստանից դեպի Պոնտոս. Համշենի իշխանության ստեղծումը Բյուզանդական կայսրության կազմում.....16

Համշենը Բագրատունիների թագավորության կազմում 9-10-րդ դարերում.....23

Համշենի իշխանությունը Տրապիզոնի կայսրության կազմում 13-15-րդ դարերում.....24

Բաբերդի էմիրի գերիշխանության ներքո.....26

Համշենի իշխանության անկումը.....30

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.....32

Օսմանյան կայսրության իսլամացման քաղաքականությունն ու Համշենի պայքարը ինքնության պահպանման համար 15-19-րդ դարերում.....32

Համշենի հայության իսլամացումը.....32

Առաջին փուլ (16-րդ դարի վերջեր - 1722թ.).....35

Երկրորդ փուլ. 1722թ. - 1838թ.....36

Երրորդ փուլ. 1838 թվից մինչեւ 1915 թ. Հայոց ցեղասպանությունը.....42

Չորրորդ փուլ. 1915-1930-ական թվականներ.....48

Պոնտոսի վերջնական պարպումը քրիստոնյա բնակչությունից 62

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ 73

Հայոց ցեղասպանությունը եւ համշենահայերը 73
Համշենահայության զինված պայքարը 1915 -1923 թթ. 85
Կ. Պոլսի ռազմական ատյանի մեղադրական եզրակացությունն ու դատարանի դատավճիռը Տրապիզոնի հայերի տեղահանության եւ կոտորածների վերաբերյալ 90
Տրապիզոնի տեղահանության եւ կոտորածների ամբաստանագրի ընթերցումը 91
Ռազմական արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը 94

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ 104

Համշենահայերի համայնքների ձեւավորումը Ռուսական կայսրությունում եւ նրանց հետագա վիճակը ԽՍՀՄ-ում 104

Համշենահայերի գաղթը դեպի Ռուսական կայսրություն 19-րդ դարում 104
Համշենահայերի համայնքները Ռուսաստանում 107
Համշենահայերի համայնքները Աբխազիայում 114
Կրթական կյանքը 117
Մշակութային կյանքը 118
Մամուլ եւ լրատվամիջոցներ 119
Եկեղեցական կյանք 119

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ 121

Տեղեկություններ կրոնափոխ համշենցիների վերաբերյալ ... 121
Բնակության վայրերն ու խմբերը 121
Համշենահայերի թվի մասին 125
Հեմշիլներն այսօր 127
Թուրքական պաշտոնական պատմագրությունը կրոնափոխ համշենցիների մասին 130
Կրոնափոխ համշենցիների ինքնության հարցը 137

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 141

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎԱՐՑՅԱՆ

ՀԱՄՇԵՆԸ ԵՒ ՀԱՄՇԵՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Արդի հիմնախնդիրները

ISBN 978-9939-75-112-2

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

9(47.925)
Հ-33
հշ.



ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House